



ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ 2021Թ. ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնական արդյունքները և որոշ համեմատականներ 2020թ. հարցման
արդյունքների հետ

Ծրագրի մասին

«Աջակցություն հարկային վարչարարության և քաղաքականության առաջնորդմանը» (P170814) ծրագիրն իրականացվում է Համաշխարհային Բանկի կողմից, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ¹

Զեկույցի մասին

Սույն զեկույցը ներկայացնում է հարկային վարչարարության նկատմամբ հարկ վճարողների ընկալման և վերաբերմունքի մասին՝ Հայաստանում գործող կազմակերպություններում ու անհատ ձեռնարկատերերի շրջանում 2021թ. փետրվար-մարտին անցկացված ընտրանքային հետազոտության հիմնական արդյունքները: Հարցումը ցույց է տվել, որ չնայած 2020թ. դժվարություններին, հարկ վճարողների վերաբերմունքը հարկային վարչարարության և օրինապահության, ինչպես նաև ՊԵԿ-ի նկատմամբ շարունակել է մնալ դրական:



ՀՌԿԿ-Հայաստան. 2021

www.crrc.am

¹ Ներկայացված արդյունքները, մեկնաբանությունները և եզրակացությունները պարտադիր չէ, որ արտահայտեն Միացյալ Թագավորության կառավարության, Համաշխարհային բանկի, Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների կամ նրանց ներկայացրած կառավարությունների տեսակետները:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Այս հետազոտությունն իրականացվել «Աջակցություն հարկային վարչարարությանը և քաղաքականության առաջնորդմանը» (ԱՀՎՔԱ) ծրագրի շրջանակներում՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) համար:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել սույն զեկույցի պատրաստման գործում: Մասնավորապես, շնորհակալություն ենք հայտնում.

- ԱՀՎՔԱ ծրագրի համակարգող Անահիտ Բասենցյանին՝ հետազոտության և դրա արդյունքների արդյունավետ հաղորդակցությունն ապահովելու համար,
- ՀԲ փորձագետ Արթուր Թամազյանին՝ հետազոտության ընթացքում ցուցաբերած շարունակական աջակցության և հատկապես տվյալների վերլուծությանն ավանդ բերելու համար,
- ՀԲ փորձագետ Ջոնաթան Կարվերին և հարկային խորհրդատու Լիլիթ Հովականյանին՝ հարցաշարի մշակմանը և կառուցողական հանդիպումներին մասնակցելու համար,
- ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ռաֆիկ Մաշադյանին, նախագահի տեղակալներ Արթուր Մանուկյանին, Արշակ Գասպարյանին, Աշոտ Մուրադյանին և Համալիր հարկային ստուգումների վարչության պետ Թելման Ասատրյանին՝ պատրաստված զեկույցի նախնական տարբերակը մեկնաբանելու համար,
- Հարցմանը մասնակցած բոլոր հարկ վճարողներին և հարցումն իրականացրած հարցազրուցավարներին՝ համագործակցության համար:

Զեկույցի պատրաստման պատասխանատուներն են.

- Արման Գաբրիելյանը, որը գրել է վերլուծական զեկույցը,
- Ահարոն Զիլինգարյանը, որը մասնակցել է հարցաթերթի լրամշակմանը և վերանայել զեկույցը,
- Հեղինե Մանասյանը, որը ղեկավարել է հետազոտական թիմը, կոորդինացրել հետազոտական աշխատանքները և խմբագրել հայերեն զեկույցը,
- Էլլա Կարագուլյանը, որը համակարգել է ընտրանքի նախագծման, տվյալների հավաքագրման և մշակման աշխատանքները:

Զեկույցի պատրաստմանն իրենց ավանդն են բերել նաև ՀՌԿԿ-Հայաստանի թիմի անդամները, մասնավորապես Սոնա Բալասանյանը, որը կանոնակարգել է ծրագրի վարչական հարցերը և Ռայան Մեթյուն, որը սրբագրել է անգլերեն զեկույցը:

Զեկույցն անգլերեն է թարգմանել Արման Գաբրիելյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ.....	2
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....	4
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ.....	6
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....	7
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	10
ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	11
ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ.....	15
ԱՍՓՈՓԱԳԻՐ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	23
ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ	29
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ	37
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ	49
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ.....	70
ԲԻԶՆԵՍՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ԳՈՐԾԱՐԱՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ	80
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	89
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆԸ	93
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ	119
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԽԱՉԱԶԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ	149

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ



Կ. Միզարա Օ Դե Միլվա

*Ավագ տնտեսագետ, Համաշխարհային կառավարման պրակտիկա,
Համաշխարհային բանկ*

Հարկային վարչարարության և հարկերի ընկալումների հետազոտությունը Հայաստանում, որ սկիզբ է առել 2013 թվականից, ներկայումս հարկային վարչարարության համեմատական տվյալների ամենահարուստ ռեսուրսներից մեկն է: Համընդգրկուն հետազոտության այս փուլը ներառել է փոքր և միջին հարկ վճարողներին: Այն նախաձեռնվել է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» կողմից ֆինանսավորվող «Աջակցություն հարկային վարչարարությանը և քաղաքականության առաջնորդմանը» (ԱՀՎՔԱ) ծրագրի շրջանակում: ԱՀՎՔԱ ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետության հարկային մարմնին (Պետական եկամուտների կոմիտեին)՝ բացահայտելու հարկային վարչարարության բարեփոխումների ոլորտներն ու հնարավոր բացերը և արդյունավետորեն հասցեագրելու դրանք՝ Հայաստանում հարկային վարչարարության արդյունավետության հետագա բարելավման համար:

Ներկա համավարակի ընթացքում ՊԵԿ-ը բախվել է որոշ մարտահրավերների, որոնցից մեկը կապված է հարկ վճարողների կողմից պարբերական արձագանք ստանալու և նրանց հետ մշտական երկխոսություն ապահովելու հետ: Ակնկալում ենք, որ հետամուտ հետազոտության այս փուլը մեծապես կընդլայնի ՊԵԿ-ի կարողությունը՝ պարզելու հարկային եկամուտների հավաքագրումն ավելացնելու հետագա ուղիները՝ միաժամանակ նվազեցնելով հարկ վճարողների հարկային բեռը: ՊԵԿ-ի ղեկավարությունը հասկանում է, որ այսպիսի պարբերական հետազոտություններ հետագայում ևս պետք է իրականացվեն, և ես ուրախ եմ, որ ՊԵԿ-ը մտադիր է սույն մոտեցումն ապագայում դարձնել ֆորմալ պահանջ:

Ի վերջո, ցանկանում եմ շնորհակալությունս հայտնել բոլոր նրանց, ովքեր ներգրավված են եղել այս հետազոտության նախապատրաստման գործընթացում: Զեկույցի ընդգրկունությունը և բարձր որակը ՊԵԿ-ի հետ մեր սերտ համագործակցության արդյունք է: Իմ շնորհակալությունն եմ հայտնում նաև հետազոտություններն իրականացրած կազմակերպությանը՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամին, գործադրած ջանքերի համար:

Մենք ակնկալում ենք հետագայում շարունակել մեր համագործակցությունը ՊԵԿ-ի հետ:



Էդվարդ Հովհաննիսյան

**Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահ**

Պետական եկամուտների կոմիտեն որդեգրել է հարկ վճարողների և հարկային մարմնի միջև վստահության բարձրացմանն ու հարկային վարչարարության արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականություն, ինչի վերջնական նպատակը հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, փոխհամագործակցության պարզեցումը և ամրապնդումն է՝ ի նպաստ երկրի բարօրության և հզորացման:

Մեր երկիրն այսօր կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Համաշխարհային տնտեսության վրա համավարակի բացասական ազդեցությունը չէր կարող անմասն թողնել մեր տնտեսությանը, որն էլ ավելի տուժեց պատերազմի հետևանքով: Այս համատեքստում, այսօր, առավել քան երբևէ կարևորվում է հարկային համակարգի հարկաբյուջետային գործառնայթի առանցքայնությունը երկրի տնտեսության վերականգնման և զարգացման համար: Մեր տնտեսության առջև ծառայած մարտահրավերները ստիպում են նորովի գնահատել և վերարժևորել մեր դերը, մեր վարքագիծը և մեր սուբյեկտիվ ընկալումները պետություն ինստիտուտի կայացման հարցում: Այս առումով, թերևս, անչափ կարևորվում է բիզնես համայնքի և պետական կառավարման օղակների միջև կապի անընդհատությունը, ստացված ազդակների վերլուծությունն ու գնահատումը, առկա խնդիրների վերհանումը և վարչարարական գործիքակազմի լրամշակումն ու բարելավումը՝ հաշվի առնելով ոլորտում առկա համաշխարհային միտումներն ու մարտահրավերները:

Սույն հետազոտությունը, որն այս անգամ ևս իրականացվել է փոքր և միջին ձեռնարկությունների շրջանում, շարունակական բնույթ ունի և ծառայում է որպես անգնահատելի տեղեկատվական ռեսուրս մեր կառույցի համար՝ միտված լինելով վերը թվարկված խնդիրների բացահայտմանը, հարկային վարչարարության բարելավման ռազմավարական նպատակադրումների ապահովմանը և հարկ վճարողների կողմից համակարգային փոփոխությունների ազդեցության գնահատմանը: Հետազոտության արդյունքները փաստում են, որ հարկային վարչարարության նկատմամբ հարկ վճարողների վերաբերմունքում վերջին տարիներին առկա է դրական դինամիկա, և որ հարկ վճարողների գերակշիռ մասը կարծում է, որ հարկային վարչարարության նոր գործիքակազմի ներդրումը նպաստել է հարկային պարտավորությունների ամբողջական կատարմանը: Հետազոտության արդյունքները նաև թույլ են տալիս բացահայտել այն հիմնական ուղղությունները, որտեղ բարելավման և արդիականացման պահանջ կա:

Կարծում եմ, որ հետազոտական այս նախաձեռնությունը շարունակական բնույթ կունենա նաև հետագայում և կնպաստի ՊԵԿ–հարկ վճարող երկխոսության բարելավմանը և հարկային վարչարարության հետագա բարեփոխմանը:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների կազմակերպաիրավական տեսակի.....	16
Աղյուսակ 2. Բիզնեսի չափի դասակարգման չափանիշը.....	16
Աղյուսակ 3. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների իրացման շրջանառության	17
Աղյուսակ 4. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների աշխատողների թվի	17
Աղյուսակ 5. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների իրացման շրջանառության և կազմակերպաիրավական տեսակի	17
Աղյուսակ 6. Ընտրանքի թիրախային կազմն ըստ բիզնեսի չափի, տարածքային ընդգրկման և ձեռնարկատիրոջ գենդերային պատկանելության	18
Աղյուսակ 7. Հարկ վճարողների կազմն ըստ կազմակերպաիրավական տեսակի.....	19
Աղյուսակ 8. Հարկ վճարողների բաշխումն ըստ մարզերի	19
Աղյուսակ 9. Հարկ վճարողների կազմն ըստ 2020թ-ի իրացման շրջանառության	19
Աղյուսակ 10. Հարկ վճարողների կազմն ըստ կազմակերպաիրավական տեսակի և 2020թ-ի իրացման շրջանառության	20

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Հարկ վճարողների կազմն ըստ 2020թ-ի իրացման շրջանառության 20

Գծապատկեր 2. Հարկ վճարողների կազմն ըստ կազմակերպաիրավական տեսակի և 2020թ-ի իրացման շրջանառության..... 20

Գծապատկեր 3. Բիզնեսի գործունեության տարիների թիվը 21

Գծապատկեր 4. Հարցվողի պաշտոնը..... 21

Գծապատկեր 5. Հարցվողի կրթությունը 22

Գծապատկեր 6. Բիզնեսի կազմակերպաիրավական տեսակը 29

Գծապատկեր 7. Բիզնեսի ամենամեծ բաժնետերը/մասնակիցը 30

Գծապատկեր 8. Գործադիր տնօրենի հիմնական բաժնետեր/ մասնակից լինելը 30

Գծապատկեր 9. Բիզնեսի գործունեության ոլորտը..... 31

Գծապատկեր 10. Ապրանքների ներմուծմամբ կամ արտահանմամբ զբաղվելը 32

Գծապատկեր 11. Բիզնեսի վճարած հարկատեսակները 32

Գծապատկեր 12. «Օրինապահ հարկ վճարող»-ի հավաստագիր ունենալը 33

Գծապատկեր 13. Կին և տղամարդ աշխատողների թիվը..... 33

Գծապատկեր 14. Կանանց բաժինը աշխատողների թվում..... 34

Գծապատկեր 15. Կանանց բաժինը ղեկավարների կազմում 34

Գծապատկեր 16. Գենդերային հավասարության քաղաքականության առկայությունը 35

Գծապատկեր 17. Անդամակցությունը միություններին կամ ասոցիացիաներին..... 35

Գծապատկեր 18. «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» մասին տեղեկացվածությունը 37

Գծապատկեր 19. «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» աշխատանքի օգտակարությունը 38

Գծապատկեր 20. Շրջանառության թաքցվող չափը 39

Գծապատկեր 21. Հարկերն ազնվորեն վճարողների բաժինը 40

Գծապատկեր 22. Հարկերն ազնվորեն վճարելու դրդապատճառները 41

Գծապատկեր 23. Հետագա բարելավման կարիք ունեցող վարչարարության ուղղությունները .. 42

Գծապատկեր 24. Հարկային օրենսգրքի 2019-2020թթ-ի փոփոխությունների օգտակարությունը բիզնեսի համար..... 43

Գծապատկեր 25. Հարկման հատուկ համակարգերի նպաստավորությունը հարկային պարտավորությունները կատարելու համար 43

Գծապատկեր 26. Ոլորտները, որոնք առաջնահերթ է անհրաժեշտ ֆինանսավորել հարկերի հաշվին 44

Գծապատկեր 27. Հարկային օրինապահության ամենաբացասական հետևանքը..... 45

Գծապատկեր 28. Եկամուտները չհայտարարագրելու պատժամիջոցները փոխելու նպատակահարմարությունը 46

Գծապատկեր 29. Վերաբերմունքը հարկերը կրճատելու նպատակով օրենսդրության բացերն օգտագործելու նկատմամբ..... 47

Գծապատկեր 30. Հարկ վճարողների նկատմամբ ՊԵԿ հարկային/մաքսային մարմինների վերաբերմունքի դրական փոփոխության ընկալումը..... 48

Գծապատկեր 31. Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող հարկ վճարողների ընկալումը ՊԵԿ մաքսային մարմնի վերաբերմունքի փոփոխության նկատմամբ..... 48

Գծապատկեր 32. ՊԵԿ-ի մատուցած էլեկտրոնային ծառայությունների օգտակարությունը 49

Գծապատկեր 33. ՊԵԿ-ի մատուցած էլեկտրոնային ծառայությունների որակը	50
Գծապատկեր 34. ՊԵԿ-ի ծառայությունները, որոնք հետագա բարելավման կարիք ունեն.....	51
Գծապատկեր 35. Էլեկտրոնային ծառայությունների նպաստավորությունը հարկային պարտավորությունները կատարելու համար	52
Գծապատկեր 36. ՊԵԿ-ի մատուցած նոր ծառայությունների մասին տեղեկացվածությունը	53
Գծապատկեր 37. ՊԵԿ-ի մատուցած նոր ծառայությունների նպաստավորությունը հարկային պարտավորությունները կատարելու համար	54
Գծապատկեր 38. Նախորդ երեք տարիներին ձեռնարկված հարկային վարչարարության բարելավման միջոցառումների գնահատումը	54
Գծապատկեր 39. Հարկ վճարողների նկատմամբ ՊԵԿ-ի վերաբերմունքի ընկալումը	55
Գծապատկեր 40. Հարկային համակարգի տարրերի գնահատումը.....	56
Գծապատկեր 41. Բիզնեսին ամենից շատ խանգարող հարկային օրենսդրության խնդիրները...	57
Գծապատկեր 42. ՊԵԿ-ին առնչվող ընթացակարգերի դյուրիմությունը	58
Գծապատկեր 43. ՊԵԿ ուսումնական կենտրոնի և հարկային դասընթացներ իրականացնող այլ կազմակերպությունների ծառայություններից օգտվելը	59
Գծապատկեր 44. ՊԵԿ ուսումնական կենտրոնի աշխատանքի որակի գնահատումը.....	59
Գծապատկեր 45. ՊԵԿ հեռախոսագանգերի կենտրոնի աշխատանքի որակի գնահատումը.....	60
Գծապատկեր 46. ՊԵԿ սպասարկման կենտրոնների աշխատանքի որակի գնահատումը.....	61
Գծապատկեր 47. Հարկային վարչարարություն իրականացնողների պրոֆեսիոնալ ու ազնիվ լինելու ընկալումը.....	62
Գծապատկեր 48. Նախորդ 12 ամսում ՊԵԿ-ին դիմելը.....	62
Գծապատկեր 49. Նախորդ 12 ամսում ՊԵԿ-ին դիմելու եղանակները և հաճախականությունը .	63
Գծապատկեր 50. ՊԵԿ-ին դիմելու պատճառը	63
Գծապատկեր 51. Հարկային օրենսդրության փոփոխությունների մասին տեղեկանալու աղբյուրներն ըստ առաջնահերթության	64
Գծապատկեր 52. ՊԵԿ-ից տեղեկատվություն ստանալու նախընտրելի եղանակներն ըստ առաջնահերթության	65
Գծապատկեր 53. ՊԵԿ-ից ծանուցում ստանալու նախընտրելի մեթոդը.....	66
Գծապատկեր 54. Նախորդ 12 ամսում ստացած ծանուցումների թիվը	66
Գծապատկեր 55. Ստացած ծանուցումների բովանդակության պարզ լինելը.....	67
Գծապատկեր 56. Հարկ վճարողների նկատմամբ ՊԵԿ-ի խտրական լինելու ընկալումը.....	67
Գծապատկեր 57. ՊԵԿ-ի մատուցած ծառայությունների նպաստավորությունը նրա նկատմամբ հասարակության վստահությունը բարձրացնելու համար	68
Գծապատկեր 58. Հարկային վարչարարության 2020-2024թթ-ի ռազմավարության մասին տեղեկացվածությունը.....	69
Գծապատկեր 59. Հարկային հայտարարագրերի ներկայացման բջջային հավելվածի գործարկման նպատակահարմարությունը	69
Գծապատկեր 60. 2019-2020թթ-ին հարկային ստուգման ենթարկված բիզնեսների կշիռը	70
Գծապատկեր 61. 2019-2020թթ-ին իրականացված հարկային ստուգման տեսակները.....	70
Գծապատկեր 62. Բիզնեսների կշիռն ըստ հարկային ստուգման տեսակների.....	71
Գծապատկեր 63. Հարկային ստուգմանն առնչվող իրավունքների մասին տեղեկացվածությունը.....	72
Գծապատկեր 64. Հարկային ստուգման հետ կապված իրավունքների իրացումը.....	72
Գծապատկեր 65. Հարկային ստուգման բացասական կողմերը	73

Գծապատկեր 66. Հարկային ստուգման դրական կողմերը.....	73
Գծապատկեր 67. Հարկային ստուգման արդյունքների վերաբերյալ անհամաձայնություն արտահայտելը	74
Գծապատկեր 68. Հարկային ստուգման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում ձեռնարկված քայլերը	75
Գծապատկեր 69. Հարկային ստուգման արդյունքներից բավարարվածությունը.....	75
Գծապատկեր 70. Համակարգչային ծրագրի միջոցով ռիսկերը գնահատելու հիման վրա հարկային ստուգում իրականացնելու մասին տեղեկացվածությունը.....	76
Գծապատկեր 71. Հարկային ռիսկերի գնահատումն անկանխակալ իրականացնելու ընկալումը.....	76
Գծապատկեր 72. ՊԵԿ մոնիթորինգի կենտրոնից հարկային ռիսկերի վերաբերյալ ծանուցումներ ստանալը.....	77
Գծապատկեր 73. Ծանուցված հարկային ռիսկերի հիմնավորվածության ընդունումը	77
Գծապատկեր 74. Հարկային ռիսկերի վերաբերյալ ՊԵԿ-ից ծանուցումներ ստանալու ցանկալիությունը	78
Գծապատկեր 75. Կամերալ ուսումնասիրությունների վերաբերյալ հարկ վճարողների տեսակետը	78
Գծապատկեր 76. Հարկային ներգործության գործառույթների վերաբերյալ հարկ վճարողների տեսակետը	79
Գծապատկեր 77. Կազմակերպությունում հաշվապահության վարումը	80
Գծապատկեր 78. Կազմակերպությունում հաշվապահների թիվը.....	81
Գծապատկեր 79. Կազմակերպությունում հարկային գործերի վարումը.....	81
Գծապատկեր 80. Կազմակերպությունում հարկային ռազմավարության առկայությունը.....	81
Գծապատկեր 81. Հարկային ռազմավարության մշակումը	82
Գծապատկեր 82. Հարկային կառավարչի աշխատանքային փորձառությունը.....	82
Գծապատկեր 83. Հարկային կառավարչի սեռը.....	82
Գծապատկեր 84. Խորհրդատվական ծառայություններից օգտվելը	83
Գծապատկեր 85. Հաշվապահական և հարկային հաշվառման վրա ծախսվող գումարը	84
Գծապատկեր 86. Հաշվապահական ու հարկային վերապատրաստման վրա ծախսվող գումարը.....	84
Գծապատկեր 87. Ընթացիկ տարում բիզնեսի գործունեության գնահատումը.....	85
Գծապատկեր 88. Առաջիկա երկու տարիներին բիզնեսի հեռանկարի գնահատումը	86
Գծապատկեր 89. Համավարակի ազդեցությունը բիզնեսի գործունեության վրա.....	87
Գծապատկեր 90. Համավարակի ազդեցությունը բիզնեսի եկամտաբերության վրա	87
Գծապատկեր 91. ՀՀ կառավարության հակակոմպիդային ծրագրերին դիմելը և աջակցություն ստանալը	87
Գծապատկեր 92. Տրամադրված աջակցության նպաստավորությունը հարկային պարտավորությունները կատարելու համար	88
Գծապատկեր 93. Համավարակի ազդեցությունից բիզնեսի վերականգման համար պահանջվող ժամանակը	88

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՀՎՔԱ	Աջակցություն հարկային վարչարարությանը և քաղաքականության առաջնորդմանը
ԱՏԳ	Արտաքին տնտեսական գործունեություն
ԴՊ	Դժվարանում եմ պատասխանել
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոցներ
ԶՎ	Զրուցավար
ԼԿՀ	Լավ կառավարման հիմնադրամ
Խ	Խաչաձև
ԿԶ	Կիրառելի չէ
Հ	Հաճախություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԴՄ	Հսկիչ-դրամարկդային մեքենա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՁ	Համատեղ ձեռնարկություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՊ	Հրաժարվում եմ պատասխանել
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՀՎՀՀ	Հարկ վճարողի հաշվառման համար
ԶԳ	Զգիտեմ
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություն

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հարկ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի
ընտրանքային հետազոտություն 2021թ.

2021թ-ի փետրվար-մարտ ամիսներին Հայաստանի բոլոր մարզերն ու Երևան քաղաքն ընդգրկող ընտրանքային հետազոտության շրջանակներում իրականացվել են հարցումներ (փոքր և միջին բիզնեսի 649 հարկ վճարողների տրվել են թվով ավելի քան 80 հարցեր), որոնք նպատակաուղղված են հարկային վարչարարությանն առնչվող խնդիրների նկատմամբ հարկ վճարողների վերաբերմունքի, ընկալումների ու սպասումների բացահայտմանը: Ներկայացված զեկույցում ամփոփված և վերլուծված են այդ հետազոտության արդյունքները:

Հետազոտությունն իրականացվել է «Աջակցություն հարկային վարչարարությանը և քաղաքականության առաջնորդմանը» (STAPL) ծրագրի² շրջանակներում: Ծրագրի նպատակներից մեկը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումն է՝ հաշվի առնելով հարկ վճարողների ընկալումները, վերաբերմունքը և հարկային օրինապահության նկատմամբ դիրքորոշումը: Հենց այդ նկատառումով պարբերաբար իրականացվում են ընտրանքային հետազոտություններ՝ հարկ վճարողների վերաբերմունքը բացահայտելու և նաև վերաբերմունքի փոփոխությունները պարզելու նպատակով:

Հայաստանում արդյունավետ և ժամանակակից հարկային վարչարարության կայացումը կայուն տնտեսական աճի և մրցունակության բարելավման առանցքային նախադրյալներից է:

Հայաստանի Պետական եկամուտների կոմիտեն անցել է շարունակական բարելավման երկար ճանապարհ: Ինչպես Համաշխարհային բանկի վերջին զեկույցներից մեկն է փաստում՝ «Հայաստանում «Հարկային վարչարարության բարեփոխման ծրագրի» արդյունավետ իրագործման շնորհիվ հարկային ծառայությունների և փաստաթղթերի 96 տոկոսը մշակվում և ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ զգալիորեն նվազեցնելով հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակը»³:

Նույնիսկ եթե անտեսենք հարկային վարչարարության մյուս բնագավառներում տեղի ունեցած նշանակալի բարելավումները, էլեկտրոնային ծառայությունների

² ՀՀ կառավարության հետ համագործակցաբար իրականացվող «Աջակցություն հարկային վարչարարությանը և քաղաքականության առաջնորդմանը» ծրագրին աջակցում է Համաշխարհային բանկը՝ Մեծ Բրիտանիայի Լավ կառավարման հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ:

³ Arizti, P., Boyce, D. J., Manuilova, N., Sabatino, C., Senderowitsch, R., & Vila, E. (2020). *Building Effective, Accountable, and Inclusive Institutions in Europe and Central Asia* (p. 14). World Bank. <https://openknowledge.worldbank.org/handle/10986/34031>

համապարփակ կիրառությունն ինքնին խորքային հետևանքներ ենթադրող զարգացում է: Հատկանշական է, որ բիզնեսի վարման դյուրությամբ աշխարհի 20 առաջնակարգ տնտեսությունների ընդհանուր բնութագրերից մեկն այն է, որ բոլորում հարկային վարչարարությունը գերակշռաբար էլեկտրոնային միջոցներով է կատարվում⁴:

Մեկ տասնամյակ առաջ բիզնեսի վարման դյուրության տեսանկյունից Հայաստանը և՛ հարկային, և՛ մաքսային վարչարարության առումով աշխարհի միջինից ցածր ցուցանիշ ունեցող երկրներից էր: Մասնավորապես, 2010թ-ին Հայաստանը, չնայած նրան, որ բիզնեսի վարման դյուրության ցուցանիշով աշխարհի երկրների թվում 43-րդ դիրքում էր գտնվում, բայց հարկերը վճարելու և առևտրի մաքսային կարգավորման ցուցանիշներով համապատասխանաբար 153-րդ և 102-րդ դիրքում էր գտնվում⁵:

Հարկային և մաքսային վարչարարության ներկա ցուցանիշները շեշտակիորեն բարելավվել են, և 2020թ-ին Հայաստանը հարկերը վճարելու ու առևտրի մաքսային կարգավորման ցուցանիշներով գտնվում էր համապատասխանաբար 53-րդ ու 43-րդ տեղում:

Բացի այդ, վերջին տարիներին էապես կրճատվել են հարկային վճարումների քանակը և հարկային պարտավորությունների կատարման համար պահանջվող ժամանակը: Ըստ Համաշխարհային բանկի Doing Business տվյալների շտեմարանի⁶՝ 2010թ-ին հարկային վճարումների քանակը 54 էր, իսկ պահանջվող ժամանակը՝ տարեկան 578 ժամ⁷: 2020թ-ին վճարումների քանակը նվազել էր մինչև 15, իսկ պահանջվող ժամանակը՝ 264 ժամ: Համեմատության համար նշենք, որ Վրաստանում, որը բիզնեսի վարման դյուրությամբ 2020թ-ին աշխարհում 7-րդ դիրքում էր գտնվում, հարկային պարտավորությունների կատարման համար պահանջվող ժամանակը կազմում էր 216 ժամ՝ ընդամենը մեկ հինգերորդով պակաս: Նշենք նաև, որ ՏՀԶԿ անդամ բարձր եկամուտ ունեցող երկրներում 2020թ-ին հարկային վճարումների միջին քանակը կազմում էր 10.3, իսկ հարկային պարտավորությունների կատարման համար պահանջվող միջին ժամանակը՝ տարեկան 158.8 ժամ:

Հարկային վարչարարության բարելավումը սերտորեն ուղեկցվել է հարկեր-ՀՆԱ հարաբերակցության աճով: Եթե 2010թ-ին հարկային եկամուտները ՀՆԱ-ի 17.2% էին կազմում, ապա 2019թ-ին այդ հարաբերակցությունը հասել էր 22.3%-ի⁸:

Համավարակի պատճառով սահմանների փակումը և հարկադիր պարապուրդը, սակայն, ցավալիորեն հարվածեցին Հայաստանի տնտեսության էական ոլորտներին՝

⁴ World Bank. (2020). *Doing Business 2020: Comparing Business Regulation in 190 Economies* (p. 5). <https://openknowledge.worldbank.org/handle/10986/32436>

⁵ World Bank. (2020, April). *Doing Business Data*. <https://www.doingbusiness.org/en/data>

⁶ World Bank. (2020, April). *DataBank: Doing Business*. <https://databank.worldbank.org/source/doing-business>

⁷ Doing Business 2010 զեկույցում (<https://www.doingbusiness.org/en/reports/global-reports/doing-business-2010>) Հայաստանի համար հրապարակվել են վճարումների քանակի և պահանջվող ժամանակի այլ՝ ավելի բարձր արժեքներ: Դրանք հետագայում Համաշխարհային բանկի կողմից ճշգրտվել են, և ներկայում Հայաստանի 2010թ-ի տվյալների համար ՀԲ հրապարակումներում բերվում են վերոնշյալ արժեքները:

⁸ IMF. (2021, April). *Government Finance Statistics*. <https://data.imf.org/regular.aspx?key=60991462>

առևտուր, ծառայություններ, շինարարություն: Այդ համատեքստում հարկային եկամուտները 2020թ-ին նախորդ տարվա համեմատ զգալիորեն նվազեցին⁹:

Համավարակը, իսկ ապա պատերազմը պետական պարտքի կտրուկ աճի անհրաժեշտություն առաջացրին, որն ավելի մեծացրեց կառավարության՝ հարկային եկամուտներ գեներացնելու առաջնահերթությունը՝ դրանով իսկ, սրելով Պետական եկամուտների կոմիտեի առջև ծառայած մարտահրավերները:

Առանց այդ էլ ՊԵԿ-ը վերջին տարիներին բազում մարտահրավերների է բախվել՝ պայմանավորված, ի թիվս այլնի, օրենսդրության շարունակական փոփոխություններով: Այդ փոփոխությունների թվում են, օրինակ.

- Եկամտային հարկի և շահութահարկի դրույքների կրճատումը (եկամտային հարկի դրույքաչափի կրճատումը շարունակվելու է մինչև 2023թ., երբ այն կկազմի 20%, իսկ շահութահարկի դրույքաչափը 2020թ-ին նվազեցվեց 2 տոկոսային կետով՝ կազմելով 18%):
- Միկրոբիզնեսի (տարեկան մինչև 24 մլն իրացման շրջանառություն) ազատումը շահութահարկից և ավելացված արժեքի հարկից (հունվար, 2020թ.):
- Շրջանառության հարկի շեմի բարձրացումը մինչև 115 մլն դր. (հունվար, 2020թ.):
- Տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կիրառումը (հունվար, 2020թ.):
- Անշարժ գույքի հարկման համակարգի վերափոխումը (հունվար, 2021թ.):
- Շահութահարկի կանխավճարների որոշման մեխանիզմի փոփոխությունը և, որպես համավարակի հետևանքների մեղմման միջոցառում, 2020թ-ի երկրորդ եռամսյակի համար շահութահարկի կանխավճար կատարելու պարտավորությունից ազատումը (հուլիս, 2020թ.):
- Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը (հունիս, 2020թ.):
- Եկամտային հարկի միջոցով ուսման վարձավճարի փոխհատուցումը (սեպտեմբեր, 2020թ.):
- Ժամկետանց հարկային պարտավորությունների համար տույժի կրճատումը (ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.04%՝ նախկին 0.075%-ի փոխարեն) (ապրիլ, 2020թ.):
- Արագացված ամորտիզացիայի հնարավորության կիրառումը հիմնական միջոցների ներմուծման, ձեռք բերման, կառուցման, մշակման դեպքում (2020թ-ի երկրորդ կեսի և 2021թ-ի գործարքների համար):
- Սոցիալական վճարի դրույքաչափի փոփոխությունը (3.5% 2021թ-ին, 4.5% 2022թ-ին):
- «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին կատարվող վճարումների դրույքաչափերի փոփոխությունը (հունվար, 2021թ.):

ՊԵԿ-ը կենտրոնական դեր է խաղացել նաև համավարակի տնտեսական հետևանքների մեղմման ՀՀ կառավարության ծրագրերի իրագործման ընթացքում:

⁹ Վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ.-ի հունվար-դեկտեմբերին, 2021թ., էջ 123, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_211.pdf

Մասնավորապես, ՊԵԿ-ն իրականացրել է ՀՀ կառավարության հինգ միջոցառում, որոնց շրջանակում շուրջ 9 մլրդ դրամի աջակցություն են ստացել ավելի քան 25 հազար հարկ վճարողներ¹⁰:

Սույն հետազոտության նպատակն է գնահատել այս բոլոր զարգացումների ազդեցությունը ՊԵԿ ծառայությունների արդյունավետության և որակի նկատմամբ փոքր և միջին բիզնեսի ընկալումների և վերաբերմունքի վրա:

Հետազոտությունը ներառել է հարկային վարչարարության բոլոր փուլերը, այդ թվում.

- հարկ վճարողներին ՊԵԿ-ի կողմից մատուցվող ծառայությունները՝ շեշտադրելով էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունները,
- հարկերի հավաքագրումը, պատասխանատվության միջոցների կիրառումը և հարկային հսկողությունը,
- հարկային վեճերի բողոքարկումը,
- գենդերային հարցադրումները հարկային վարչարարության տեսանկյունից:

Հետազոտության ընթացքում հավաքագրված բազմաբնույթ տվյալները հնարավոր են դարձնում այլ վերլուծությունների իրականացումը հետազոտողների, պետական մարմինների և այլոց կողմից:

Հավաքագրված տվյալները մեկնաբանելիս և հատկապես նախորդ հետազոտության արդյունքների հետ համադրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել համավարակով և հետպատերազմական դժգոհություններով պայմանավորված հասարակական ընկալումները, ինչպես նաև պետական կառավարման համակարգի տարբեր օղակների նկատմամբ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով անվստահության և հիասթափության դրսևորումները, որոնք կարող էին իրենց ազդեցությունն ունենալ հարցումների արդյունքների վրա:

[ՀՌԿԿ-Հայաստանի կայքում](#) ազատ հասանելի է սույն հետազոտության ամբողջական տվյալադարանը:

Նմանատիպ հարցումներ ՀՌԿԿ-Հայաստանն իրականացրել է նաև 2013թ., 2016թ., 2018թ. և 2020թ.: Սույն զեկույցում բերված են որոշ համադրումներ 2020թ. արդյունքների հետ:

¹⁰ ՊԵԿ, ՊԵԿ-ն ամփոփել է հարկային ոլորտի 2020թ.-ի գործունեությունը, 25 հունվար, 2021, <https://www.petekamutner.am/covidNews.aspx?sid=src&nid=7658>

ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ

«Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ 2021թ.» հետազոտության գլխավոր նպատակն է եղել պարզել հարկային վարչարարության նկատմամբ գործարար հարկ վճարողների վերաբերմունքը, ընկալումները և սպասումները: Ձեկույցի այս բաժնում ներկայացվում են հետազոտության հակիրճ բնութագիրը, ընտրանքի մեթոդաբանությունը, շրջանակը և նկարագիրը:

1. Հետազոտության հակիրճ բնութագիրը

- *Տվյալների հավաքագրման ժամանակաշրջան՝ 2021թ-ի փետրվար-մարտ.*
- *Թիրախային բազմություն՝* հարկ վճարող առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր.
- *Տարածքային ընդգրկում՝* ՀՀ բոլոր մարզեր և Երևան քաղաք.
- *Գլխավոր համակցություն՝* ՀՀ ՊԵԿ-ում գրանցված հարկ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկ¹¹.
- *Ընտրանքի չափ՝*
 - թիրախային չափ՝ 600 հարկ վճարող (առևտրային կազմակերպություն և անհատ ձեռնարկատեր), որոնց թվում առնվազն 200 կին ձեռնարկատեր,
 - փաստացի չափ՝ 649 հարկ վճարող.
- *Ընտրանքային դիտարկման սխալ՝* $\pm 4\%$ ¹².
- *Տվյալների հավաքագրման գործիքներ՝* ստանդարտացված հարցաթերթ, էլեկտրոնային հարթակ՝ հարցաթերթի առցանց լրացման համար, հեռախոսային հարցման ուղեցույց՝ գրուցավարների համար.
- *Տվյալների հավաքագրման եղանակ՝* հարցաթերթի առցանց լրացում ռեսպոնդենտի կողմից. դրա անհնարինության դեպքում՝ ռեսպոնդենտի հեռախոսային հարցում՝ հետևյալ քայլերի հաջորդականությամբ.
 - պատահական ընտրանքի արդյունքում ընտրված բոլոր հարկ վճարողների էլեկտրոնային հասցեներին հարցմանը մասնակցելու հրավերների ուղարկում,
 - հրավեր ստացած հարկ վճարողներին հեռախոսային հետամուտ զանգեր,
 - ռեսպոնդենտի կողմից հարցաթերթի առցանց լրացման անհնար լինելու դեպքում՝ հարցազրուցավարի կողմից հեռախոսային հարցման իրականացում և առցանց հարցաթերթի համընթաց լրացում:

Հարցումն իրականացվել է առցանց հարթակի միջոցով՝ 2020թ-ին իրականացված համանման հարցման հետ¹³ արդյունքների առավելագույն համադրելիություն ապահովելու նպատակով:

¹¹ ՀՀ ՊԵԿ-ի տրամադրած տվյալները եղել են անվանազերծված՝ առանց կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվան կամ հասցեի:

¹² Ընտրանքային դիտարկման սխալը բնութագրում է, թե որքանով են հետազոտության արդյունքները մոտ գլխավոր համակցության իրական արժեքներին:

¹³ ՀՌԿԿ-Հայաստան, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ, 2020թ., http://www.crc.am/wp-content/uploads/2019/03/STAPL-REPORT_Arm_w_AnnexesForewords.pdf

2. Ընտրանքի մեթոդաբանությունը և շրջանակը

Ընտրանքային միավորների ընտրությունը կատարվել է անհամամասնական շերտավորված (ստրատիֆիկացված) ընտրանքի¹⁴ միջոցով:

Ընտրանքի շրջանակը ձևավորվել է հետևյալ քայլերի հաջորդականությամբ.

Քայլ 1. Գործող հարկ վճարողների ամբողջական ցանկից ընտրվել են առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

Քայլ 2. Ընտրվել են 2020թ-ին 100 հազարից մինչև 1.5 միլիարդ դրամ շրջանառություն ունեցող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

Քայլ 3. Ընտրվել են հարկման ընդհանուր և շրջանառության հարկի համակարգերում գործող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

Նշյալ քայլերի արդյունքում ձևավորված ընտրանքի շրջանակը ներառել է 47,012 հարկ վճարող (Աղյուսակ 1): Անհատ ձեռնարկատերերի բաժինն ընտրանքի շրջանակում ներառված հարկ վճարողների թվում կազմել է 60.5%:

Աղյուսակ 1. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների կազմակերպատիպական տեսակի

Կազմակերպատիպական տեսակ	Թիվ	Տոկոս
Անհատ ձեռնարկատեր	28,432	60.5
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	16,995	36.2
Բաժնետիրական ընկերություն	1,284	2.7
Այլ	301	0.6
Ընդամենը	47,012	100

Ըստ բիզնեսի չափի՝ հարկ վճարողների դասակարգման համար իբրև հիմք են վերցվել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի Հոդված 2-ում¹⁵ սահմանված դրույթները, որոնք հաշվի են առնում իրացման շրջանառությունը և աշխատողների թվաքանակը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Բիզնեսի չափի դասակարգման չափանիշը

Բիզնեսի չափ	Իրացման տարեկան շրջանառություն (մլն դրամ)	Աշխատողների թվաքանակ
Գերփոքր	մինչև 100	մինչև 10
Փոքր	100-ից 500	10-ից 50
Միջին	500-ից 1500	51-ից 250

Համապատասխանորեն, ինչպես ցույց է տրված

¹⁴ Անհամամասնական շերտավորված ընտրանքը հավանական է ընտրանքի տարբերակ է, որի դեպքում որևէ շերտից միավորների ընտրության հավանականությունը համամասն չէ տվյալ շերտ միավորների թվին: Ընտրանքի այս մոտեցումը կիրառվում է այն դեպքում, երբ հետաքրքրություն ներկայացնող գլխավոր համակցությունում կան այնպիսի շերտեր, որոնք բավականին փոքր են, բայց շատ կարևոր են և կարող են համարժեք ներկայացված չլինել հետազոտության մեջ:

¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64617>

Աղյուսակ 3-ում, ըստ իրացման տարեկան շրջանառության՝ ընտրանքի շրջանակում 89%-ը եղել են գերփոքր, 9%-ը՝ փոքր, իսկ մնացած 2%-ը՝ միջին չափի հարկ վճարողներ: Ընդ որում, ըստ տարածքային բաշխվածության՝ ընտրանքի շրջանակում ներառված հարկ վճարողների 65%-ը գրանցված են եղել Երևանում:

Աղյուսակ 3. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների իրացման տարեկան շրջանառության

Տարածքային ընդգրկում	Իրացման տարեկան շրջանառություն			Ընդամենը
	Գերփոքր. մինչև 100 մլն դր.	Փոքր. 100-ից 500 մլն դր.	Միջին. 500-ից 1500 մլն դր.	
Երևան	26,639	2,746	1,010	30,395
	87.6%	9%	3.3%	100%
Մարզեր	15,139	1,454	24	16,617
	91.1%	8.8%	0.1%	100%
Ընդամենը	41,778	4,200	1,034	47,012
	88.9%	8.9%	2.2%	100%

Ըստ աշխատողների թվաքանակի՝ գերփոքր հարկ վճարողները կազմել են ընտրանքի շրջանակի 83%-ը (Աղյուսակ 4): Համապատասխանորեն՝ փոքր հարկ վճարողների բաժինը նախորդ բաշխման համեմատ բարձր է եղել՝ 14.5%, թեպետ միջին հարկ վճարողների բաժինը նույնն է եղել՝ 2%:

Աղյուսակ 4. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների աշխատողների թվաքանակի

Տարածքային ընդգրկում	Աշխատողների թվաքանակ			Ընդամենը
	Գերփոքր. մինչև 10	Փոքր. 10-ից 50	Միջին. 51-ից 250	
Երևան	82.2%	15%	2.8%	100%
Մարզեր	85.4%	13.5%	1.2%	100%
Ընդամենը	83.3%	14.5%	2.2%	100%

Մինևույն ժամանակ, ըստ իրացման տարեկան շրջանառության և կազմակերպատիրավական տեսակի՝ ընտրանքի շրջանակի բաշխումը փաստում է, որ գերփոքր հարկ վճարողների թվում անհատ ձեռնարկատերերի բաժինը 66% է եղել, փոքրերի թվում՝ 18%, իսկ միջինների թվում՝ սոսկ 4% (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Ընտրանքի շրջանակի կազմն ըստ հարկ վճարողների իրացման տարեկան շրջանառության և կազմակերպատիրավական տեսակի

Կազմակերպատիրավական տեսակ	Իրացման տարեկան շրջանառություն			Ընդամենը
	Գերփոքր. մինչև 100 մլն դր.	Փոքր. 100-ից 500 մլն դր.	Միջին. 500-ից 1500 մլն դր.	
Անհատ ձեռնարկատեր	27,637	756	39	28,432
	97.2%	2.7%	0.1%	100%
Առևտրային կազմակերպություն	14,141	3,444	995	18,580
	76.1%	18.5%	5.4%	100%
Ընդամենը	41,778	4,200	1,034	47,012
	88.9%	8.9%	2.2%	100%

3. Թիրախային ընտրանքի նկարագրությունը

Ցանկալի ճշգրտության հասնելու համար՝ իբրև ընտրանքի թիրախային չափ է հաշվարկվել 600 ընտրանքային միավորը: Փաստացի, սակայն, թիրախը գերազանցվել է, և հետազոտության ընթացքում տվյալներ են հավաքագրվել 649 հարկ վճարողների (առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր) վերաբերյալ: Ընտրանքի այս չափն ապահովում է մոտ $\pm 4\%$ սահմանային սխալ:

Մինևույն ժամանակ, համեմատաբար փոքր շերտերի դիրքորոշումը լսելի դարձնելու նպատակով (հատկապես՝ միջին բիզնեսի, որի բաժինն ընտրանքի շրջանակում ընդամենը 2.2% է եղել) իրականացվել է անհամամասնական ընտրանք: Այդ նկատառումով, գերփոքր, փոքր և միջին բիզնեսների թիրախային չափն ընտրանքում համապատասխանաբար սահմանվել է 300, 200 և 100 հարկ վճարող (Աղյուսակ 6):

Ինչ վերաբերում է ընտրանքի տարածքային բաշխվածությանը, ապա Երևան քաղաքի և մարզերի միջև ընտրանքի թիրախային բաշխում է սահմանվել 1:1 հարաբերակցությունը:

Ի վերջո, բիզնեսների սեփականատիրոջ գենդերային պատկանելության առումով ընտրանքում կին ձեռնարկատերերի թիրախային չափ է սահմանվել մեկ երրորդը:

Աղյուսակ 6. Ընտրանքի թիրախային կազմն ըստ բիզնեսի չափի, տարածքային ընդգրկման և ձեռնարկատիրոջ գենդերային պատկանելության

Շերտավորման չափանիշ	Ընտրանքային միավորների թիրախային քանակ (ընտրանքի թիրախային չափ՝ 600 հարկ վճարող)		
	Գերփոքր՝ 300	Փոքր՝ 200	Միջին՝ 100
Տարածքային ընդգրկում	Երևան՝ 300		Մարզեր՝ 300
Ձեռնարկատիրոջ գենդերային պատկանելություն	Կին ձեռնարկատեր՝ 200		Տղամարդ ձեռնարկատեր՝ 400

Ընտրանքային միավորներն ընտրվել են յուրաքանչյուր շերտի համար իրականացված պատահական ընտրանքի միջոցով: Ընդ որում, կանխատեսելով, որ զգալի թվով դեպքերում հարցաթերթ չի լրացվի՝ հետազոտությանը մասնակցելուց հրաժարվելու կամ այլ պատճառներով՝ նույն մեթոդաբանությամբ իրականացվել է պահուստային ընտրանք:

4. Փաստացի ընտրանքի նկարագրությունը

Հետազոտության ընթացքում, ինչպես նշվեց, փաստացի տվյալներ են հավաքագրվել 649 հարկ վճարողների վերաբերյալ: Ստորև ներկայացված է նրանց համառոտ բնութագիրը, իսկ հանգամանալից նկարագրությունը տրվել է «Հիմնական տեղեկություններ հարկ վճարողների մասին» բաժնում:

Ըստ կազմակերպատիրավական տեսակի՝ հետազոտությանը փաստացի մասնակցած հարկ վճարողների 63%-ը եղել են առևտրային կազմակերպություններ, մնացածը՝ անհատ ձեռնարկատերեր (Աղյուսակ 7):

Ըստ տարածքային ընդգրկման՝ հարկ վճարողների շուրջ կեսը՝ 51.9%-ը, գրանցված են եղել Երևան քաղաքում, մնացածը՝ մարզերում, ինչն ապահովել է մարզային տնտեսվարողների բավարար ներկայացվածություն հետազոտության մասնակիցների թվում (Աղյուսակ 8): Հատկանշական է, որ ընտրանքում հարկ վճարողների բաշխումը Երևանի ու մարզերի միջև

համահունչ է եղել Հայաստանի ՀՆԱ-ում Երևանի բաժնին, որը վերջին տարիներին եղել է շուրջ 54%¹⁶:

Ըստ բիզնեսի չափի՝ հարկ վճարողների 82.9%-ը գերփոքր և փոքր առևտրային կազմակերպություններ ու անհատ ձեռնարկատերեր են եղել (Աղյուսակ 9, Գծապատկեր 1): Միևնույն ժամանակ, ընտրանքում բավարար չափով ընդգրկված են եղել միջին չափի բիզնեսները, որոնց բաժինը կազմել է 15% (ընտրանքի շրջանակում 2.2%-ի դիմաց):

Աղյուսակ 7. Հարկ վճարողների կազմն ըստ կազմակերպչի րավական տեսակի

Կազմակերպչի րավական տեսակ	Հաճախություն	Տոկոս
Առևտրային կազմակերպություն	411	63.3
Անհատ ձեռնարկատեր	238	36.7
Ընդամենը	649	100.0

Աղյուսակ 8. Հարկ վճարողների բաշխումն ըստ մարզերի

Մարզ	Հաճախություն	Տոկոս
Երևան	337	51.9
Արագածոտն	20	3.1
Արարատ	41	6.3
Արմավիր	31	4.8
Գեղարքունիք	30	4.6
Կոտայք	33	5.1
Լոռի	41	6.3
Վայոց Ձոր	10	1.5
Շիրակ	46	7.1
Տավուշ	35	5.4
Սյունիք	25	3.9
Ընդամենը	649	100.0

Աղյուսակ 9. Հարկ վճարողների կազմն ըստ 2020թ-ի իրացման շրջանառության


Շրջանառություն, մլն դր.	Հաճախություն
Մինչև 100	369
100-ից 500	146
500-ից 1500	93
Ավելի քան 1500	13
Ընդամենը*	621

* 28 հարկ վճարող իրացման շրջանառության մեծությանը վերաբերող հարցին կա՛մ հրաժարվել է պատասխանել, կա՛մ պատասխանել է «չգիտեմ»:

Այստեղ և այսուհետ, եթե ընդամենը արժեքը փոքր է 649-ից, ապա այդ տարբերության չափով ռեսպոնդենտ կա՛մ հրաժարվել է պատասխանել, կա՛մ պատասխանել է «չգիտեմ»:

¹⁶ Վիճակագրական կոմիտե, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2020թ., էջ 30, https://armstat.am/file/article/marzer_2020_10_.pdf

Գծապատկեր 1. Հարկ վճարողների կազմն ըստ 2020թ-ի իրացման շրջանառության
(% ամբողջի մեջ, n=621)




Հարկ վճարողների խաչաձև համադրումն՝ ըստ կազմակերպչաիրավական տեսակի և իրացման շրջանառության, փաստում է (Աղյուսակ 10, Գծապատկեր 2), որ ընտրանքում անհատ ձեռնարկատերերի թվում գերփոքր սուբյեկտները բացարձակ մեծամասնություն են կազմել, իսկ առևտրային կազմակերպությունների թվում գերփոքր, փոքր և միջին սուբյեկտները համեմատաբար հավասարաչափ են բաշխված եղել, թեպետ գերփոքր տնտեսվարողները, դարձյալ, ամենից մեծ բաժինն են ունեցել:

Աղյուսակ 10. Հարկ վճարողների կազմն ըստ կազմակերպչաիրավական տեսակի և 2020թ-ի իրացման շրջանառության

Շրջանառություն մլն դր.	Անհատ ձեռնարկատեր	Առևտրային կազմակերպություն	Ընդամենը
Մինչև 100	211	158	369
100-ից 500	13	133	146
500-ից 1500	4	89	93
Ավելի քան 1500	1	12	13
Ընդամենը*	229	392	621


* 9 անհատ ձեռնարկատեր և 19 առևտրային կազմակերպություն շրջանառության մեծությանը վերաբերող հարցին կա՛մ հրաժարվել է պատասխանել, կա՛մ պատասխանել է «չգիտեմ»:

Գծապատկեր 2. Հարկ վճարողների կազմն ըստ կազմակերպչաիրավական տեսակի և 2020թ-ի իրացման շրջանառության (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=621)



Գործունեության տևողության առումով՝ հետազոտությանը մասնակցած հարկ վճարողների բացարձակ մեծամասնությունը՝ 69.5%-ը, ակտիվ տնտեսական գործունեություն են ծավալել 4 և ավելի տարի: Այդ թվում 23.3%-ը գործել են 15 տարուց ավելի (Գծապատկեր 3): Այս հանգամանքը վկայում է, որ հետազոտության մասնակիցները բազմիցս հարաբերվել են հարկային մարմինների հետ և ունակ են եղել որակյալ գնահատական տալ հարկային վարչարարության բազմաբնույթ դրսևորումների վերաբերյալ:

Գծապատկեր 3. Ձեր բիզնեսը/կազմակերպությունը քանի՞ տարի է փաստացի (ակտիվ) գործում Հայաստանում (% ամբողջի մեջ, n=643)




Հարցաթերթին տրված պատասխանների արժանահավատության տեսանկյունից էական նշանակություն ունի նաև այն, որ գործնականում բոլոր դեպքերում հարցաթերթը լրացրած անձը եղել է կա՛մ բիզնեսի սեփականատերը, կա՛մ դեկավարը, կա՛մ էլ գլխավոր հաշվապահը (

Գծապատկեր 4): Պատասխանների որակի առումով նվազ կարևոր չէ այն, որ հարցաթերթը լրացրած անձանց 78%-ն ունեցել են բարձրագույն կրթություն (


Գծապատկեր 5):

Գծապատկեր 4. Ո՞րն է Ձեր պաշտոնը տվյալ կառույցում (% ամբողջի մեջ, n=649¹⁷)



¹⁷ Ընտրանքում անհատ ձեռնարկատերերի թիվը եղել է 238, ինչը կազմել է հետազոտության մասնակիցների ընդհանուր թվի 36.7%, սակայն որոշ դեպքերում հարցաթերթը լրացրել է ոչ թե անհատ ձեռնարկատերը, այլ հաշվապահը:

Գծապատկեր 5. Հարցաթերթը լրացրած անձանց կրթությունը (% ամբողջի մեջ, n=649)



ԱՄՓՈՓԱԳԻՐ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետազոտության արդյունքները փաստում են, որ հարկային վարչարարության նկատմամբ հարկ վճարողների վերաբերմունքում առկա է դրական դինամիկա: Այն, որ հետազոտության մասնակիցները վարչարարության բարելավման առաջարկություններ են ներկայացրել, վկայում է հարկ վճարողների վստահությունը, որ ՊԵԿ-ի կողմից դրանք հաշվի կառնվեն՝ նպաստելով ՊԵԿ-ի և հարկ վճարողների հարաբերությունների հետագա բարելավմանը:

Հետազոտության հիմնական արդյունքները հետևյալն են.

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

1. Հետազոտության մասնակից ձեռնարկությունների 4.9%-ը ունեցել են «օրինապահ հարկ վճարող»-ի հավաստագիր: Հավաստագրի տրամադրումն օրենսդրորեն կարգավորելու ներկայումս ընթացքի մեջ գտնվող գործընթացները՝ արդյունավետ լուծում ստանալու դեպքում, էապես կբարձրացնեն հավաստագրի գրավչությունը՝ նպաստելով հարկային օրինապահության հետագա ընդլայնմանը:
2. Հարկ վճարողների բացարձակ մեծամասնությունը չեն անդամակցում և հետաքրքրված չեն անդամակցելու գործարար միություններին ու առևտրաարդյունաբերական պալատներին: Հարցվածների նվազ քան 5%-ն են անդամակցել որևէ գործարար միության: Հարկ վճարողներն ակնհայտորեն առավելություն չեն տեսնում նման միություններին անդամակցելու մեջ:
3. Հարցվածների 4-ից միայն մեկն է տեղյակ եղել ՊԵԿ-ի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» մասին: Վերջինների երկու երրորդը Խորհրդի աշխատանքն օգտակար են համարել:
4. Հարկային մարմիններից թաքցվող շրջանառության մեծության վերաբերյալ հարցին հետազոտության մասնակիցների 92.5%-ը կա՛մ պատասխանել են «թաքցվող մասը 0% է», կա՛մ հրաժարվել են պատասխանել, կա՛մ պատասխանել են «չգիտեմ»:
5. Հարկերն ազնվորեն վճարող գործարարների բաժնի վերաբերյալ հարցին մեկ քառորդը պատասխանել են՝ «ավելի քան 80%-ն ազնվորեն վճարում են հարկերը»: Միևնույն ժամանակ, մեկ երրորդը կա՛մ պատասխանել են «չգիտեմ», կա՛մ հրաժարվել են պատասխանել:
6. Հարկերն ազնվորեն վճարելու դրդապատճառների թվում հարցվածները հատկապես կարևորել են «որպես քաղաքացի ավանդ բերելը» (հարցվածների 57.2%-ն այն համարել են «շատ կարևոր») և «լավ հեղինակություն ձեռք բերելը» (հարցվածների 51.5%-ն այն համարել են «շատ կարևոր»):
7. Գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից հարկային վարչարարության բարեփոխումներում հարցվածները կարևորել են հարկ վճարողների սպասարկման, հարկային իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության համակարգի և հարկային հսկողության հետագա բարելավումը:
8. Նախորդ երկու տարիներին հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններն իրենց բիզնեսի համար օգտակար են համարել հարցվածների 43.6%-ը: Ընդ որում, հարցվածների 69.5%-ը գնահատել են, որ հարկման հատուկ համակարգերը (շրջանառության հարկ և միկրոձեռնարկատիրություն) հեշտացնում են հարկային պարտավորությունների կատարումը:

9. Երկու առանցքային ոլորտները, դեպի որոնք հետազոտության մասնակիցների համոզմամբ հարկային եկամուտները պետք է ուղղվեն, եղել են պաշտպանությունը և կրթությունը:
10. Իբրև հարկային օրինապահության հնարավոր բացասական հետևանք՝ հարցվածների 36.9%-ը նշել են բիզնեսի անկումը և եկամուտների կրճատումը:
11. Հարցվածների 41.1%-ի կարծիքով եկամուտները թաքցնելու դեպքում ներկայումս սահմանված պատժամիջոցները բավականաչափ արդար են:
12. Օրենսդրության մեջ առկա բացերի օգտագործումը հարկային վճարները կրճատելու համար անընդունելի են համարել հարցվածների մոտ մեկ քառորդը:
13. Նախորդող մեկ տարվա ընթացքում հարկ վճարողների նկատմամբ հարկային մարմինների վերաբերմունքը հարցվածների երկու երրորդի գնահատմամբ բարելավվել է: Սույ 16.2%-ն են համարել, որ դրական փոփոխություն տեղի չի ունեցել:

Իսկ մաքսային մարմինների վերաբերմունքի դրական փոփոխություն տեղի է ունեցել արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող հարկ վճարողների մեծամասնության՝ 55.6%-ի գնահատմամբ: Այդ հարկ վճարողների սույ 20.4%-ն են համարել, որ դրական փոփոխություն տեղի չի ունեցել:

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

1. ՊԵԿ-ի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների թվում հարցվածների շուրջ 90%-ը հատկապես օգտակար են համարել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը և էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգը:

Ընդհանուր առմամբ, ՊԵԿ-ի էլեկտրոնային և թեժ գծի ծառայություններն «օգտակար» կամ «շատ օգտակար» են համարել հարցվածների 80.1%-ը, իսկ այդ ծառայությունների որակը «լավ» կամ «շատ լավ» են գնահատել հարցվածների 58.7%-ը:
2. Իբրև հետագա բարելավման կարիք ունեցող՝ հետազոտության մասնակիցները շեշտադրել են երեք ծառայություններ՝ հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգերն ու թեժ գծի ծառայությունը:
3. Հարցվածների 71.5%-ը համարել են, որ ՊԵԿ-ի ներդրած էլեկտրոնային ծառայությունների համակարգերը նպաստում են հարկային պարտավորությունների ամբողջական կատարմանը:
4. ՊԵԿ էլեկտրոնային պորտալի միջոցով հարկերը վճարելու հնարավորությունից տեղյակ հարկ վճարողների մեծամասնությունը՝ 70.1%-ը, համարել են, որ այն նպաստում է իրենց հարկային պարտավորությունների կատարմանը:
5. Հարցվածների մեծամասնությունը՝ 60.4%-ը, վերջին երեք տարիների ընթացքում ՊԵԿ-ի ձեռնարկած հարկային վարչարարության բարելավման միջոցառումները «դրական» կամ «խիստ դրական» են գնահատել:
6. Հետազոտության մասնակիցների ավելի քան երկու հինգերորդը՝ 43%-ը, համաձայնել են այն դատողության հետ, որ ՊԵԿ-ը հավասար է վերաբերվում հարկ վճարողներին, և նրանց կեսից ավելին՝ 52.5%-ը, համաձայնել են, որ ՊԵԿ-ը օբյեկտիվ չափանիշերի հիման վրա է ստուգում հարկ վճարողներին:

7. Հարկային համակարգի բոլոր տարրերի թվում հարկային մարմնի հուսալիությունն արժանացել է հարցվածների ամենից բարձր գնահատականին:
8. Հարցվածների գնահատմամբ հարկային օրենսդրության երկու առանցքային խոչընդոտները, որ խանգարում են բիզնեսին, հարկային օրենքների անորոշ, երկիմաստ ձևակերպումներն են ու օրենսդրության հաճախակի փոփոխությունները:
9. ՊԵԿ-ի հետ կապված ընթացակարգերը հեշտ են որակել հետազոտության մասնակիցների մեծամասնությունը՝ 60.1%-ը: Ընդ որում, համեմատաբար խնդրահարույց համարվել է հարկային պարզաբանում/ուղղորդում ստանալը:
10. Հետազոտության մասնակիցների գնահատմամբ՝ ՊԵԿ ուսումնական կենտրոնի թեմաներն արդիական են, սեմինարների մասին իրազեկումն արդյունավետ է, դասընթացավարները պրոֆեսիոնալ են: Միևնույն ժամանակ, համեմատաբար խնդրահարույց է ուսումնական կենտրոնի դասընթացների՝ համանման ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունների համեմատ ավելի օգտակար լինելու հանգամանքը:
11. Հետազոտության մասնակիցների մեծամասնությունը համաձայնել են այն պնդմանը, որ ՊԵԿ սպասարկման կենտրոնների «մասնագետները հանդես են գալիս որպես հանրային ծառայություններ մատուցող, այլ ոչ թե որպես ստուգող և պատժող կառույցի ներկայացուցիչներ»:
12. Հարցվածների գնահատմամբ հարկային վարչարարություն իրականացնողները պրոֆեսիոնալ ու ազնիվ են:
13. Հարկ վճարողների համար ՊԵԿ-ի հետ հաղորդակցության հիմնական միջոցը՝ շարունակում է մնալ հեռախոսը, իսկ հաղորդակցվելու հիմնական պատճառը՝ օրենսդրական պարզաբանումներ ստանալը:

2020թ-ի ընթացքում ՊԵԿ-ի միջոցով իրականացվել են համավարակի տնտեսական հետևանքների մեղմման Կառավարության մի շարք ծրագրեր, որոնց շահառու են հանդիսացել տասնյակ հազարավոր հարկ վճարողներ: Չնայած դրան, ինչպես վկայում են հետազոտության արդյունքները, հարկ վճարողների՝ ՊԵԿ-ի հետ կապվելու հաճախության նշանակալի աճ տեղի չի ունեցել: Դա փաստում է ՊԵԿ-ի կողմից այդ ծրագրերն իրականացնելու բարձր արդյունավետությունը:
14. Հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման չորս հիմնական աղբյուրները եղել են (1) պաշտոնական տեղեկագրերը, (2) ՊԵԿ-ի կայքը, (3) ՊԵԿ-ի ծանուցումները և (4) սոցիալական կայքերը (այլ բիզնեսները և անձինք):
15. ՊԵԿ-ից տեղեկատվություն ստանալու չորս առավել նախընտրելի եղանակները եղել են (1) ՊԵԿ-ի ծանուցումները, (2) պաշտոնական տեղեկագրերը, (3) ՊԵԿ-ի կայքը և (4) ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնը:

Հարցվածների մեծամասնությունն իբրև ՊԵԿ-ից ծանուցում ստանալու ամենանախընտրելի մեթոդ համարել են էլ-փոստը:
16. ՊԵԿ-ից ստացվող ծանուցումների բովանդակությունը, որպես կանոն, լինում է պարզ շարադրված:
17. Հարցվածների ավելի քան կեսը՝ 54.7%-ը, չեն համաձայնել այն պնդման հետ, թե ՊԵԿ-ը խտրական վերաբերմունք է ցուցաբերում հարկ վճարողների նկատմամբ՝ պայմանավորված սեփականատիրոջ սեռով, և ավելի քան մեկ երրորդը՝ 35.4%-ը, չեն համաձայնել, թե ՊԵԿ-ը խտրական վերաբերմունք է ցուցաբերում՝ պայմանավորված սեփականատիրոջ սոցիալ-տնտեսական կարգավիճակով:

18. Հարցվածները հիմնականում համաձայնել են, որ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հսկողությունը, հարկային, մաքսային հսկողության արդյունավետության բարձրացումը, հարկ վճարողների հետ համագործակցության հարթակի ապահովումը, հասարակական ծառայությունների որակի բարելավումը նպաստում են ՊԵԿ-ի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը:
19. Հարցվածները հիմնականում տեղյակ չեն եղել 2020-2024թթ. հարկային վարչարարության ռազմավարությունից:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

1. Հարկային ստուգումների առնչությամբ իրենց իրավունքների մասին տեղյակ են եղել հարցվածների մեծամասնությունը: Ընդ որում, 47.4%-ը նշել են, որ լիովին կամ հիմնականում կարողացել են իրացնել իրենց իրավունքները:
2. Իբրև հարկային ստուգումների բացասական կողմ՝ հարկ վճարողների 30.5%-ը նշել են հարկային ստուգումներն ի սկզբանե հարկ վճարողի մեղավորության կանխավարկածով իրականացնելու հանգամանքը:
3. Իբրև հարկային ստուգումների դրական կողմ՝ հարցվածների 49.5%-ը նշել են, որ հարկային ստուգումները հնարավորություն են տալիս տեսնել և ուղղել սեփական սխալները:
4. Հարկային ստուգումների վերաբերյալ անհամաձայնություն չարտահայտելու պատճառը 10-ից 8-ի դեպքում եղել է ստուգման արդյունքների հետ տարաձայնություն չունենալը:
5. Հարցվածները հիմնականում համաձայնել են, որ ստուգման նպատակով հարկ վճարողների ռիսկայնությունը գնահատելու գործառնությունը ՊԵԿ-ն իրականացնում է անկանխակալ:
6. Հարկ վճարողների ճնշող մեծամասնությունը ցանկություն է արտահայտել ՊԵԿ-ից ստանալ ծանուցումներ՝ հարկային ռիսկերի վերաբերյալ, որոնք հնարավորություն կընձեռեն աշխատանքային կարգով վերացնել այդ ռիսկերն առաջացնող պատճառները:
7. Հարցվածները հիմնականում համաձայնել են, որ կամերալ ուսումնասիրությունների արձանագրություններում բերված վերլուծությունները դեպքերի առնվազն կեսի դեպքում տեղին են և վերջին երկու տարում կամերալ ուսումնասիրությունների արձանագրությունների որակն աճել է:
8. Հարցվածները հիմնականում համաձայնել են, որ հարկային պարտավորությունների գումարների գանձման, արգելանքի կիրառման աշխատանքները հստակ են և արդար:

ԲԻԶՆԵՍՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ, ԲԻԶՆԵՍ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Հարցված հարկ վճարողների 43.6%-ն ունեցել են հիմնական հաշվապահ, իսկ 37.6%-ն անձամբ են վարել հաշվապահությունը: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր 5 հարկ վճարողից մեկը պատվիրակել է հաշվապահության կատարումը մեկ այլ անձի կամ կազմակերպության:
2. Հարցվածների մեծամասնությունը հարկային ռազմավարություն չեն ունեցել: Սոսկ 16.8%-ն են նշել նման ռազմավարության առկայությունը:
3. Հարցվածների գերակշռող մասը հարկային գործառնությունների իրականացման նպատակով որևէ մասնավոր խորհրդատվական ծառայությունից չեն օգտվել: Իսկ համեմատաբար

նշանակալի եղել է հաշվապահական (23.6%), հարկային (19.9%) և իրավական (19.3%) հարցերով մասնավոր խորհրդատվական ծառայություններից օգտվողների բաժինը:

4. Առաջիկա երկու տարիների հեռանկարների գնահատականներում դրական սպասումները գերակշռել են բացասականին:
5. Համավարակի բռնկման հետ կապված սահմանափակումների հետևանքով գործունեությունը դադարեցրած հարկ վճարողների բացարձակ մեծամասնությունը՝ 92.5%-ը, հարցման պահին արդեն վերսկսել էին գործունեությունը, բայց գործունեությունը կրճատած բիզնեսների զգալի մասը՝ 58%-ը, դեռևս ամբողջությամբ չէին կարողացել վերականգնել նախկին ծավալները:
6. Հարցվածների գրեթե կեսը՝ 48.4%-ը, դիմել են համավարակի հետևանքների հաղթահարման որևէ պետական ծրագրի, և դիմածների 92.7%-ը աջակցություն են ստացել:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարկ վճարողների կեսում կին աշխատողների թիվը մեկից ավելի չի եղել, իսկ տղամարդ աշխատողների թիվը երկուսից ավելի չի եղել: Հետազոտության մասնակից ձեռնարկությունների 20.3%-ում կին աշխատողներ ընդհանրապես չեն եղել, իսկ 19.6%-ում միայն կին աշխատողներ են եղել:
2. Տնտեսվարողների միայն մեկ հինգերորդում է, որ ղեկավարների և խորհրդի անդամների կազմում կանանց բաժինը գերակշռող (75%-ից բարձր) է եղել: Այդ տնտեսվարողների շուրջ կեսը եղել են Երևանից, և շուրջ 80%-ը եղել են գերփոքր ՓՄՁ սուբյեկտներ:
3. Հետազոտության մասնակիցների միայն 2.8%-ն են ունեցել գենդերային հավասարության քաղաքականությունը կանոնակարգող փաստաթուղթ: Իրավակազմակերպական տեսակով այդ տնտեսվարողների երկու երրորդը եղել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, իսկ տարածքային ընդգրկմամբ 44.4%-ը եղել են Երևանից:
4. Հարցաթերթում անդրադարձ է եղել կին ձեռներեցներին միավորող երեք միություններին անդամակցությանը: Նույնիսկ այն հարկ վճարողների թվում, որոնց ղեկավարների կազմում կանանց բաժինը 75%-ից բարձր է եղել, նշյալ երեք միություններից որևէ մեկին անդամակցողների բաժինն ընդամենը 5.5% է եղել:
5. Հարկերն ազնվորեն վճարելու դրդապատճառների թվում, պատասխանողի սեռով պայմանավորված, գնահատականների տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է եղել չորս դրդապատճառների դեպքում՝ (ա) «Հարկերը չվճարելու հետ կապված տուգանվելու և պատժվելու վախը», (բ) «Ժամկետանց հարկերի տոկոսադրույքները», (գ) «Լավ հեղինակություն ձեռք բերելը» և (դ) «Հարկ վճարելը նպաստում է բիզնեսի զարգացմանն ու ընդլայնմանը»: Չորսն էլ կանայք համարել են հարկերն ազնվորեն վճարելու ավելի կարևոր դրդապատճառ, քան տղամարդիկ:
6. Հարկային օրինապահության բացասական հետևանքների ընկալումներում արձանագրվել են հարցվողի սեռով պայմանավորված տարբերություններ: Տղամարդիկ ավելի հակված են եղել համարել, որ հարկային օրինապահության ամենաբացասական հետևանքներն առնչվում են մյուսների՝ հարկերը չվճարելու և հարկային մարմնի խտրական վերաբերմունքի հետ (տղամարդկանց 27.4%-ը՝ կանանց 19.8%-ի համեմատ), իսկ կանայք ավելի հակված են եղել համարել, որ ամենաբացասական հետևանքները դրսևորվում են եկամուտների կրճատմանն ու բիզնեսի անկման մեջ (տղամարդկանց 32%-ը՝ կանանց 42.9%-ի համեմատ):

7. Հարկերի թերվճարման համար սահմանված պատժամիջոցները մեղմելու մտքին կողմ են արտահայտվել տղամարդ պատասխանողների փոքր-ինչ ավելի մեծ մասը, քան կին պատասխանողների (համապատասխանաբար՝ 12.6%-ը և 9.5%-ը):
8. Հարկային վճարները կրճատելու նպատակով օրենսդրության բացերի օգտագործումը «լիովին ընդունելի է» համարել տղամարդ պատասխանողների 14.5%-ը, այնինչ կին պատասխանողների՝ 6.7%-ը:
9. Պնդումը, թե «ՊԵԿ-ը բոլոր հարկ վճարողներին պատժում է հավասարապես, օրենքի համաձայն», հարուցել է տղամարդ պատասխանողների 29.6%-ի, բայց կին պատասխանողների՝ 19.7%-ի անհամաձայնությունը:
10. Հարկային մարմնի հուսալիությունը «լավ» կամ «շատ լավ» են գնահատել հարցված տղամարդկանց 36.7%-ը, բայց կանանց՝ 29.9%-ը:
11. Կին պատասխանողներն ավելի հակված են եղել ընթացիկ տարում բիզնեսի ֆինանսական գործունեությունը գնահատել «վատ» կամ «շատ վատ»: Մասնավորապես, գործունեությունը «վատ» կամ «շատ վատ» են գնահատել տղամարդկանց 41.9%-ը, բայց կանանց՝ 47.9%-ը: Համապատասխանորեն, գործունեությունը «լավ» կամ «շատ լավ» են գնահատել տղամարդկանց 18.1%-ը, իսկ կանանց՝ 14.8%-ը:


ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հետազոտության շրջանակում հավաքագրվել են տվյալներ հարկ վճարողների հիմնական բնութագրերի վերաբերյալ՝ սկսած բիզնեսի չափից մինչև աշխատողների թիվը, տնտեսական գործունեության տեսակը, գործունեության տարիների թիվը, կին և տղամարդ աշխատողների հարաբերակցությունը, վճարվող հարկատեսակները և այլն:

Հետազոտության մասնակիցների շուրջ կեսը՝ 53.9%-ը, եղել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, մեկ երրորդը՝ 36.7%-ը, անհատ ձեռնարկատերեր (Գծապատկեր 6): Ըստ այդմ՝ այդ երկուսի ընդհանուր բաժինը հարկ վճարողների թվում կազմել է 90.6%: Բիզնեսի վարման այս երկու կազմակերպչաիրավական տեսակների գերակշռումը, հատկապես՝ փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների թվում, պայմանավորված է դրանց գրանցման ու լուծարման, ինչպես նաև գործունեության իրավակարգավորման ու հարկային հաշվետվությունների ներկայացման համեմատաբար պարզ ընթացակարգերով:

Մինևույն ժամանակ, ընտրանքում բավարար չափով ներկայացված են եղել բաժնետիրական ընկերությունները՝ կազմելով հետազոտության մասնակիցների 8%-ը:

Գծապատկեր 6. Ո՞րն է Ձեր բիզնեսի կազմակերպչաիրավական կարգավիճակը/ձևը
(% ամբողջի մեջ, n=649)




Բիզնեսի սեփականատերերի առումով՝ հետազոտության մասնակիցների 90.5%-ի դեպքում կա՝ մ ամենամեծ մասնակիցը (բաժնետերը) եղել է Հայաստանից ֆիզիկական անձ, կա՝ մ էլ սեփականատերը եղել է անհատ ձեռնարկատեր (

Գծապատկեր 7): Միևնույն ժամանակ, հարկ վճարողների 4.3%-ի դեպքում ամենամեծ մասնակիցը (բաժնետերը) եղել է օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձ:


Ինչ վերաբերում է իբրև բիզնեսի սեփականատեր այլ կազմակերպության հանդես գալուն, ապա նման դեպքերի թիվը նվազ քան 3% է եղել: Ընդ որում, օտարերկրյա կազմակերպություններն իբրև ամենամեծ մասնակից (բաժնետեր) հանդես են եկել կրկնակի ավելի դեպքերում, քան տեղական կազմակերպությունները:

Շարունակելով մասնակիցների (բաժնետերերի) թեման՝ արձանագրենք, որ հարկ վճարողների կեսից ավելիի դեպքում գործադիր տնօրենը միաժամանակ եղել է հիմնական մասնակիցներից (բաժնետերերից) (Գծապատկեր 8)՝ հանգամանք, որն օրինաչափ է ՓՄՁ սուբյեկտների դեպքում:

Գծապատկեր 7. Ո՞վ է Ձեր բիզնեսի ամենամեծ բաժնետերը/մասնակիցը (% ամբողջի մեջ, n=649)



Գծապատկեր 8. Արդյո՞ք Ձեր կազմակերպության գործադիր տնօրենը միաժամանակ հիմնական բաժնետերերից/ մասնակիցներից է (% ամբողջի մեջ, n=649)



■ Գործունեության տեսակների առումով՝ հետազոտության մասնակիցների թվում ամենից մեծ բաժինը՝ 36.8%, ունեցել են մանրածախ և մեծածախ առևտրով զբաղվող հարկ վճարողները (

Գծապատկեր 9): Ընդհանուր առմամբ, ծառայությունների ոլորտում (ներառյալ՝ առևտուրը) գործունեություն ծավալող հարկ վճարողների բաժինը կազմել է 75.5%:

Մշակող արդյունաբերության ոլորտում հարկ վճարողների ընդամենը 5.4%-ն են զբաղված եղել, իսկ գյուղատնտեսության ոլորտում՝ 2.3%-ը: Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող հարկ վճարողների ցածր տեսակարար կշիռն ակնառու է, հատկապես, երբ հաշվի ենք առնում ՀՆԱ-ում գյուղատնտեսության բարձր բաժինը՝ 12-14%¹⁸, և այդ ոլորտում պետական աջակցության ծրագրերի բազմազանությունը¹⁹:

¹⁸ Վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-մարտին, 2020թ., էջ 13, https://www.armstat.am/file/article/sv_03_20a_112.pdf

¹⁹ Էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, <https://mineconomy.am/page/1338>

Գծապատկեր 9. Ո՞րն է Ձեր գործունեության հիմնական ոլորտը (% ամբողջի մեջ, n=649)



■ Գործունեության տեսակն իր հերթին զգալի չափով պայմանավորել է արտաքին առևտրատնտեսական գործունեությամբ զբաղվելու հանգամանքը: Քանի որ հետազոտության մասնակիցների մեծամասնությունը գործել են ծառայությունների ոլորտում, ապա շուրջ 70%-ն ապրանքների արտահանմամբ կամ ներմուծմամբ չեն զբաղվել (Գծապատկեր 10):


Հաշվի առնելով, որ Հայաստանից ապրանքների արտահանումը շուրջ 1.5 անգամ փոքր է ներմուծումից, և արտահանման կառուցվածքում երեք ամենախոշոր ապրանքախմբերից երկուսը հանքահումքային արտադրանքն ու թանկարժեք քարեր, մետաղներն են²⁰՝ օրինաչափ է, որ հետազոտության մասնակից ՓՄՁ սուբյեկտների թվում արտահանողների բաժինը (շուրջ 4%), բազմակի փոքր է եղել ներմուծողների բաժնից (շուրջ 20%):

Ընդ որում, թեպետ ԵՏՍ անդամ երկրների հետ առևտրում՝ ի տարբերություն երրորդ երկրների, մաքսային ձևակերպումների իրականացումն էապես պարզեցված է, միննույնն է,

²⁰ Վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին, 2021թ., էջ 135-140, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_411.pdf


ավելի մեծ թվով տնտեսվարողներ ներգրավված են եղել երրորդ, ոչ թե ԵՏՄ անդամ երկրների հետ առևտրում:

Գծապատկեր 10. Ձեր բիզնեսը զբաղվո՞ւմ է ապրանքների և/կամ ծառայությունների ներմուծման և/կամ արտահանման գործունեությամբ հետևյալ ուղղություններով (% ամբողջի մեջ, n=649)



■ Հետազոտության մասնակից բիզնեսների գրեթե 90%-ը վճարել են եկամտային հարկ (Գծապատկեր 11), շուրջ կեսը՝ շահութահարկ և ԱԱՀ, իսկ շրջանառության հարկ վճարել են 42.5%-ը:

Գծապատկեր 11. Նշե՞ք ինչդեմ, թե հետևյալ հարկատեսակներից ո՞րն է վճարում Ձեր բիզնեսը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)




■ Հետազոտության մասնակիցներից 32-ը (ընդհանուր թվի 4.9%-ը, ԱԱՀ վճարողների 9.9%-ը) նշել են, որ ունեն «օրինապահ հարկ վճարողի» հավաստագիր (Գծապատկեր 12):

«Օրինապահ հարկ վճարողի» կարգավիճակը հարկային վարչարարության վերջին տարիների ուշագրավ նորամուծություններից է: Միևնույն ժամանակ, այդ կարգավիճակի

շնորհումը օրենսդրական կարգավորում չունենալու, և այն հարկ վճարողին արտաքուստ առավելություններ չէր տալիս՝ բացառությամբ, թերևս, հանրային կապերում դրական իմիջի:

Հետազոտության մասնակից այն տնտեսվարողների թվում, որոնք ունեցել են «օրինապահ հարկ վճարող»-ի հավաստագիր, 59.4%-ը եղել են Երևանից: Կազմակերպատիրավական տեսակով դրանց 56.3%-ը եղել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ (Հավելված 3, Աղյուսակներ Խ1.9&մարզ և Խ1.9&1.3):

Գծապատկեր 12. Ձեր կազմակերպությունն ունի՞ ՀՀ ՊԵԿ-ի կողմից շնորհվող «օրինապահ հարկ վճարող»-ի հավաստագիր (% ԱԱՀ վճարողների թվում, n=324)




■ Հետազոտության մասնակից 649 հարկ վճարողներն ունեցել են 12305 աշխատող, ընդ որում, աշխատողների միջին թիվը եղել է 19 (Հավելված 2, Աղյուսակ 21.6): Դրանց թվում կին աշխատողների բաժինը կազմել է 48.7%:


Հարկ վճարողների կեսում (առաջին հինգ դեցիլային խմբերում) կին աշխատողների թիվը մեկից ավելի չի եղել, իսկ տղամարդ աշխատողների թիվը երկուսից ավելի չի եղել (Գծապատկեր 13): Նույնիսկ 7-րդ դեցիլային խմբում կին և տղամարդ աշխատողների թիվը չի գերազանցել համապատասխանաբար 4-ը և 7-ը:

Հետազոտության մասնակիցների 20.3%-ում կին աշխատողներ ընդհանրապես չեն եղել, իսկ 19.6%-ում միայն կին աշխատողներ են եղել (Գծապատկեր 14): Ընդհանուր առմամբ, կին աշխատողները գերակշռել են հետազոտության մասնակիցների միայն 39.2%-ում:

Գծապատկեր 13. Կին և տղամարդ աշխատողների թիվը հարկ վճարողների դեցիլային խմբերում, n=649




Գծապատկեր 14. Կանանց բաժինը հարկ վճարողների աշխատողների թվում (հորիզոնական առանցքում՝ կանանց բաժինն աշխատողների թվում, ուղղահայաց առանցքում՝ համապատասխան հարկ վճարողների բաժինը բոլոր հարկ վճարողների թվում, n=649)




Տնտեսվարողների միայն մեկ հինգերորդում է, որ ղեկավարների և խորհրդի անդամների կազմում կանանց բաժինը գերակշռող (75%-ից բարձր) է եղել (Գծապատկեր 15): Այդ տնտեսվարողների շուրջ կեսը եղել են Երևանից: Դեպքերի շուրջ 80%-ում դրանք եղել են գերփոքր ՓՄՁ սուբյեկտներ: Իրավակազմակերպական տեսակով գրեթե բոլոր դեպքերում եղել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ կամ անհատ ձեռնարկատերեր (Հավելված 3, Աղյուսակներ Խ1.13&1.10, Խ1.13&մարզ, և Խ1.13&1.3):

Գծապատկեր 15. Որքա՞ն է կանանց մասնաբաժինը Ձեր ընկերության ղեկավարների և խորհրդի անդամների կազմում (% ամբողջի մեջ, n=649)



Հետազոտության մասնակիցների միայն 2.8%-ն են ունեցել գենդերային հավասարության քաղաքականությունը կանոնակարգող փաստաթուղթ՝ կապված վարվելակերպի, ուսնձգությունների կանխարգելման, կանանց և տղամարդկանց հավասար վարձատրության հետ (Գծապատկեր 16): Իրավակազմակերպական տեսակով այդ տնտեսվարողների երկու երրորդը եղել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, իսկ տարածքային ընդգրկմամբ 44.4%-ը եղել են Երևանից (Հավելված 3, Աղյուսակներ Խ1.14&&1.10, Խ1.14&մարզ և Խ1.14&1.3):


Գծապատկեր 16. Ձեր ընկերությունն ու՞նի գեներային հավասարության քաղաքականություն
(% ամբողջի մեջ, n=649)



■ Միություններին, ասոցիացիաներին, պալատներին անդամակցությունը հարկ վճարողների մեծամասնությունն օգտակար կամ նպատակահարմար չեն համարել: Այդ են վկայում անդամակցության ցածր ցուցանիշները (Գծապատկեր 17): Օրինակ՝ հետազոտության մասնակիցների միայն 4.5%-ն են անդամակցել ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին, և դա անդամակցության ամենից բարձր ցուցանիշն է եղել:

Հատկանշական է, որ իրավապաշտպան ՀԿ-ում՝ «Հարկ վճարողների իրավունքների պաշտպանության ՀԿ», անդամակցությունն ամենացածրերից է եղել, թեպետ անդամակցել պլանավորողների բաժինն ամենից բարձրն է եղել:

Գծապատկեր 17. Արդյո՞ք Ձեր բիզնեսը որևէ միության կամ ասոցիացիայի անդամ է
(% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Հարցաթերթում անդրադարձ է եղել կին ձեռներեցներին միավորող երեք միություններին անդամակցությանը: Հետազոտության մասնակիցների միայն 3.5%-ն են անդամակցել այդ երեք միություններից որևէ մեկին: Ընդ որում, նույնիսկ այն հարկ վճարողների թվում, որոնց ղեկավարների կազմում կանանց բաժինը 75%-ից բարձր է եղել, նշյալ երեք միություններից որևէ մեկին անդամակցողների բաժինն ընդամենը 5.5% է եղել:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ՀՀ ՊԵԿ-ում իրականացվող համակարգային բարեփոխումների շրջանակում 2016թ-ին ստեղծվել և տակավին գործում է «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդը»: Այն ՊԵԿ-ին կից խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակը հարկային ու մաքսային վարչարարության բարեփոխումների իրականացման գործընթացում հարկ վճարողների մասնակցության ընդլայնումն է²¹: Խորհրդի նախագահը սկզբնապես ՊԵԿ նախագահն էր, իսկ անդամների կազմում նշանակալի էր ՊԵԿ նախագահի տեղակալների ու վարչությունների պետերի թիվը: 2018թ-ին, սակայն, Խորհրդի կազմը վերափոխվեց՝ դառնալով ավելի համահունչ հասարակական խորհրդի առաքելությանը: Արդյունքում՝ Խորհրդի՝ ձայնի իրավունք ունեցող 25 անդամներից 22-ը, ներառյալ՝ Խորհրդի նախագահը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են:

Խորհուրդն իր գործունեությունը ծավալում է պարբերաբար գումարվող նիստերի միջոցով: Այդ նիստերի գործնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը, սակայն, սակավ է: Ըստ Խորհրդի աշխատակարգի՝ նիստեր պետք է գումարվեն յուրաքանչյուր ամիս՝ առնվազն մեկ անգամ, բայց ՊԵԿ կայքում հրապարակված են 2016թ-ից հետո կայացած այդպիսի միայն յոթ նիստերի արձանագրություններ:

Խորհրդի գործունեության անբավարար լուսաբանման համատեքստում զարմանալի չէ, որ Խորհրդի գործունեության մասին տեղյակ չեն եղել սույն հետազոտության մասնակիցների մեծամասնությունը՝ 70.1%-ը (Գծապատկեր 18): Իրավիճակը նույնն էր եղել մոտ մեկ տարի առաջ՝ նախորդ հետազոտության արդյունքներով²²:

Միննույն ժամանակ, և՛ նախորդ, և՛ ներկա հետազոտության այն մասնակիցները, որոնք Խորհրդի գործունեությունից տեղյակ են եղել, «հարկ վճարող-հարկային մարմին» հաղորդակցության տեսանկյունից Խորհրդի աշխատանքը դեպքերի բացարձակ մեծամասնությունում համարել են օգտակար (


²¹ ՀՀ ՊԵԿ նախագահի թ. 204-Ս (2016թ.) և թ. 544-Լ (2018թ.) հրամաններ,

<https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTISocialCouncil>


²² Զեկույցի այս բաժնում հետազոտության արդյունքները համեմատվում են մոտ մեկ տարի առաջ իրականացված համանման հետազոտության համապատասխան բաժնի արդյունքների հետ, տե՛ս՝ ՀՌԿԿ-Հայաստան, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ, 2020թ., էջ 33-41, http://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/STAPL-REPORT_Arm_w_AnnexesForewords.pdf

Գծապատկեր 19): Թեպետ, նույնիսկ, Խորհրդի գործունեությունից տեղյակ անձանց մեկ հինգերորդը դժվարացել է դրական կամ բացասական գնահատել Խորհրդի աշխատանքը («չգիտեմ» պատասխանների բաժինը՝ 20.7%):

Գծապատկեր 18. Դուք տեղյակ եք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի մասին (% ամբողջի մեջ, n=649)



Գծապատկեր 19. «Հարկ վճարող-հարկային մարմին» հաղորդակցության տեսանկյունից որքան՞ վ է օգտակար ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» աշխատանքը (% ամբողջի մեջ, n=169)



■ Հարկերը թաքցնելը ՀՀ պետականաշինության լրջագույն մարտահրավերներից է: Համաձայն վերջին գնահատումներից մեկի՝²³ 2017թ-ին ՀՀ-ում ստվերային տնտեսությունը կազմել է ՀՆԱ-ի 34.5%-ը²⁴:

Տեսականում հարկերը թաքցնելը պայմանավորող գործոնների թվում են.

- բացահայտվելու և պատժվելու հավանականությունը,
- հավանական պատժի չափը,
- լրացուցիչ օգուտը, որը ստացվում է հարկերը թաքցնելու արդյունքում (ինչը մեծ է այնքան, որքան բարձր են հարկերի դրույքաչափերը),
- ստվերային տնտեսության չափը (ստվերում գործող մրցակիցների թիվը որքան մեծ է, այնքան առանձին տնտեսվարողի համար բարձր է օրինական գործելու դեպքում շուկայից դուրս մղվելու հավանականությունը և հետևաբար՝ ստվերում գործելու ճնշումն այնքան ավելի ինտենսիվ է):

Հարցաթերթում երկու հարց վերաբերել են հարկերը թաքցնելու քանակական գնահատականներին:

Դրանցից առաջին հարցը ձևակերպված էր հետևյալ կերպ՝ «Այն ոլորտում, որում գործում է Ձեր կազմակերպությունը, միջինում որքա՞ն է կազմում հարկային մարմիններից թաքցվող շրջանառությունը»: Հարկ վճարողների կեսից ավելին խուսափել են կոնկրետ պատասխան տալուց. մասնավորապես, 56.4%-ը պատասխանել են՝ «չգիտեմ», իսկ 7.6%-ը՝ հրաժարվել են պատասխանել (Գծապատկեր 20): Իսկ հետազոտության այն մասնակիցները, որոնք թաքցվող շրջանառության կոնկրետ չափ են նշել՝ դեպքերի մեծամասնությունում այդ չափը գնահատել են 0% (այսինքն՝ համարել են թաքցվող շրջանառություն չկա):

²³ Medina, L., & Schneider, F. (2019). Shedding Light on the Shadow Economy: A Global Database and the Interaction with the Official One. *CESifo Working Paper 7981*. https://www.cesifo.org/DocDL/cesifo1_wp7981.pdf


²⁴ Համաձայն Medina, Schneider (2019)-ի, ստվերային տնտեսության բաժինը ՀՆԱ-ում 1991-2017թթ-ին միջինում կազմել է 42.2%: Միևնույն ժամանակ, այն 1991թ-ի 48.1%-ից 2017թ-ին նվազել էր մինչև 34.5%:

Հետազոտության մասնակիցների ընդամենը 2.3%-ն են գնահատել, որ թաքցվող շրջանառության չափը գտնվում է 21%-ից 50% միջակայքում: Նախորդ հետազոտության արդյունքներով պատկերը գործնականում նույնն էր եղել:

Հնարավոր է՝ այս հարցին պատասխանելիս՝ հետազոտության մասնակիցները համարել են, որ այլոց թաքցվող շրջանառության՝ իրենց նշած չափը կմեկնաբանվի իբրև իրենց կողմից թաքցվող շրջանառության չափ: Արդյունքում՝ դրսևորելով անհարկի զգուշավորություն, ստվերային շրջանառության ցածր ցուցանիշներ են նշել:

Ինչ վերաբերում է թաքցվող շրջանառության միջին մեծությանը, ապա հարկ վճարողների միջին կշռված գնահատականը կազմել է 3.8%: Նախորդ հարցմամբ նույն ցուցանիշը 6.6% էր կազմել, իսկ 2018թ-ի հարցմամբ՝ 16.2%²⁵: Դրական միտումն ակնհայտ է:

Գծապատկեր 20. Այն ոլորտում, որում գործում է Ձեր կազմակերպությունը, միջինում քանի՞ տոկոս է կազմում հարկային մարմիններից թաքցվող շրջանառությունը (% ամբողջի մեջ, n=649)



Կարևոր հարցադրում է, թե արդյո՞ք հարկման հատուկ համակարգերի ներդրումը նպաստել է ստվերային շրջանառության կրճատմանը: Թեպետ կարելի է պնդել, որ շրջանառության հարկի շեմի բարձրացումը կրճատել է շրջանառությունը թերհայտարարագրելու շահագրգռվածությունը բոլոր այն դեպքերում, երբ իրացման շրջանառությունն այդ շեմից ցածր է եղել, բայց նույնը դժվար է պնդել այն դեպքերում, երբ իրական շրջանառությունն այդ շեմից բարձր է եղել:


Հարկերը թաքցնելուն առնչվող հարցաթերթի երկրորդ հարցը ձևակերպված էր հետևյալ կերպ՝ «Ընդհանուր առմամբ, հարկ վճարողների ո՞ր մասն է ազնվորեն վճարում հարկերը»: Հետազոտության մասնակիցների մեկ երրորդը՝ 32.7%-ը, պատասխանել են «չգիտեմ», իսկ մեկ քառորդը՝ 24.2%-ը գնահատել են, որ հարկ վճարողների ավելի քան 80%-ն ազնվորեն վճարում են հարկերը (Գծապատկեր 21):

Մինևույն ժամանակ, նախորդ հետազոտության համեմատ առկա է գնահատականների որոշ տեղաշարժ: Եթե մոտ մեկ տարի առաջ հետազոտության մասնակիցների 10.3%-ն էին համարել, թե հարկ վճարողների 21%-ից 60%-ն են ամբողջությամբ վճարում հարկերը, ապա այս տարի այդպես են գնահատել մասնակիցների կրկնակի ավելի մասը՝ 22%-ը:

²⁵ ՀՌԿԿ-Հայաստան, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ, 2020թ., էջ 34, http://www.crc.am/wp-content/uploads/2019/03/STAPL-REPORT_Arm_w_AnnexesForewords.pdf

Ինչ վերաբերում է միջին մեծությանը, ապա հետազոտության մասնակիցների միջին կշռված գնահատականը, թե հարկ վճարողների ո՞ր մասն է ազնվորեն վճարում հարկերը, կազմել է 64%: Նախորդ հարցմամբ այդ ցուցանիշը 68% էր կազմել:

Գծապատկեր 21. Ընդհանուր առմամբ, հարկ վճարողների ո՞ր մասն է ազնվորեն վճարում հարկերը (% ամբողջի մեջ, n=649)



■ Իսկ որո՞նք են հարկերն ազնվորեն վճարելու դրդապատճառները: Արդյո՞ք տնտեսավարողները հարկերը վճարում են քաղաքացիական պարտքի գիտակցմամբ, թե պատժվելու վախի դրդմամբ:

Թիվ մեկ դրդապատճառը, որը կարևորել են հետազոտության մասնակիցները, եղել է «որպես քաղաքացի ավանդ բերելը» (Գծապատկեր 22): 57.2%-ն այն համարել են «շատ կարևոր», և միայն 7.1%-ն են, որ այն «ընդհանրապես չեն կարևորել» (հարցաթերթում նշված դրդապատճառների թվում դրանք համապատասխանաբար առավելագույն և նվազագույն ցուցանիշներն են):


Հատկանշական է, որ հետազոտության մասնակիցների համար պակաս էական չի եղել հարկերը վճարելու միջոցով լավ հեղինակություն ձեռք բերելու հանգամանքը: Այն «շատ կարևոր» են համարել մասնակիցների 51.5%-ը, և միայն 10.5%-ն են, որ այն «ընդհանրապես չեն կարևորել»:

Հարկ վճարողների համար կարևոր դրդապատճառ է եղել նաև այն համոզումը, որ հարկ վճարելը նպաստում է բիզնեսի զարգացմանն ու ընդլայնմանը: Այնքանով, որքանով հարկային եկամուտներն ուղղվում են հանրային բարիքների ձևավորմանը կամ արդիականացմանը, հարկ վճարելն, իրապես, բիզնեսի ընդլայնմանը նպաստող գորեղ միջոց է:

Սոցիալական արդարության զգացումը, նույնպես, բարձր դիրք է գրավում հարկ վճարողների արժեքային համակարգում: «Վստահությունը, որ բոլոր հարկ վճարողներին հավասար են վերաբերվում (ստուգումների, տուգանքներ նշանակելու և այլնի առումով)» «շատ կարևոր» են համարել հետազոտության մասնակիցների 42.8%-ը:

Ինչ վերաբերում է պատժվելուն, ապա հետազոտության մասնակիցների միայն մեկ երրորդն են «շատ կարևոր» համարել «հարկերը չվճարելու հետ կապված տուգանվելու և պատժվելու վախը» կամ «ժամկետանց հարկերի տոկոսադրույքները»:

Գծապատկեր 22. Ձեր կազմակերպության նման հարկ վճարողների համար, հարկերն ազնվորեն վճարելու հետևյալ դրդապատճառները որքանո՞վ են կարևոր (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Անդրադարձը հարկերն ազնվորեն վճարելու դրդապատճառներին ըստ պատասխանողի սեռի ցույց է տալիս, որ կին պատասխանողները, որպես կանոն, ավելի հաճախ են ընտրել «շատ կարևոր է» տարբերակը, քան տղամարդ պատասխանողները (Հավելված 3, Աղյուսակ Խ2.5&5.15):

Մինևույն ժամանակ, կին և տղամարդ պատասխանողների գնահատականների տարբերությունը վիճակագրորեն նշանակալի²⁶ է եղել չորս դրդապատճառների դեպքում՝ (ա) «Հարկերը չվճարելու հետ կապված տուգանվելու և պատժվելու վախը», (բ) «Ժամկետանց հարկերի տոկոսադրույքները», (գ) «Լավ հեղինակություն ձեռք բերելը», (դ) «Հարկ վճարելը նպաստում է բիզնեսի զարգացմանն ու ընդլայնմանը»: Չորսն էլ կանայք համարել են հարկերն ազնվորեն վճարելու ավելի կարևոր դրդապատճառ, քան տղամարդիկ:


■ Գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային վարչարարության ո՞ր ուղղությունում են հարկ վճարողները հետագա բարելավման կարիք տեսնում: Ինչպես նախորդ հարցման ժամանակ՝ հարկ վճարողներն առաջնային են համարել սպասարկման բարելավումը (Գծապատկեր 23):

Սակայն նախորդ հարցմամբ այդ և մնացյալ ուղղությունների կարևորումը նկատելիորեն տարբեր էր: Օրինակ՝ «հարկ վճարողների սպասարկումը» կարևորվել էր բոլոր պատասխանների 27.7% դեպքում, իսկ «հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության բողոքարկման համակարգը» ընդամենը 5.6% դեպքում: Այնինչ այս հետազոտության

²⁶ Գնահատականների տարբերության վիճակագրական նշանակալիությունը այստեղ և այսուհետ ստուգվել է բազմանումիալ լոգիստիկ ռեգրեսիայի միջոցով:

մասնակիցները համարել են, որ հարցաթերթում նշված բոլոր ուղղություններն էլ, ընդհանուր առմամբ, կարևոր են, թեպետ հարկ վճարողների սպասարկման բարելավման անհրաժեշտությունը համեմատաբար ավելի ընդգծված է:

Գծապատկեր 23. Գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից, հարկային վարչարարության հատկապես ո՞ր ուղղությունն ունի հետագա բարելավման կարիք (պատասխանի երեք տարբերակները՝ համատեղ, % ամբողջի մեջ, n=1010)




Պատասխանողի սեռով պայմանավորված վիճակագրորեն նշանակալի տարբերություններ գնահատականներում չեն արձանագրվել: Մինևույն ժամանակ, հարկ վճարողների սպասարկումն իբրև հետագա բարելավման կարիք ունեցող ուղղություն՝ կին պատասխանողները փոքր-ինչ ավելի են կարևորել: Մասնավորապես, կին և տղամարդ պատասխանողներն այդ ուղղությունը նշել են հապատատասխանաբար 20.4% և 17.7% դեպքերում (Հավելված 3, Աղյուսակ Խ2.6&5.15):

■ Անցած երկու տարում հարկային օրենսդրությունում կատարվել են համակարգային փոփոխություններ, որոնցից առավել էական են եկամտային հարկի և շահութահարկի դրույքաչափերի կրճատումը և շրջանառության հարկի շեմի վերականգնումը նախկին 115 մլն. ՀՀ դրամի մակարդակում:

Արդյո՞ք օրենսդրության բոլոր փոփոխությունների հանրագումարային ազդեցությունն իրենց բիզնեսի վրա հարկ վճարողները գնահատում են դրական, թե բացասական:


Հետազոտության մասնակիցների 43.6%-ի գնահատմամբ ազդեցությունը դրական է եղել, իսկ 20.9%-ի գնահատմամբ՝ բացասական (Գծապատկեր 24): Ընդ որում, գնահատականներում հարցվողի սեռով պայմանավորված վիճակագրորեն նշանակալի տարբերություն չի արձանագրվել: Թեպետ խաչաձև համադրումը (Հավելված 3, Աղյուսակ Խ2.7&5.15) փաստում է, որ տղամարդ պատասխանողները հակված են եղել ավելի դրական գնահատել օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը բիզնեսի վրա, քան կին պատասխանողները: Մասնավորապես, եթե ազդեցությունը դրական են գնահատել կանանց 41.2%-ը, ապա տղամարդկանց՝ 45.5%-ը:

Գծապատկեր 24. Անցած երկու տարում (2019-2020 թթ) հարկային օրենսգրքում նոր փոփոխություններ են կատարվել. այդ փոփոխություններն օգուտ բերում են և Ձեր բիզնեսին (% ամբողջի մեջ, n=649)



■ Արդյո՞ք Հայաստանում սահմանված հարկման հատուկ համակարգերը (շրջանառության հարկ և միկրոձեռնարկատիրություն) հեշտացնում են հարկային պարտավորությունների կատարումը: Հարկ վճարողների մեծամասնությունը՝ 69.5%-ը, համարել են, որ ազդեցությունը դրական է, թեպետ 7.9%-ն ազդեցությունը չեզոք են գնահատել (Գծապատկեր 25): Մեկ տարի առաջ չեզոք գնահատողների բաժինը 4.9% էր: Համանմանորեն, եթե մեկ տարի առաջ բացասական գնահատողների բաժինը 4.4% էր, ապա այս հետազոտության արդյունքներով՝ 7.4%:

Գծապատկեր 25. Ներկայումս Հայաստանում սահմանված հարկման հատուկ համակարգերը (շրջանառության հարկ և միկրոձեռնարկատիրություն) հեշտացնում են արդյոք հարկային պարտավորությունների կատարումը (% ամբողջի մեջ, n=649)




■ Հանրահայտ իրողություն է, որ հարկ վճարողներն էապես ավելի պատրաստակամ են վճարում հարկերը, երբ համարում են, որ այդ գումարները ուղղվում են իրենց տեսանկյունից գերակա ոլորտներ:

Հետազոտության մասնակիցներն այն հարցին՝ «Եթե Դուք որոշելու լինեիք, ապա հարկային եկամուտներն ավելի շուտ ո՞ր ոլորտ կուղղեիք», տրված պատասխանների 40.8% դեպքում մատնանշել են պաշտպանության ոլորտը, իսկ 31.9% դեպքում՝ կրթության ոլորտը (Գծապատկեր 26): Երրորդ տեղում առողջապահությունն է, բայց կրթությունից կրկնակի պակաս կշռով:

Պաշտպանության ոլորտի գերակայումն, առավել ևս, պատերազմից անմիջապես հետո օրինաչափ է: Հատկանշական է, սակայն, կրթության ոլորտի այդչափ կարևորումը և դրանով հանդերձ՝ երկրի ապագայում երկարաժամկետ ներդրում կատարելու անհրաժեշտության գիտակցումը²⁷:

Գծապատկեր 26. Հարկային եկամուտների հաշվին ֆինանսավորվում են հանրային ծառայությունները և ապրանքները, որից շահում են բոլոր քաղաքացիները, եթե Դուք որոշելու լինեիք, ապա այդ եկամուտներն ավելի շուտ ո՞ր ոլորտ կուղղեիք (պատասխանի բոլոր տարբերակները՝ համատեղ, % ամբողջի մեջ, n=1038)



■ Արդյո՞ք հարկային օրինապահությունը հարկ վճարողների ընկալմամբ բացասական հետևանքներ ունի, և եթե այո, որո՞նք են դրանք: Հետազոտության մասնակիցների 15.6%-ը համարել են, որ հարկային օրինապահությունը բացասական հետևանքներ չունի (Գծապատկեր 27): Մեկ տարի առաջ այդպես համարողների բաժինն ավելի մեծ էր՝ 23.3%:


Իբրև հնարավոր բացասական հետևանք՝ հարցաթերթում առաջարկվել էր չորս տարբերակ: Դրանցից երկուսը կապված էին եկամուտների կրճատման և բիզնեսի անկման հետ (այսուհետ՝ եկամուտներ-բիզնես զույգ), երկուսը՝ սովետային տնտեսության («Միևնույնն է, մյուսները չեն վճարելու և մենք տուժելու ենք մրցակցության իմաստով») և ՊԵԿ-ի խտրական մոտեցում ցուցաբերելու կարծրատիպի («Միևնույնն է, օրինապահ հարկ վճարողները մշտապես բախվում են հարկային մարմնի անարդար, ոչ հավասար վերաբերմունքին») հետ (այսուհետ՝ սովետ-խտրականություն զույգ):

²⁷ ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվել էր, որ համախմբված բյուջեի՝ կրթության ոլորտին ուղղվող ծախսերն աճեն այնպես, որ, «2017թ-ին կազմեն ՀՆԱ-ի շուրջ 2.8, 2021թ-ին՝ 3.3, իսկ 2025թ-ին՝ շուրջ 3.7 տոկոսը»: Տես՝ ՀՀ կառավարություն, ՀՀ 2014-25թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 147, <https://www.gov.am/files/docs/1322.pdf>: Փաստացի այդ ծախսերը 2019թ-ին կազմել էին ՀՆԱ-ի 2%-ը: Տես՝ Կիճակագրական կոմիտե, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2020, էջ 14, https://www.armstat.am/file/article/finansner_2020_1.pdf

Եկամուտներ-բիզնես գույզն՝ իբրև հարկային օրինապահության ամենաբացասական հետևանք, մատնանշել են հետազոտության մասնակիցների 36.9%-ը: Մեկ տարի առաջ այդպես էին համարել 33%-ը:

Իսկ ստվեր-խտրականություն գույզը մատնանշել են մասնակիցների մեկ ու կես անգամ պակաս մասը՝ 24%-ը: Մեկ տարի առաջ այդ գույզը նշել էին մասնակիցների 19.1%-ը: Դրանով իսկ, երկու դեպքում էլ արձանագրվել է բացասական ընկալման աճ:

Գծապատկեր 27. Ընդհանուր առմամբ, ո՞րն է հարկային օրինապահության ամենաբացասական հետևանքը բիզնեսի համար (% ամբողջի մեջ, n=649)



Հարցվողի սեռով պայմանավորված հետազոտության մասնակիցների ընկալումներում առկա են զգալի տարբերություններ:

Տղամարդիկ ավելի հակված են եղել համարել, որ հարկային օրինապահության ամենաբացասական հետևանքներն առնչվում են մյուսների՝ հարկերը չվճարելու և հարկային մարմնի խտրական վերաբերմունքի հետ, իսկ կանայք ավելի հակված են եղել համարել, որ ամենաբացասական հետևանքները դրսևորվում են եկամուտների կրճատման ու բիզնեսի անկման մեջ (Հավելված 3, Աղյուսակ Խ2.10&5.15): Մասնավորապես, ստվեր-խտրականություն գույզը նշել են տղամարդկանց 27.4%-ը, բայց կանանց՝ 19.8%-ը: Իսկ եկամուտներ-բիզնես գույզը նշել են տղամարդկանց 32%-ը, բայց կանանց՝ 42.9%-ը:

■ Արդյո՞ք հարկերի թերվճարման համար ներկայում սահմանված պատժամիջոցներն անհրաժեշտ է խստացնել: Հարկ վճարողների բացարձակ մեծամասնությունն արձանագրել է, որ պատժամիջոցները պետք չէ մեղմացնել:


Մասնավորապես, այն հարցին, որ «Եթե հարկ վճարողը չի հայտարարագրում իր ամբողջ եկամուտը՝ ավելի քիչ հարկեր վճարելու համար, ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն պետք է լինեն պատժամիջոցները», հետազոտության մասնակիցների 41.1%-ը պատասխանել են, որ «Ներկա պատժամիջոցները բավականաչափ արդար են» (Գծապատկեր 28):

Միևնույն ժամանակ, հարկ վճարողների 23.4%-ը համարել են, որ «Պատժամիջոցները պետք է ավելի խիստ լինեն, քան հիմա են»: Այդպես պատասխանած հարկ վճարողների համար գուցե կարելի է պնդել, որ նրանք հարկերն ամբողջովին վճարում են և որպեսզի բոլորն այդպես անեն՝ համարում են, որ անհրաժեշտ է խստացնել պատասխանատվության միջոցները:

Հետազոտության մասնակիցների 11.2%-ը համարել են, որ «Պատժամիջոցները պետք է լինեն ավելի մեղմ, քան հիմա են»:

Հարցվողի սեռով պայմանավորված գնահատականներում վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն արձանագրվել: Խաչաձև համադրումը փաստում է, որ պատժամիջոցները մեղմելու մտքին կողմ են արտահայտվել տղամարդ պատասխանողների փոքր-ինչ ավելի մասը, քան կին պատասխանողների (համապատասխանաբար՝ 12.6%-ը և 9.5%-ը) (Հավելված 3, Աղյուսակ Խ2.11&5.15):

Գծապատկեր 28. Եթե հարկ վճարողը չի հայտարարագրում իր ամբողջ եկամուտը՝ ավելի քիչ հարկեր վճարելու համար, ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն պետք է լինեն պատժամիջոցները/տուգանքները (% ամբողջի մեջ, n=649)



■ Արդյո՞ք օրենսդրությունում առկա բացերի օգտագործումը՝ հարկային վճարները կրճատելու համար, ընդունելի է:


Հետազոտության մասնակիցների գրեթե մեկ երրորդը՝ 30.7%-ը, համարել են, որ օրենսդրության մեջ եղած բացերի օգտագործումն առնվազն մասամբ ընդունելի է (Գծապատկեր 29): Իսկ առնվազն մասամբ անընդունելի այն համարել են հարկ վճարողների մոտ մեկ քառորդը՝ 23.5%-ը:

Հանրագումարային՝ հարկ վճարողների գրեթե կեսը՝ 46.9%-ը, օրենսդրության բացերի օգտագործումը կա՛մ առնվազն մասամբ ընդունելի են համարել, կա՛մ էլ չեզոք դիրքորոշում են ունեցել (ոչ ընդունելի է, ոչ՝ անընդունելի):

Հարցվողի սեռով պայմանավորված հարկ վճարողների ընկալումներում արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: Մասնավորապես՝ «Լիովին ընդունելի է» պատասխանը վիճակագրորեն նշանակալի տարբերվել է կին և տղամարդ պատասխանողների մոտ՝ համեմատած «Ոչ ընդունելի է, ոչ՝ անընդունելի» կամ «Ընդհանրապես ընդունելի չէ» պատասխանների:

Խաչաձև համադրումը փաստում է, որ օրենսդրության բացերի օգտագործումը լիովին ընդունելի են համարել տղամարդկանց 14.5%-ը, այնինչ կանանց՝ 6.7%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ2.12&5.15):

Գծապատկեր 29. Հարկ վճարողների կողմից օրենսդրության մեջ եղած բացերի օգտագործումը սեփական հարկային վճարները կրճատելու համար արդյո՞ք (% ամբողջի մեջ, n=649)



■ Հարկ վճարողների ընկալմամբ՝ արդյո՞ք հարցմանը նախորդող մեկ տարվա ընթացքում հարկային և մաքսային մարմինների վերաբերմունքը հարկ վճարողների նկատմամբ բարելավվել է:

Հետազոտության մասնակիցների համապատասխանաբար 16.2%-ը և 14.3%-ը նշել են, որ վերաբերմունքի դրական փոփոխություն հարկային և մաքսային մարմիններում չի եղել:

Մինևույն ժամանակ, հարկային մարմինների դեպքում դրական փոփոխություն մատնանշել են հետազոտության մասնակիցների 67.5%-ը (Գծապատկեր 30): Նախորդ հարցմամբ այդօրինակ բարելավում նշել էին 74.2%-ը:


Իսկ մաքսային մարմինների դեպքում դրական փոփոխություն մատնանշել են հարցվածների 36.1%-ը (մեկ տարի առաջ՝ 48.4%-ը): Սակայն անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ հարցվածների 45.8%-ն այս հարցին պատասխանել են «չգիտեմ»՝ հիմնականում այն պատճառով, որ արտաքին տնտեսական գործունեություն չեն իրականացրել և մաքսային մարմինների հետ չեն առնչվել:

Ուստի առավել ինֆորմացիոն են մաքսային մարմինների վերաբերյալ այն հարկ վճարողների գնահատականները, որոնք փաստացի զբաղվել են արտաքին տնտեսական գործունեությամբ: Իսկ այդ հարկ վճարողների²⁸ մեծամասնությունը՝ 55.6%-ը, գնահատել են, որ նախորդող մեկ տարվա ընթացքում տեղի է ունեցել մաքսային մարմինների վերաբերմունքի դրական փոփոխություն (Գծապատկեր 31): Նշյալ հարկ վճարողների սոսկ 20.4%-ն են համարել, որ վերաբերմունքի դրական փոփոխություն տեղի չի ունեցել:


Հարցվողի սեռով պայմանավորված հարկ վճարողների ընկալումներում վիճակագրորեն նշանակալի տարբերություններ հարկային կամ մաքսային մարմինների վերաբերմունքի փոփոխության առումով չեն արձանագրվել: Այդ է փաստում համապատասխան տվյալների խաչաձև համադրումը (Հավելված 3, Աղյուսակ Խ2.13&5.15):

²⁸ USԳ-ում ներգրավված են համարվել հարցման այն մասնակիցները, որոնք հարցարանի 1.11 հարցում («Ձեր բիզնեսը զբաղվում է արդյո՞ք ներմուծման և/կամ արտահանման գործունեությամբ») նշված ուղղություններից առնվազն մեկի համար «ներմուծում», «արտահանում» կամ «երկուսն էլ» տարբերակներից որևէ մեկին պատասխանել են «այո»:

Գծապատկեր 30. Փոխվե՛լ է արդյոք դրականորեն ՊԵԿ հարկային/մաքսային մարմինների պահվածքը (վերաբերմունքը) հարկ վճարողների նկատմամբ վերջին տարվա ընթացքում (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Գծապատկեր 31. Արտաքին տնտեսական գործունեություն իրականացրած հարկ վճարողների գնահատմամբ դրականորեն փոխվե՛լ է արդյոք ՊԵԿ ՄԱՔՄԱՑԻՆՆ մարմինների պահվածքը (վերաբերմունքը) հարկ վճարողների նկատմամբ վերջին տարվա ընթացքում (% ամբողջի մեջ, n=639)




ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Այս բաժնում վերլուծվում են ՊԵԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների, վարչարարության բարելավման միջոցառումների, հարկային համակարգի տարրերի, հարկ վճարողների նկատմամբ ՊԵԿ-ի վերաբերմունքի վերաբերյալ հարկ վճարողների տված գնահատականները:

■ ՊԵԿ-ի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների թվում հետազոտության մասնակիցներն առանձնակի օգտակար են համարել հաշվետվությունների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգերը: Այդ երկու ծառայությունները «շատ օգտակար» համարողների բաժինը կազմել է շուրջ 52%, իսկ «օգտակար» կամ «շատ օգտակար» համարողների գումարային բաժինը շուրջ 91% (Գծապատկեր 32):

Գծապատկեր 32. Ինչպե՞ս կգնահատեք ՀՀ հարկային ծառայության կողմից ներկայումս մատուցվող հետևյալ ծառայությունների օգտակարությունը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



ՊԵԿ-ի էլեկտրոնային ծառայություններից ոչ մեկի դեպքում «անօգտակար» կամ «բոլորովին անօգտակար» համարողների գումարային բաժինը 8.1%-ը չի գերազանցել, իսկ այդ գումարային բաժինների միջինը կազմել է 4.8%: Այնինչ, «օգտակար» կամ «շատ օգտակար» համարողների գումարային բաժինների միջինը եղել է 80.1%:


Թեժ գծի ծառայությունն «օգտակար» կամ «շատ օգտակար» են համարել մասնակիցների 79.6%-ը: Միևնույն ժամանակ, թեժ գծի ծառայությունն «անօգտակար» կամ «բոլորովին անօգտակար» համարողների գումարային բաժինը բոլոր ծառայությունների թվում եղել է առավելագույնը՝ 8.1%:

Ինչ վերաբերում է «օգտակար» կամ «շատ օգտակար» համարողների գումարային բաժնի նվազագույն արժեքին, ապա այն արձանագրվել է դրոշմապիտակների վերագրման էլեկտրոնային համակարգի դեպքում՝ 63.2%: Պատճառը, թերևս, դրոշմապիտակների հետ առնչվող գործողությունների ժամանակատարությունն է:

Նախորդ հարցմամբ²⁹ ընդհանուր պատկերը հիմնականում նույնն էր եղել: Մասնավորապես, բոլոր ծառայություններն «օգտակար» կամ «շատ օգտակար» համարողների գումարային բաժինների միջինը եղել էր 80.2%:

■ Ի լրումն օգտակարության՝ հետազոտության մասնակիցները գնահատել են էլեկտրոնային ծառայությունների որակը:

Գծապատկեր 33. Ինչպե՞ս եք գնահատում հարկային մարմինների կողմից Ձեզ մատուցվող էլեկտրոնային ծառայությունների որակը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)




²⁹ Զեկույցի այս բաժնում հետազոտության արդյունքները համեմատվում են մոտ մեկ տարի առաջ իրականացված համանման հետազոտության համապատասխան բաժնի արդյունքների հետ, տե՛ս՝ ՀՌԿԿ, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ 2020թ., էջ 42-62, http://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/STAPL-REPORT_Arm_w_AnnexesForewords.pdf

Մատուցվող ծառայությունների որակը «լավ» կամ «շատ լավ» համարողների գումարային բաժինը տատանվել է 47.3%-ից 66% միջակայքում, իսկ միջինը կազմել է 58.7% (Գծապատկեր 33): Դրանով իսկ, «որակի» դրական գնահատականների միջինը 21.4 տոկոսային կետով ցածր է եղել «օգտակարության» դրական գնահատականների միջինից, բայց «որակի» բացասական գնահատականների միջինն ավելի բարձր չի եղել, ավելին, 0.4 տոկոսային կետով ցածր է եղել:

Հաշվետվությունների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգերի դեպքում որակը «լավ» կամ «շատ լավ» համարողների գումարային բաժինը կազմել է համապատասխանաբար 66% և 63.8%: Այդ նույն ցուցանիշը թե՛ զժի ծառայության դեպքում եղել է 53%, իսկ դրոշմապիտակների վերագրման էլեկտրոնային համակարգի դեպքում՝ 47.3%:

Ծառայությունների որակը «վատ» կամ «շատ վատ» համարողների գումարային բաժինը տատանվել է 2.3%-ից 9.8% միջակայքում, իսկ միջինը կազմել է 4.4%: Այդ գումարային բաժինն առավելագույն 9.8% արժեք է ունեցել թե՛ զժի ծառայության դեպքում, իսկ հաշվետվությունների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգերի դեպքում այն համապատասխանաբար կազմել է 6.2% և 7.1%:

Գծապատկեր 34. Նշեք, խնդրեմ այն ծառայությունները, որոնք հետագա բարելավման կարիք ունեն (%) հարցվածների թվում, n=649, հնարավոր էր ավելի քան մեկ պատասխան)



Հարցաթերթում նշված ծառայությունների թվում՝ իբրև հետագա բարելավման կարիք ունեցող, հետագոտության մասնակիցները հատկապես շեշտադրել են երեքը՝ էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգը, հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը և թե՛ զժի ծառայությունը: Յուրաքանչյուր երրորդ հարկ վճարողը

մատնանշել է նշյալ երեք ծառայությունների հետագա բարելավման անհրաժեշտությունը (Գծապատկեր 34):

Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր յոթերորդ հարկ վճարողը մատնանշել է նաև նոր սերնդի ՀԴՄ-ներով գործարքների արտացոլման առցանց համակարգի և առցանց ծանուցման համակարգի հետագա բարելավման անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ հետազոտության մասնակիցների 22.7%-ն այս հարցի պատասխանների թվում ընտրել են «նշվածներից ոչ մեկը» տարբերակը: Այսինքն՝ առկա են այլ հարցաթերթում ուղղակիորեն չնշված ծառայություններ, որոնք հարկ վճարողների կարծիքով հետագա բարելավման կարիք ունեն: Հետազոտության մասնակիցներն իբրև այդպիսին նշել են անձնական հաշվի քարտի քաղվածքում ներառված տեղեկությունների արտացոլման համակարգը, ԵԱՏՄ երկրներում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունն ընդլայնելու, կենտրոնական սերվերը հզորացնելու ու կապի՝ պարբերաբար ծագող խնդիրները լուծելու անհրաժեշտությունը:

Կախված հարկ վճարողի՝ արտաքին տնտեսական գործունեությունում ներգրավված լինելու հանգամանքից՝ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հետագա բարելավման գնահատականներում արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ:


Մասնավորապես, նշյալ համակարգի հետագա բարելավման անհրաժեշտությունը նշել են ԱՏԳ-ում ներգրավվածների 41.8%-ը: Այնինչ, ԱՏԳ-ում չներգրավվածների միայն 33.1%-ն են նշել նման բարելավման անհրաժեշտությունը (Հավելված 3, Աղյուսակ Խ.ԱՏԳ&3.2.բ.(1)):

Միևնույն ժամանակ, հաշվետվությունների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգերի հետագա բարելավման կարիքը նախորդ հարցմամբ նշել էին հարցվածների համապատասխանաբար 17.8%-ը և 12.3%-ը, իսկ ներկա հարցմամբ՝ 36.2%-ը և 37.1%-ը:

■ Նպաստում են արդյո՞ք ՊԵԿ-ի ներդրած էլեկտրոնային ծառայությունների համակարգերը հարկային պարտավորությունների ամբողջական կատարմանը:

Հետազոտության մասնակիցների 71.5% դրական են պատասխանել այս հարցին, իսկ բացասական պատասխան տվել են մասնակիցների ընդամենը 2.6%-ը (Գծապատկեր 35):

Գծապատկեր 35. Արդյո՞ք հարկային մարմինների կողմից ներդրված էլեկտրոնային ծառայությունների համակարգը նպաստում է հարկային պարտավորությունների ամբողջական կատարմանը (% ամբողջի մեջ, n=649)



Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր 10-րդ մասնակից համարել է, որ այդ ծառայությունները հարկային պարտավորությունների կատարման վրա ազդեցություն չեն ունենում:


Պատասխանողի սեռով պայմանավորված արձանագրվել են գնահատականների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: «Էլեկտրոնային ծառայությունների համակարգը նպաստում է հարկային պարտավորությունների ամբողջական կատարմանը» հարցին «վստահորեն այո» պատասխանել են տղամարդկանց 16.2%-ը, բայց կանանց՝ 11.3%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ3.3&5.15):

■ Հարկ վճարողները տեղյակ են արդյո՞ք ՀՀ ՊԵԿ-ի կողմից մատուցվող նոր առցանց ծառայությունների մասին:

ՊԵԿ-ի էլեկտրոնային պորտալի միջոցով հարկերը վճարելու հնարավորությունից տեղյակ են եղել հետազոտության մասնակիցների կեսից փոքր-ինչ պակաս մասը՝ 44.8%-ը (Գծապատկեր 36):

Իսկ ՊԵԿ-ի կայքում հարկային ձեռնարկների ու հաճախ տրվող հարցերի բաժնի առկայության մասին տեղյակ են եղել հետազոտության մասնակիցների համապատասխանաբար 50.7%-ը և 61.6%-ը:

Գծապատկեր 36. Հարկային մարմինների կողմից մատուցվող, ստորև թվարկված առցանց նոր գործիքներից և ռեսուրսներից որի՞ մասին գիտեք (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)




■ Նոր առցանց ծառայություններից տեղյակ հարկ վճարողները գնահատել են, թե արդյո՞ք այդ ծառայությունները նպաստել կամ պարզեցրել են իրենց հարկային պարտավորությունների կատարումը:

Մեծամասնությունը համարել են, որ այո՛, ՊԵԿ-ի կայքի նոր գործիքներն ու ռեսուրսները պարզեցրել են իրենց հարկային պարտավորությունների կատարումը: Մասնավորապես, ՊԵԿ էլեկտրոնային պորտալի միջոցով հարկերը վճարելու հնարավորության համար այդպես են գնահատել նշյալ հնարավորությունից տեղյակ հարկ վճարողների 70.1%-ը (

Գծապատկեր 37):

Գծապատկեր 37. Արդյո՞ք հարկային մարմնի կողմից առցանց հասանելի դարձված, ստորև թվարկված գործիքները և ռեսուրսները ուղղակիորեն նպաստում են կամ առնվազն պարզեցնում են Ձեր հարկային պարտավորությունների կատարումը (% տվյալ տողի ամբողջի մեջ)




■ Ինչպե՞ս են հարկ վճարողները գնահատում վերջին երեք տարիների ընթացքում ՊԵԿ-ի ձեռնարկած հարկային վարչարարության բարելավման միջոցառումները:

Հետազոտության մասնակիցների 60.4%-ն այդ միջոցառումները «դրական» կամ «խիստ դրական» են գնահատել (Գծապատկեր 38), և միայն 2.3%-ն են դրանք «բացասական» կամ «խիստ բացասական» գնահատել:

Պատասխանողի սեռով պայմանավորված գնահատականների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն արձանագրվել (Հավելված 3, Աղյուսակ Խ3.6&5.15):

Գծապատկեր 38. Ինչպե՞ս եք գնահատում, ընդհանուր առմամբ, հարկային մարմնի կողմից վերջին երեք տարվա ընթացքում ձեռնարկված՝ հարկային վարչարարության բարելավման միջոցառումները՝ էլեկտրոնային բազմապիսի ծառայությունների ներմուծումը, հարկերի հաշվարկման հարցում պարզեցումները և այլն (% ամբողջի մեջ, n=649)



■ Հարկ վճարողների ընկալմամբ՝ ինչպե՞ս է ՊԵԿ-ը վերաբերվում իրենց:

Հետազոտության մասնակիցների 43%-ը լիովին կամ մասամբ համաձայնել են այն պնդման հետ, որ «ՊԵԿ-ը հավասար է վերաբերվում բոլոր կատեգորիաների հարկ վճարողներին»


(Գծապատկեր 39): Միննույն ժամանակ, այդ պնդման հետ ընդհանրապես կամ մասամբ չեն համաձայնել հարցվածների 28.3%-ը:

Այս պնդման առնչությամբ պատասխանողի սեռով պայմանավորված գնահատականների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն արձանագրվել (Հավելված 3, Աղյուսակ Խ3.7&5.15.(ա)):

Պնդումը, թե «ՊԵԿ-ը կին հարկ վճարողներին վերաբերվում է այնպես, ինչպես տղամարդ հարկ վճարողներին» նվազագույն հակաճառությունն է հարուցել: Սոսկ 8.6%-ը մասամբ կամ ընդհանրապես չեն համաձայնել այդ պնդման հետ: Իսկ լիովին կամ մասամբ համաձայնողների բաժինը եղել է 57.5%:

Պատասխանողի սեռով պայմանավորված գնահատականների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն արձանագրվել, բայց խաչաձև համադրումը ցույց է տալիս, որ այդ պնդման հետ լիովին կամ մասամբ համաձայնել են կին պատասխանողների 60.9%-ը, բայց տղամարդ պատասխանողների 54.8%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ3.7&5.15.(բ))

Գծապատկեր 39. Ինչպե՞ս է ՊԵԿ-ը վերաբերվում հարկ վճարողներին (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Հաջորդ պնդումը, թե «ՊԵԿ-ը օբյեկտիվ չափանիշերի հիման վրա է ստուգում հարկ վճարողներին» հարուցել է հետազոտության մասնակիցների 19.1%-ի լիակատար կամ մասնակի անհամաձայնությունը, բայց և արժանացել է 52.5%-ի լիակատար կամ մասնակի համաձայնությանը:

Այս դեպքում արձանագրվել են պատասխանողի սեռով պայմանավորված գնահատականների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: Խաչաձև համադրումը վկայում է, որ այս պնդման հետ մասամբ չեն համաձայնել տղամարդ պատասխանողների 15.6%-ը, բայց կին պատասխանողների՝ 10.6%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ3.7&5.15.(գ)):

Ի վերջո, այն պնդումը, թե «ՊԵԿ-ը բոլոր հարկ վճարողներին պատժում է հավասարապես, օրենքի համաձայն» հետազոտության մասնակիցների 41.3%-ի համար եղել է մասամբ կամ լիովին ընդունելի, բայց 25%-ի համար՝ ընդհանրապես կամ մասամբ անընդունելի:

Այս դեպքում, նույնպես, արձանագրվել են պատասխանողի սեռով պայմանավորված գնահատականների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: Խաչաձև համադրումը վկայում է, որ այս պնդման հետ ընդհանրապես կամ մասամբ չեն համաձայնել տղամարդ պատասխանողների 29.6%-ը, բայց կին պատասխանողների՝ 19.7%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ3.7&5.15.դ):


■ Ինչպե՞ս են հարկ վճարողները գնահատում հարկային համակարգի տարրերը:

Հարկային օրենսդրության հստակությունը, մատչելիությունը և հարկերի դրույքաչափերը «լավ» կամ «շատ լավ» են գնահատել հետազոտության մասնակիցների համապատասխանաբար 20.8%-ը, 25.1%-ը և 20.9%-ը (Գծապատկեր 40):

Հարկային վարչարարությունը և հարկային ստուգումների ընթացակարգերը «լավ» կամ «շատ լավ» են գնահատել մասնակիցների շուրջ 30%-ը:

Հարկային վարչարարության գնահատականներում արձանագրվել են պատասխանողի սեռով պայմանավորված վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: Խաչաձև համադրումը վկայում է, որ հարկային վարչարարությունը վատ կամ շատ վատ են գնահատել տղամարդկանց 12.6%-ը, բայց կանանց՝ 6.7%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ3.8&5.15.զ):

Գծապատկեր 40. Գնահատեք, խնդրեմ, հարկային համակարգի հետևյալ տարրերը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Հարկային մարմնի հուսալիությունն արժանացել է հարկ վճարողների 33.7%-ի «լավ» կամ «շատ լավ» գնահատականին. ինչը դիտարկվող տարրերի թվում ամենաբարձր գնահատականն է եղել:

Հարկային մարմնի հուսալիության գնահատականներում, նույնպես, արձանագրվել են պատասխանողի սեռով պայմանավորված վիճակագրորեն նշանակալի տարբերություններ:


Խաչաձև համադրումը փաստում է, որ հարկային մարմնի հուսալիությունը լավ են գնահատել տղամարդկանց 31.8%-ը, բայց կանանց՝ 25.7%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ3.8&5.15.(գ):

Հարկային համակարգի տարրերի գնահատականում կշռով ամենից մեծը եղել է «բավարար» գնահատականը: Խնդրո առարկա վեց տարրերի «բավարար» գնահատականների միջինը կազմել է 44.8%: Միննույն ժամանակ, «վատ» կամ «շատ վատ» գումարային գնահատականների միջինը եղել է 16.6%:

■ Հարկ վճարողների կարծիքով հարկային օրենսդրության ո՞ր հարցն է խոչընդոտում իրենց բիզնեսի զարգացմանը:

Հետազոտության մասնակիցների գնահատմամբ (Գծապատկեր 41) երկու առանցքային խոչընդոտները եղել են հարկային օրենքների անորոշ, երկիմաստ ձևակերպումները և հաճախակի փոփոխությունները:

Գծապատկեր 41. Հարկային օրենսդրության ո՞ր հարցն է առավել շատ խանգարում Ձեզ կամ ձեր նման բիզնեսներին (% ամբողջի մեջ, n=649)



Հարկերի դրույքաչափերը որպես հիմնական խոչընդոտ որակել է յուրաքանչյուր 5-րդը, իսկ օրենսդրական կարգավորումների մեծաթիվ լինելը հիմնական խոչընդոտ որակել է յուրաքանչյուր 6-րդը:

■ Հարկ վճարողների կարծիքով որքանո՞վ են դյուրին ՊԵԿ-ի հետ կապված ընթացակարգերը, որոնք առնչվում են հարկերի հաշվարկմանը, հայտարարագրմանը, վճարմանը, ԱԱՀ գումարի փոխհատուցմանը, հարկային ստուգումներին և այլն:

Միջին հաշվով, ՊԵԿ-ի հետ կապված ընթացակարգերը շատ կամ մասամբ հեշտ որակել են հետազոտության մասնակիցների 60.1%-ը, իսկ շատ կամ մասամբ դժվար՝ 11.3%-ը (

Գծապատկեր 42):

Գծապատկեր 42. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ են հեշտ կամ դժվար ՊԵԿ-ի հետ կապված հետևյալ ընթացակարգերը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Մասնավորապես, հարկ վճարողների 70%-ից մինչև 80%-ը շատ կամ մասամբ հեշտ են որակել ՊԵԿ էլեկտրոնային պորտալում գրանցվելը, հարկերը հաշվարկելը, հայտարարագրելը, վճարելը, ՀՎՀՀ ձեռք բերելը:


Հարկ վճարողների 55%-ից 60%-ը շատ կամ մասամբ հեշտ են որակել հարկային պարզաբանումներ ստանալը, կամերալ ուսումնասիրություններին առնչվող գործառույթները, հարկերի վճարումն ուշացնելու դեպքում ծանուցումների ու ներգործության միջոցների կիրառման ընթացակարգը:

Հարկ վճարողների 40%-ից 50%-ը շատ կամ մասամբ հեշտ են որակել վարչական վարույթների իրականացումը, ԱԱՀ գումարի փոխհատուցումը, հարկային ստուգումները, հսկիչ նշանների, ակցիզային դրոշմանիշերի, դրոշմապիտակների ստացումը:

■ Հարկ վճարողների գնահատմամբ՝ ինչպիսի՞ն է ՊԵԿ «Ուսումնական կենտրոնի» մատուցած ծառայությունների որակը:


«Ուսումնական կենտրոնի» ծառայություններից օգտվել էին հետազոտության մասնակիցների սոսկ 21.6%-ը (Գծապատկեր 43): Միննույն ժամանակ, 31.4%-ը օգտվել էին հարկային դասընթացներ իրականացնող այլ կազմակերպությունների ծառայություններից:

Գծապատկեր 43. Դուք երբևէ օգտվել էք ՊԵԿ «Ուսումնական կենտրոնի» կամ հարկային դասընթացներ տրամադրող այլ կազմակերպությունների ծառայություններից (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Այն հարկ վճարողները, որոնք օգտվել էին ՊԵԿ «Ուսումնական կենտրոնի» ծառայություններից, միջին հաշվով 86% դեպքերում «համամիտ» կամ «լիովին համամիտ» են եղել այն պնդումների հետ, որ «Ուսումնական կենտրոնում» դասավանդվող թեմաները միշտ արդիական են և սեմինարների իրագեկումն արդյունավետ է (Գծապատկեր 44):

Գծապատկեր 44. Գնահատե՞ք, խնդրեմ, ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն»-ի աշխատանքների որակը (հարցին պատասխանել են նրանք, ովքեր օգտվել են կենտրոնի ծառայություններից, % տվյալ տողի ամբողջի մեջ, n=140)



Երեք քառորդից ավելին՝ 77.2%-ը, «համամիտ» կամ «լիովին համամիտ» են եղել, որ դասընթացավարները պրոֆեսիոնալներ են, թեպետ 10%-ն այս պնդման հետ չեն համաձայնել:

Հարցվածների 63.5%-ը համաձայնել են, որ դասընթացները բարելավելու ուղղությամբ ունկնդիրների առաջարկությունները հաշվի են առնվում:


Ի վերջո, ՊԵԿ «Ուսումնական կենտրոնի» ծառայություններից օգտվածների 48.5%-ն են համաձայնել այն պնդմանը, թե կենտրոնի դասընթացներն ավելի օգտակար են, քան համանման ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպություններին: Այս պնդումն ամենից ավելի անհամաձայնություն հարուցածն է եղել. 27.2%-ը այս պնդման հետ համամիտ չեն եղել:

Նախորդ հարցմամբ «Ուսումնական կենտրոնի» դասընթացների ավելի օգտակար լինելու հետ համամիտ էին եղել այդ կենտրոնի ծառայություններից օգտվածների ավելի նվազ մասը՝ 42.5%-ը:

■ Հարկ վճարողների գնահատմամբ՝ ինչպիսի՞ն է ՊԵԿ «Հեռախոսագանգերի կենտրոնի» աշխատանքի որակը:

Հետազոտության մասնակիցների կեսից փոքր-ինչ ավելի մասը՝ 53%-ը, համաձայնել են այն տեսակետի հետ, որ պատասխանող մասնագետները պրոֆեսիոնալներ են և հարցերին հասկանալի են պատասխանում (Գծապատկեր 45): Թեպետ մեկ քառորդը՝ 24.5%-ը, այս տեսակետի հետ համամիտ չեն եղել: Նախորդ հարցմամբ ավելի նվազ մասը՝ 46.6%-ն էր համամիտ եղել այս տեսակետի հետ:

Գծապատկեր 45. Արտահայտեք, խնդրեմ, Ձեր կարծիքը ՀՀ ՊԵԿ «Հեռախոսագանգերի կենտրոն»-ի («Թեժ գծի») աշխատանքների որակի վերաբերյալ (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Հարցվածների կեսից փոքր-ինչ պակաս մասը՝ 46.2%-ը, համաձայնել են այն տեսակետի հետ, որ հեռախոսագանգերի կենտրոնը հասանելի է: Սակայն մեկ երրորդը՝ 32.4%-ը, այս տեսակետի հետ համամիտ չեն եղել: Նախորդ հարցմամբ, դարձյալ, ավելի նվազ մասը՝ 36.4%-ն էր համամիտ եղել թե՛ գծի հասանելի լինելու տեսակետի հետ:

Այն տեսակետի հետ, թե «հեռախոսազանգերի կենտրոնի պատասխաններն արդյունավետ են, և նույն հարցով խորհրդատվական ընկերություններին դիմելու կարիք չի առաջանում», համաձայնել են հարցվածների 43.3%-ը, թեպետ մեկ երրորդը՝ 32.2%-ը չեն համաձայնել: Դարձյալ առկա է նշանակալի բարելավում: Նախորդ հարցմամբ սուկ 35.9%-ն էր համամիտ եղել պատասխանների արդյունավետ լինելու տեսակետի հետ:


Ինչ վերաբերում է հեռախոսազանգերի կենտրոնի՝ հաճախ տրվող հարցերի ցանկին, ապա հարցվածների 42.1%-ը համաձայնել են, որ ցանկը նպաստում է կենտրոնի աշխատանքների արդյունավետության աճին:

■ Հարկ վճարողների գնահատմամբ՝ ինչպիսի՞ն է ՊԵԿ սպասարկման կենտրոնների աշխատանքի որակը:

Առանցքային հարցադրման հետ առ այն, որ «սպասարկող մասնագետները հանդես են գալիս որպես հանրային ծառայություններ մատուցող, այլ ոչ թե որպես ստուգող և պատժող կառույցի ներկայացուցիչ», համաձայնել են հետազոտության մասնակիցների շուրջ 60%-ը (Գծապատկեր 46): Միայն 8%-ը չի համաձայնել այս պնդման հետ:

Իսկ սպասարկման կենտրոններին առնչվող հետևյալ երեք հարցադրումներին, որ սպասարկման կենտրոններում տեղադրված տերմինալները ֆունկցիոնալ են, կենտրոնների պատերին փակցված տեղեկատվությունը թարմ է, կենտրոնների հետ կապ հաստատելը դյուրին է, համամիտ են եղել հարցվածների մեկ երրորդից մինչև կեսից փոքր-ինչ պակաս մասը:

Գծապատկեր 46. Գնահատեք, խնդրեմ, հարկ վճարողների սպասարկման կենտրոնների աշխատանքների որակը (% տվյալ ստորի ամբողջի մեջ, n=649)




■ Հարկ վճարողների գնահատմամբ՝ արդյո՞ք հարկային վարչարարություն իրականացնողները պրոֆեսիոնալ ու ազնիվ են:

Հետազոտության մասնակիցների կեսի գնահատմամբ այո՛, պրոֆեսիոնալ ու ազնիվ են (Գծապատկեր 47): Միայն 10-ից մեկը չի համաձայնել այս դիտարկման հետ: Մեկ երրորդից ավելին՝ 36,7%-ը, հրաժարվել են պատասխանել կամ պատասխանել են «չգիտեմ»:

Պատասխանողի սեռով պայմանավորված՝ գնահատականներում արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: Այդ հարցին «վստահորեն այո» պատասխանել են տղամարդկանց 6.3%-ը, բայց կանանց՝ 3.9%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ3.15&5.15): Իսկ «վստահորեն ոչ» պատասխանել են տղամարդկանց 1.9%-ը, բայց կանանց՝ 4.2%-ը:


Գծապատկեր 47. Արդյո՞ք հարկային վարչարարություն իրականացնողները (հարկ վճարողների սպասարկման կենտրոններ, տվյալների մշակում, վերլուծություն և մոնիթորինգ իրականացնողներ, հարկային ստուգում և ներգործության այլ միջոցներ կիրառող ստարաբաժանումներ) պրոֆեսիոնալ ազնիվ են իրենց գործառույթներն իրականացնելիս (% ամբողջի մեջ, n=649)



■ Հարկ վճարողներն ի՞նչ հաճախականությամբ են կապ հաստատում ՊԵԿ-ի հետ և ինչո՞ւ:

Նախորդող 12 ամիսների ընթացքում հարցվածների շուրջ երկու երրորդն են կապ հաստատել ՊԵԿ-ի հետ (Գծապատկեր 48):

Գծապատկեր 48. Վերջին 12 ամիսների ընթացքում դիմել եք ՊԵԿ (կապ հաստատել ե՞ք ՊԵԿ-ի հետ) (% ամբողջի մեջ, n=649)




Կապ հաստատելու հիմնական միջոցը եղել է հեռախոսը, ապա՝ էլ. փոստը և նոր միայն՝ անձամբ այցելությունը: Ընդ որում, նախորդող տարվա ընթացքում ՊԵԿ-ի հետ կապ հաստատած հարկ վճարողների թվում հեռախոսով կապ են հաստատել 92.8%-ը, էլ. փոստով՝ 70.6%-ը, նամակով՝ 40.2%-ը, ՊԵԿ անձամբ այցելելու միջոցով՝ 53.8%-ը (Գծապատկեր 49):


Ինչ վերաբերում է հաճախականությանը, ապա 4 և ավելի անգամ ՊԵԿ-ի հետ հեռախոսով կապ են հաստատել նշյալ հարկ վճարողների 55.6%-ը, էլ-փոստով՝ 29%-ը, նամակով՝ 16.1%-ը, անձամբ այցելելու միջոցով՝ 18.2%-ը:

ՊԵԿ-ի հետ կապ հաստատելու երկու գերակշռող նպատակներն են եղել նախ՝ օրենսդրության կիրառման, ապա՝ էլեկտրոնային համակարգերի կիրառման պարզաբանում- ուղղորդում ստանալը (Գծապատկեր 50):

Գծապատկեր 49. Եթե վերջին 12 ամիսներին դիմել եք ՊԵԿ (կապ եք հաստատել ՊԵԿ-ի հետ), ապա քանի՞ անգամ եք օգտագործել շփման հետևյալ խողովակները (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=435)



Գծապատկեր 50. Եթե Դուք դիմել եք ՊԵԿ (կապ եք հաստատել ՊԵԿ-ի հետ)՝ օգտագործելով վերը թվարկված միջոցներից ցանկացածը, ապա նշեք, ինչո՞րե՞ն, կապվելու պատճառը (հնարավոր էր ընտրել ավելի քան մեկ տարբերակ, % ամբողջի մեջ, n=790)




■ Ի՞նչ աղբյուրներից են հարկ վճարողները տեղեկանում օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

Հետազոտության մասնակիցների համար հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման չորս հիմնական աղբյուրները եղել են (1) պաշտոնական տեղեկագրերը, (2) ՊԵԿ-ի կայքը, (3) ՊԵԿ-ի ծանուցումները և (4) սոցիալական կայքերը (այլ բիզնեսները և անձինք):

Տեղեկատվության բոլոր աղբյուրների թվում նշյալ չորս աղբյուրների կշիռը կազմել է 54.3% (Գծապատկեր 51): Խորհրդատվական ընկերություններն իբրև աղբյուր ծառայել են դեպքերի միայն 5.6%-ում: Ընդ որում, ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոնն ավելի մեծ դեր է խաղացել, քան զանգվածային լրատվամիջոցները մեկտեղ (դեպքերի համապատասխանաբար 6.1%-ը և 4.5%-ը):

Գծապատկեր 51. Որո՞նք են հարկային օրենսդրության և վարչական կանոնակարգերում փոփոխությունների մասին տեղեկատվության ստացման Ձեր հիմնական երեք աղբյուրները (բոլոր պատասխանները՝ համատեղ, % ամբողջի մեջ, n=1325)




■ Ի՞նչպես են հարկ վճարողները նախընտրում տեղեկատվություն ստանալ ՊԵԿ-ից:

ՊԵԿ-ից տեղեկատվություն ստանալու չորս առավել նախընտրելի եղանակները եղել են (1) ՊԵԿ-ի ծանուցումները, (2) պաշտոնական տեղեկագրերը, (3) ՊԵԿ կայքը և (4) ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոնը:


Բոլոր եղանակների թվում տեղեկատվության ստացման նշյալ չորս նախընտրելի եղանակների կշիռը կազմել է 60.1% (Գծապատկեր 52): Ընդ որում, ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոնն ավելի նախընտրելի եղանակ է եղել, քան զանգվածային ու էլեկտրոնային լրատվամիջոցները մեկտեղ (ղեպքերի համապատասխանաբար 8.7%-ը և 7.5%-ը):

Գծապատկեր 52. Նշեք խնդրեմ, թե ո՞րն է հարկային մարմնից տեղեկատվության ստացման Ձեր նախընտրելի եղանակը (բոլոր պատասխանները՝ համատեղ, % ամբողջի մեջ, n=1248)




■ Հետազոտության մասնակիցների բացարձակ մեծամասնությունը՝ 61.8%-ը, իբրև ՊԵԿ-ից ծանուցում ստանալու ամենանախընտրելի մեթոդ համարել են էլ-փոստը (Գծապատկեր 53):

Գծապատկեր 53. Ո՞րն է ՊԵԿ-ից ծանուցում ստանալու Ձեր ամենանախընտրելի մեթոդը (% ամբողջի մեջ, n=649)



Նախորդող 12 ամիսների ընթացքում էլ-փոստով ծանուցում ստացել են հետազոտության մասնակիցների 64.6%-ը, հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով՝ 43.6%-ը, փոստով՝ 33.2%-ը, իսկ հարկային պաշտոնյայի այցի միջոցով՝ 11.9%-ը (Գծապատկեր 54):


Գծապատկեր 54. Վերջին 12 ամիսների ընթացքում քանի՞ ծանուցում եք ստացել հետևյալ խողովակներով (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Ստացած ծանուցումները լիովին պարզ համարել են ծանուցում ստացած հարկ վճարողների 63.2%-ը, իսկ որոշ չափով պարզ՝ 34.1%-ը (

Գծապատկեր 55):

Գծապատկեր 55. Ընդհանրապես, որքանո՞վ էր պարզ այդ ծանուցումների / հաղորդագրությունների բովանդակությունը (հարցին պատասխանել են նրանք, ովքեր առնվազն մեկ ծանուցում ստացել են, % ամբողջի մեջ, n=495)




Արդյո՞ք ՊԵԿ-ը խտրական վերաբերմունք է ցուցաբերում հարկ վճարողների նկատմամբ՝ պայմանավորված սեփականատիրոջ սեռով, սոցիալ-տնտեսական կարգավիճակով, բիզնեսի ոլորտով, խորհրդի կազմով, ծագումով (տեղական, օտարերկրյա):

Այն, որ պայմանավորված սեփականատիրոջ սեռով առկա է խտրական վերաբերմունք, մերժվել է հետազոտության մասնակիցների 60.9%-ի կողմից (Գծապատկեր 56):


Մակայն յուրաքանչյուր 5-րդը մասամբ կամ լիովին համաձայնել է այն պնդման հետ, որ առկա է խտրական վերաբերմունք՝ պայմանավորված սեփականատիրոջ սոցիալ-տնտեսական կարգավիճակով կամ բիզնեսի ոլորտով:

Գծապատկեր 56. Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դատողության հետ. «Հարկային վարչարարություն իրականացնելիս ՊԵԿ-ը խտրականություն է դնում հարկ վճարողների միջև հետևյալ հիմքերով» (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



■ Հետազոտության մասնակիցները գնահատել են, թե ՊԵԿ-ի կողմից որոշ ծառայությունների մատուցումը որքանո՞վ է նպաստում ՊԵԿ-ի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը (Գծապատկեր 57):

Գծապատկեր 57. ՀՀ ՊԵԿ-ի կողմից հետևյալ ծառայությունների մատուցումը որքանո՞վ է նպաստում ՊԵԿ-ի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)




Հարկ վճարողների կեսից մինչև երկու երրորդը համաձայնել են, որ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու հսկողությունը, հարկային, մաքսային հսկողության արդյունավետության բարձրացումը, հարկ վճարողների հետ համագործակցության հարթակի ապահովումը, հասարակական ծառայությունների որակի բարելավումը նպաստում են ՊԵԿ-ի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը:

Զարմանալիորեն, հարցվածների 14.2%-ը մասամբ կամ ամբողջովին չեն համաձայնել այն պնդման հետ, թե ապօրինի ձեռնարկատիրության հետ կապված հսկողությունը նպաստում է ՊԵԿ-ի նկատմամբ հասարակության վստահության աճին:

■ Որքանո՞վ են հարկ վճարողները տեղյակ 2020-2024թթ. հարկային վարչարարության ռազմավարությունից: 30.2%-ը տեղյակ չեն եղել ու չեն հետաքրքրվել (


Գծապատկեր 58): 37.8%-ը տեղյակ չեն եղել, բայց ցանկություն են արտահայտել՝ տեղեկանալ: Ու միայն 22.5%-ն են տեղյակ եղել ու հետևել ռազմավարության նախագծի քննարկումներին:

Գծապատկեր 58. 2019թ. վերջին ընդունվեց 2020-2024թթ. հարկային վարչարարության ռազմավարությունը. Դուք հետևե՞լ եք դրա քննարկումներին և / կամ հետաքրքրվա՞ծ եք եղել տեղեկանալու դրա մասին (% ամբողջի մեջ, n=649)



■ Ի վերջո, արդյո՞ք հարկերի հայտարարագրման ու ծանուցումների ստացման բջջային նոր հավելվածի գործարկումն օգտակար կլինի հարկ վճարողներին: Մեծ մասը, բնականաբար, պատասխանել են, որ այո՛, օգտակար կլինի (Գծապատկեր 59):

Գծապատկեր 59. Հարկային մարմնից հարկային հայտարարագրերը և ծանուցումներն առցանց ստանալու համար բջջային նոր հավելվածի մշակումը օգտակար կլինի՞ հարկ վճարողների և հարկային վարչարարության մարմնի միջև փոխգործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու համար (% ամբողջի մեջ, n=649)



ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԿԱՏԱՄԲ


Այս բաժնում վերլուծվում են հարկային ստուգումների և առնչվող ընթացակարգերի, դրանց դրական և բացասական կողմերի, հարկ վճարողների իրավունքների և դրանք իրացնելու կարողության վերաբերյալ հետազոտության մասնակիցների տված գնահատականները:

■ Հետազոտությանը մասնակցած բիզնեսների շուրջ մեկ երրորդը՝ 35.1%-ը (228 հարկ վճարող), նշել են, որ 2019-2020թթ-ին իրենց մոտ իրականացվել է որևէ հարկային ստուգում (Գծապատկեր 60):

Ըստ կազմակերպատիրավական տեսակի՝ հարկային ստուգում անցած բիզնեսների կազմը համաչափ է եղել ընտրանքի կազմին (Հավելված 3, Աղյուսակ Խ4.1&1.3). այսինքն՝ որևէ կազմակերպատիրավական տեսակ համաչափորեն ավել կամ պակաս ստուգման չի ենթարկվել:

Բայց ըստ բիզնեսի չափի՝ համաչափություն առկա չի եղել. որքան բիզնեսը մեծ է եղել, այնքան հարկային ստուգման ենթարկվելու հավանականությունը մեծ է եղել: Մասնավորապես, միջին բիզնեսների բաժինը ընտրանքում եղել է 14.3%, բայց հարկային ստուգում անցած բիզնեսների կազմում՝ 24.6% (Հավելված 3, Աղյուսակ Խ4.1&1.10):


Գծապատկեր 60. Ասացեք խնդրեմ, 2019-2020 թթ. Ձեր կազմակերպությունում/ բիզնեսում իրականացվել է որևէ հարկային ստուգում (ուսումնասիրություն) (% ամբողջի մեջ, n=649)



Այն 228 բիզնեսներում, որոնցում 2019-2020թթ-ին կատարվել է հարկային ստուգում, ընդհանուր առմամբ իրականացվել է 360 ստուգում կամ ուսումնասիրություն (մեկ ստուգված բիզնեսի հաշվով՝ 1.6 ստուգում, իսկ հետազոտությունում ներառված մեկ բիզնեսի հաշվով՝ 0.55 ստուգում):

Յուրաքանչյուր հինգ ստուգումից գրեթե երկուսը եղել են ՀԴՄ ստուգում, մեկը՝ չգրանցված աշխատողի ստուգում: Միևնույն ժամանակ, բոլոր ստուգումների 23.1%-ը եղել են համալիր ստուգում (Գծապատկեր 61):


Գծապատկեր 61. Ի՞նչ հարկային ստուգում (ուսումնասիրություն, չափագրում) է իրականացվել Ձեր կազմակերպությունում/բիզնեսում 2019-2020թթ. (% բոլոր ստուգումների թվում, n=360)



Համալիր ստուգման ենթարկված բիզնեսների բաժինը որևէ ստուգման ենթարկված բիզնեսների թվում եղել է 36.4%, իսկ ընտրանքի բոլոր բիզնեսների թվում՝ 12.8% (Գծապատկեր 62):

ՀԴՄ կիրառման ճշտության ստուգում իրականացվել է որևէ ստուգման ենթարկված բիզնեսների 60.5%-ի (ընտրանքի՝ 21.3%-ի) մոտ:

Գծապատկեր 62. Ինչ հարկային ստուգում (ուսումնասիրություն, չափագրում) է իրականացվել Ձեր կազմակերպությունում/բիզնեսում 2019-2020թթ.



Նախորդ հետազոտության համեմատ առկա են որոշ տարբերություններ³⁰: Մեկ տարի առաջ հարցվածների թվում հարկային ստուգում իրականացված էր եղել 39.2%-ի մոտ. մի փոքր ավելի, քան այս տարի: Ընդ որում, համալիր ստուգում իրականացված էր եղել որևէ հարկային ստուգման ենթարկված բիզնեսների 50.6%-ի մոտ (14.2 տոկոսային կետով ավելի, քան այս հարցմամբ): Ստուգման այլ տեսակների առումով էական տարբերություններ չեն արձանագրվել:


■ Արդյո՞ք հարկ վճարողները տեղեկացված են եղել իրենց իրավունքների մասին՝ կապված հարկային ստուգումների (ուսումնասիրությունների, չափագրումների) հետ:

Հետազոտության մասնակիցների միայն 13.9%-ն են նշել, որ բոլորովին կամ հիմնականում տեղեկացված չեն եղել իրենց իրավունքների մասին (Գծապատկեր 63): Այնինչ, 49%-ը հիմնականում կամ լիովին տեղեկացված են եղել:

Նախորդ հետազոտության արդյունքներում պատկերը գործնականում նույնն էր եղել: Մեկ տարի առաջ իրենց իրավունքների մասին լիովին կամ հիմնականում տեղեկացված էին եղել հարցվածների 53.1%-ը (փոքր-ինչ ավելի, քան այս հարցմամբ), թեպետ բոլորովին կամ հիմնականում տեղեկացված չէին եղել 15.1%-ը (դարձյալ փոքր-ինչ ավելի, քան այս հարցմամբ):

³⁰ Ձեկույցի այս բաժնում հետազոտության արդյունքները համեմատվում են մեկ տարի առաջ իրականացված համանման հետազոտության համապատասխան բաժնի արդյունքների հետ, տե՛ս՝ ՀՌԿԿ-Հայաստան, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ, 2020թ., էջ 63-70, http://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/STAPL-REPORT_Arm_w_AnnexesForewords.pdf

Գծապատկեր 63. Ի՞նչ չափով եք տեղեկացված Ձեր իրավունքների մասին՝ կապված հարկային ստուգումների (ուսումնասիրությունների, չափագրումների) հետ (% ամբողջի մեջ, n=649)




■ Իսկ հարկ վճարողները կարողացել են իրացնել հարկային ստուգումների հետ կապված իրենց իրավունքները:

Հետազոտության մասնակիցների միայն 4.2%-ն են նշել, որ հիմնականում կամ բոլորովին չեն կարողացել իրացնել իրենց իրավունքները (Գծապատկեր 64): Այնինչ, 47.4%-ը նշել են, որ լիովին կամ հիմնականում կարողացել են իրացնել իրենց իրավունքները:

Ընդ որում, իրենց իրավունքների մասին «հիմնականում տեղեկացված» հարկ վճարողների 63.1%-ը նշել են, որ «լիովին» կամ «հիմնականում» կարողացել են իրացնել իրենց իրավունքները: Այնինչ, իրենց իրավունքների մասին «բոլորովին չտեղեկացված» հարկ վճարողների 53.8%-ը նշել են, որ «բոլորովին» կամ «հիմնականում» չեն կարողացել իրացնել իրենց իրավունքները (Հավելված 3, Աղյուսակ Խ4.4&4.3):

Մեկ տարի առաջ իրենց իրավունքները լիովին կամ հիմնականում իրացնել կարողանալու մասին նշել էին հարցվածների 53.7%-ը, իսկ բոլորովին կամ հիմնականում իրացնել չկարողանալու մասին՝ 5.1%-ը:

Գծապատկեր 64. Ի՞նչ չափով եք կարողանում իրացնել Ձեր՝ հարկային ստուգումների հետ կապված իրավունքները (% ամբողջի մեջ, n=649)




■ Որո՞նք են եղել հարկային ստուգումների բացասական կողմերը:

Հարկ վճարողների 30.5%-ն իբրև բացասական կողմ նշել են հարկային ստուգումներն ի սկզբանե հարկ վճարողի մեղավորության կանխավարկածով իրականացնելու հանգամանքը:

Իբրև այլ նշանակալի բացասական կողմեր հարցվածները նշել են ստուգումների ժամանակատար լինելու և հարկային տեսուչի կողմից խուճապ հարուցելու հանգամանքները (Գծապատկեր 65):

Գծապատկեր 65. Նշվածներից որո՞նք են Ձեր բիզնեսի համար հարկային ստուգումների բացասական կողմերը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)




■ Իսկ որո՞նք են եղել հարկային ստուգումների դրական կողմերը:

Իբրև դրական կողմ հարցվածների 49.5%-ը նշել են, որ հարկային ստուգումները հնարավորություն են տալիս տեսնել և ուղղել սեփական սխալները (Գծապատկեր 66):

Իբրև այլ համեմատաբար նշանակալի դրական կողմ հարցվածները նշել են բավարարվածության զգացումը՝ տուգանքներ չառաջանալու դեպքում:

Գծապատկեր 66. Նշվածներից որո՞նք են Ձեր բիզնեսի համար հարկային ստուգումների դրական կողմերը (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



■ Արդյո՞ք հարկ վճարողները երբևէ արտահայտել են իրենց անհամաձայնությունը հարկային ստուգումների արդյունքների վերաբերյալ:

Հետազոտության հինգ մասնակցից մեկի մոտ երբևէ ստուգումներ չեն կատարվել (Գծապատկեր 67): Քանի որ հարցվածների 19%-ը անհամաձայնություն արտահայտելու հարցին չեն պատասխանել, ապա հստակ չէ, հետազոտության հինգ մասնակցից մնացած չորսից բոլորի մոտ արդյո՞ք ստուգումներ եղել են, թե՞ ոչ: Ամեն դեպքում, հարցվածների 60.7%-ի (394 հարկ վճարող) պատասխանից հետևում է, որ իրենց մոտ երբևէ հարկային ստուգումներ եղել են:


Հարցվածների 33.4%-ը նշել են, որ հարկային ստուգումների արդյունքների վերաբերյալ անհամաձայնություն երբևէ չեն արտահայտել (Գծապատկեր 67-ի երրորդ և չորրորդ տողեր): Հարկային ստուգման ենթարկված 394 հարկ վճարողների թվում անհամաձայնություն չարտահայտածների բաժինը կազմել է 55.1%:

Անհամաձայնություն չարտահայտելու պատճառը 10-ից 8-ի դեպքում եղել է ստուգման արդյունքների հետ տարաձայնություն չունենալը:

Հարցվածների 27.3%-ը (177 հարկ վճարող) նշել են, որ արտահայտել են իրենց անհամաձայնությունը (394-ի 44.9%-ը): Դրանով իսկ, ստուգման արդյունքների հետ տարաձայնություն են ունեցել հետազոտության մասնակիցների 32.8%-ը (Գծապատկեր 67-ի երկրորդ և չորրորդ տողեր) կամ 394-ի 54.1%-ը:

Մեկ տարի առաջ պատկերը զգալիորեն տարբեր էր: Նախորդ հետազոտությունում անհամաձայնություն արտահայտած լինելու մասին նշել էին հարկային ստուգման ենթարկված հարկ վճարողների ընդամենը 18%-ը (այս տարի՝ 44.9%-ը):

Գծապատկեր 67. Երբևէ արտահայտել ե՞ք Ձեր անհամաձայնությունը հարկային ստուգումների արդյունքների վերաբերյալ (% ամբողջի մեջ, n=649)




■ Իսկ հարկային ստուգումների արդյունքների վերաբերյալ անհամաձայնություն արտահայտած նշյալ 177 հարկ վճարողներն ինչպե՞ս են դա կատարել:

177-ից 61%-ը ներկայացրել են առարկություններ ստուգման ակտի նախագծի վերաբերյալ, 39%-ն առարկություն են ներկայացրել ՊԵԿ-ի զանգատարկման հանձնաժողով, իսկ 26.6%-ը դիմել են դատարան (Գծապատկեր 68):

Մեկ տարի առաջ զանգատարկման հանձնաժողով և դատարան էին դիմել անհամաձայնություն արտահայտածների համապատասխանաբար 32.6%-ը և 33.3%-ը:

Գծապատկեր 68. Հարկային ստուգումների արդյունքների հետ անհամաձայնության դեպքերում ի՞նչ քայլերի էք դիմել (% անհամաձայնություն դրսևտրած բիզնեսների թվում, n=177, հնարավոր էր մեկից ավելի պատասխան)




■ Անհամաձայնություն արտահայտելու վերջնարդյունքը նշյալ 177 հարկ վճարողներին որքանո՞վ է գոհացրել:

Ե՛վ ստուգման ակտի քննարկումից, և՛ գանգատարկումից, և՛ դատական քննությունից հիմնականում կամ լիովին բավարարված են եղել անհամաձայնություն արտահայտածների 20%-ից 25%-ը (Գծապատկեր 69):

Միևնույն ժամանակ, ստուգման ակտի քննարկումից բոլորովին կամ հիմնականում բավարարված չեն եղել 31.6%-ը, ստուգման ակտի բողոքարկումից՝ 19.8%-ը, իսկ դատական քննությունից՝ 6.8%-ը:

Անհրաժեշտ է, սակայն, հաշվի առնել, որ յուրաքանչյուր հաջորդ փուլում հարցին չպատասխանածների բաժինն աճել է: Մասնավորապես, «դատական քննության ժամանակ» ենթահարցին հրաժարվել են պատասխանել կամ պատասխանել են «չգիտեմ» 177 հարկ վճարողների 68.9%-ը:


Գծապատկեր 69. Ասացե՞ք խնդրեմ, թե որքանո՞վ էք բավարարված եղել ստուգման արդյունքներից հետևյալի առնչությամբ (% անհամաձայնություն արտահայտած հարկ վճարողների թվում, n=177)



■ Տեղյակ են արդյո՞ք հարկ վճարողները, որ հարկային ստուգումներն իրականացվում են համակարգչային ծրագրի միջոցով՝ ռիսկայնության ցուցանիշների գնահատման հիման վրա:

Հարցվածների 68.3%-ն այդ մասին տեղյակ են եղել (Գծապատկեր 70):

Գծապատկեր 70. Տեղյակ ե՞ք արդյո՞ք, որ ըստ օրենսդրության, հարկային ստուգումներն ու ուսումնասիրություններն իրականացվում են ՊԵԿ-ի ներսում համակարգչային ծրագրի միջոցով, ռիսկայնության ցուցանիշների գնահատման հիման վրա (% ամբողջի մեջ, n=649)




■ Իսկ այն հարկ վճարողները, որոնք տեղյակ են եղել համակարգչային ծրագրի միջոցով ռիսկայնությունը գնահատելու մասին, համամիտ են արդյո՞ք, որ այդ գնահատումը ՊԵԿ-ն իրականացնում է անկանխակալ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարցվածների մեծամասնությունը՝ 56.7%-ը, հիմնականում կամ վստահորեն համամիտ են եղել, որ այդ գործառույթը ՊԵԿ-ն անկանխակալ է իրականացնում (Գծապատկեր 71): Սակայն 19%-ն այդ պնդման հետ հիմնականում կամ բոլորովին համամիտ չեն եղել:

Նախորդ հարցմամբ պատկերը գործնականում նույնն էր եղել: 58.1% համամիտ էին եղել, որ ռիսկայնության գնահատումը ՊԵԿ-ն անկանխակալ է իրականացնում, իսկ 15.8%-ը այդ պնդման հետ համամիտ չէին եղել:

Գծապատկեր 71. Արդյո՞ք համամի՞տ եք, որ համակարգչային ծրագրի միջոցով ռիսկայնության ցուցանիշների գնահատման գործառույթը իրականացվում է արդարացիորեն և անկանխակալ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և հատուկ սահմանված մեթոդաբանությամբ (% ամբողջի մեջ, n=443)




■ Հարկ վճարողների ո՞ր մասն են հարկային ռիսկերի վերաբերյալ ծանուցումներ ստացել ՊԵԿ-ի Մոնիթորինգի կենտրոնից:

Հարցվածների սուսկ 30% են այդպիսի ծանուցումներ ստացել, իսկ 3.1%-ը, նույնիսկ չեն իմացել, թե դա ինչ է (Գծապատկեր 72):

Նախորդ հարցմամբ նման ծանուցումներ ստացել էին հարցվածների 26.1%-ը:

Գծապատկեր 72. Արդյո՞ք ստացել եք ՀՀ ՊԵԿ-ի Մոնիթորինգի կենտրոնից ծանուցումներ այն մասին, որ Ձեր գործողությունները, ՀԴՄ սարքերով գործարքները, փաստաթղթավորումը, կանխիկ գործարքները պարունակում են հարկային ռիսկեր (% ամբողջի մեջ, n=649)




■ ՊԵԿ-ի Մոնիթորինգի կենտրոնից ծանուցումներ ստացած հարկ վճարողներն ընդունել են արդյո՞ք դրանցում մատնանշված ռիսկերի հիմնավորվածությունը:

Ռիսկերի հիմնավորվածությունը հիմնականում կամ ամբողջովին ընդունել են ծանուցում ստացածների 44.1%-ը, իսկ 50.2%-ը հիմնականում կամ բոլորովին չեն ընդունել այդ (Գծապատկեր 73):

Նախորդ հարցմամբ պատկերը, դարձյալ, գործնականում նույնն էր եղել: 45.9%-ը ընդունել էին, իսկ 47.8%-ը չէին ընդունել ռիսկերի հիմնավորվածությունը:


Գծապատկեր 73. Ընդունել ե՞ք (համաձայնել եք) այդ գործարքների, փաստաթղթավորման վերաբերյալ ծանուցմամբ բացահայտված ռիսկերի ճշմարտացիությունը (% ամբողջի մեջ, n=195)



■ Կցանկանան արդյո՞ք հարկ վճարողները ՊԵԿ-ից ստանալ ծանուցումներ՝ հարկային ռիսկերի վերաբերյալ, որոնք հնարավորություն կընձեռեն աշխատանքային կարգով վերացնել այդ ռիսկերն առաջացնող պատճառները:

Բացարձակ մեծամասնությունը՝ 80.3%-ը, բնականաբար, պատասխանել են, որ այո՛, կցանկանային (Գծապատկեր 74):

Գծապատկեր 74. Կցանկանայիք արդյո՞ք ՀՀ ՊԵԿ-ից ստանալ ծանուցումներ, որոնք կբացահայտեն Ձեր կողմից իրականացվող գործունեությանն առնչվող ռիսկերը՝ հնարավորություն ընձեռելով աշխատանքային կարգով վերացնել դրանց առաջացման պատճառները (% ամբողջի մեջ, n=649)




■ Ինչպիսի՞ն է հարկ վճարողների վերաբերմունքը կամերալ ուսումնասիրությունների նկատմամբ:

Մասնավորապես, հարց է տրվել, թե արդյո՞ք կամերալ ուսումնասիրությունների արձանագրություններում բերված վերլուծությունները դեպքերի առնվազն կեսի դեպքում տեղին են: Հարցվածների 41.7%-ը գնահատել են, որ այո՝, տեղին են եղել, այնինչ 13.1% գնահատել են, որ ոչ՝, տեղին չեն եղել (Գծապատկեր 75):

Այնուհետև, արդյո՞ք վերջին երկու տարում կամերալ ուսումնասիրությունների արձանագրությունների որակն աճել է: Հարցվածների 37.8%-ը գնահատել են, որ այո՝, որակն աճել է, այնինչ 13.4%-ը գնահատել են, որ ոչ՝, որակը չի աճել:

Գծապատկեր 75. Հարկային վարչարարական գործառույթների մեջ է մտնում հարկային մարմնի կողմից ներքին վերլուծությունների և հարկային հաշվետվությունների ու հարկային մարմնի տվյալների բազայում առկա այլ տեղեկությունների մշակման արդյունքում կամերալ ուսումնասիրությունների արձանագրությունները հարկ վճարողին ներկայացնելը. այս առնչությամբ որքանո՞վ եք համամիտ ստորև նշված տեսակետների հետ (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



Ի վերջո, արդյո՞ք կամերալ ուսումնասիրություններին ի պատասխան հարկ վճարողների փաստարկները հաշվի են առնվում ՊԵԿ-ի աշխատակիցների կողմից: Հարցվածների 45.9%-ը նշել են, որ այո՝, հաշվի են առնվում, և միայն 6.8%-ն են նշել, որ ոչ՝, հաշվի չեն առնվում:

Նախորդ հարցմամբ արձանագրություններում բերված վերլուծությունները տեղին էին գնահատել հարցվածների 45.7%-ը, որակի աճ արձանագրել էին 42.6%-ը, իսկ փաստարկները հաշվի առնելու հետ համաձայնել էին 51.6%-ը:

■ Ինչպիսի՞ն է հարկ վճարողների վերաբերմունքը ժամկետանց հարկային պարտավորությունների դեպքում ներգործության միջոցների վերաբերյալ:


Մասնավորապես, հարկ վճարողների գնահատմամբ՝ արդյո՞ք հարկային պարտավորությունների գումարների գանձման, արգելանքի կիրառման աշխատանքները հստակ են: Հարցվածների 46.1%-ի գնահատմամբ, դրանք այո՝, հստակ են. այդպես չի կարծում սուկ 14.6%-ը (Գծապատկեր 76):

Բայց արդյո՞ք հստակ լինելուց բացի դրանք նաև արդար են: Հարցվածների 41.4%-ի գնահատմամբ, դրանք այո՝, արդար են. թեպետ 16%-ն այդպես չի կարծում:

Արդարության տեսանկյունից, արդյո՞ք այդ աշխատանքները հավասարապես կիրառվում են բոլորի նկատմամբ: Հարցվածների 36.7%-ի գնահատմամբ, դրանք այո՝, հավասարապես են կիրառվում. սակայն 12%-ն այդպես չի կարծում:

Նախորդ հարցմամբ նշյալ աշխատանքների հստակ լինելու հետ համամիտ էին եղել հարցվածների 49.8%-ը, աշխատանքների արդար լինելու հետ՝ 45.1%-ը, իսկ հավասարապես կիրառվելու հետ՝ 42.4%-ը:

Գծապատկեր 76. Որքանո՞վ եք համամիտ հետևյալ տեսակետի հետ, կապված հարկերի վճարումն ուշացնելու պարագայում գումարների հավաքագրման հարկային ներգործության գործառույթների հետ (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



ԲԻԶՆԵՍՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ԳՈՐԾԱՐԱՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ


Բիզնեսում հարկային գործառնությունների կազմակերպում

Հարցված հարկ վճարողների 43.6%-ն ունեցել են հիմնական հաշվապահ, իսկ 37.6%-ն անձամբ են վարել հաշվապահությունը: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր 5 հարկ վճարողից մեկը պատվիրակել է հաշվապահության կատարումը մեկ այլ անձի կամ կազմակերպության (Գծապատկեր 77): Մոտ մեկ տարի առաջ՝ նախորդ հետազոտության արդյունքներով հաշվապահությունը պատվիրակած բիզնեսների բաժինը գրեթե նույնն էր եղել՝ 22.6%³¹:

Խաչաձև համադրումը փաստում է, որ բիզնեսի մեծությունն ուղիղ համեմատական է հիմնական հաշվապահ ունեցող բիզնեսների բաժնին (Հավելված 3, Աղյուսակ Խ5.1&1.10): Մասնավորապես, հիմնական հաշվապահ ունեցել են գերփոքր բիզնեսների 29.3%-ը, այնինչ միջին բիզնեսների՝ 73.1%-ը:

Ի տարբերություն հիմնական հաշվապահ ունենալու՝ հաշվապահությունը պատվիրակելու առումով բիզնեսի չափից կախված գծային առնչություն չի դրսևորվել: Մասնավորապես, հաշվապահությունը պատվիրակել են ընտրանքում ընդգրկված գերփոքր, փոքր և միջին բիզնեսների համապատասխանաբար 15.7%-ը, 26%-ը և 20.4%-ը:

Գծապատկեր 77. Ո՞վ է իրականացնում կազմակերպության առօրյա հաշվապահությունը և ֆինանսական ու հարկային հաշվետվությունների պատրաստումը (% հարցվածների ընդհանուր թվում, n=649)




Հիմնական հաշվապահ ունեցող բիզնեսների 74.2%-ում ներգրավված է եղել մեկ հաշվապահ, իսկ 13.1%-ում՝ երկու հաշվապահ (

³¹ Ձեկույցի այս բաժնում հետազոտության արդյունքները համեմատվում են մեկ տարի առաջ իրականացված համանման հետազոտության համապատասխան բաժնի արդյունքների հետ, տե՛ս՝ ՀՌԿԿ-Հայաստան, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ, 2020թ., էջ 71-76, http://www.crc.am/wp-content/uploads/2019/03/STAPL-REPORT_Arm_w_AnnexesForewords.pdf

Գծապատկեր 78): Ընդ որում, հիմնական հաշվապահ ունեցող 283 բիզնեսներում հաշվապահների ընդհանուր թիվը կազմել է 414 (մեկ բիզնեսում միջին հաշվով՝ 1.5 հաշվապահ):


Գծապատկեր 78. Քանի հիմնական հաշվապահ ունեք (% ամբողջի մեջ, n=283)



■ Արդյո՞ք ինքնուրույնաբար, թե այլոց պատվիրակելու միջոցով են ձեռնարկությունները կատարում հաշվառման վարումը, հարկային հաշվետվությունների ներկայացումը, ՊԵԿ-ի ծանուցագրերին պատասխանելը:


Հարցված բիզնեսների 60.6%-ը հարկային գործերն ինքնուրույն են իրականացրել, իսկ 22.5%-ը՝ պատվիրակել են այլ կազմակերպության կամ անձի (Գծապատկեր 79): Նախորդ հարցմամբ պատկերը գործնականում նույնն էր եղել:

Գծապատկեր 79. Ինչպե՞ս է ընկերությունը զբաղվում հարկային գործերով (հաշվառման վարում, հաշվետվությունների ներկայացում, ՊԵԿ-ի պահանջներին / ծանուցագրերին արձագանքում և այլն) (% ամբողջի մեջ, n=649)



■ Հարցվածների մեծամասնությունը հարկային ռազմավարություն չեն ունեցել: Մոսկ 16.8%-ն են նշել նման ռազմավարության առկայությունը (Գծապատկեր 80):

Գծապատկեր 80. Ձեր ընկերությունն ունի՞ հարկային ռազմավարություն (% ամբողջի մեջ, n=649)




Բիզնեսի չափի աճին զուգընթաց հարկային ռազմավարություն ունեցող բիզնեսների բաժինը, բնականաբար, աճել է: Այսպես, գերփոքր բիզնեսների 10-ից միայն 1-ն է հարկային ռազմավարություն ունեցել, իսկ փոքր և միջին բիզնեսների՝ 4-ից 1-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ5.3&1.10):

Հարկային ռազմավարությունը հիմնականում մշակած է եղել կա՛մ հաշվապահը, կա՛մ տնօրենը. 10-ից միայն 1-ում է այն մշակած եղել տնօրենների խորհուրդը (Գծապատկեր 81):


Նախորդ հետազոտության արդյունքներով հարկային ռազմավարություն ունեցող հարկ վճարողների բաժինը 21.3% էր եղել:

Գծապատկեր 81. Եթե Ձեր ընկերությունն ունի հարկային ռազմավարություն, ապա ո՞վ է այն մշակում և հաստատում (% ամբողջի մեջ, n=109)



■ Ձեռնարկությունների հարկային մենեջերների 5-ից 2-ն այդ պաշտոնը զբաղեցնելիս են եղել մինչև 5 տարի, իսկ 4-ից 1-ը՝ ավելի քան 10 տարի (Գծապատկեր 82): Ընդ որում, դեպքերի 54.1%-ում հարկային մենեջերը եղել է տղամարդ (Գծապատկեր 83):

Գծապատկեր 82. Քանի՞ տարի է, ինչ Ձեր ընկերության ներկայիս հարկային մենեջերը (հարկային հարցերով պատասխանատու անձը) զբաղեցնում է այդ պաշտոնը / իրականացնում է այդ գործառույթը (% ամբողջի մեջ, n=649)



Գծապատկեր 83. Ձեր ընկերության ներկայիս հարկային մենեջերը տղամարդ է, թե՞ կին (% ամբողջի մեջ, n=649)



■ Հարկ վճարողներն ի՞նչ չափով են օգտվում մասնավոր խորհրդատվական ծառայություններից:


Հարցվածների գերակշռող մասը որևէ մասնավոր խորհրդատվական ծառայությունից չեն օգտվել (Գծապատկեր 84): Հաշվապահական, հարկային և իրավական հարցերով մասնավոր խորհրդատվական ծառայություններից օգտվողների բաժինը կազմել է 23.6%, 19.9% և 19.3% համապատասխանաբար:

Ամենից հազվադեպ ծառայությունը, որից օգտվել են հարցվածները, եղել է բիզնես հարցերով խորհրդատվությունը (հարցվածների 7.7%-ը):

Նախորդ հարցմամբ պատկերը հիմնականում նույնն էր եղել: Համեմատաբար նշանակալի տարբերություն առկա էր միայն հաշվապահական հարցերով խորհրդատվության առումով, որից օգտվելու մասին նշել էին հարցվածների 31%-ը:

Էական տարբերություններ, սակայն, առկա են 2018թ-ի հարցման համեմատ³²: Երեք տարի առաջ հարկային, իրավական և բիզնես խորհրդատվությունից օգտվելու մասին նշել էին հարցվածների համապատասխանաբար 7.5%-ը, 10.3%-ը և 3.5%-ը՝ ընթացիկ հարցման 19.9%-ի, 19.3%ի և 7.7%-ի համեմատ:

Գծապատկեր 84. Արդյո՞ք օգտվում եք այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող հետևյալ վճարովի խորհրդատվական ծառայություններից (% տվյալ տողի ամբողջի մեջ, n=649)



■ Հարկ վճարողները տարեկան որքա՞ն գումար են ծախսում հարկային հաշվետվությունների պատրաստման ու ընդհանրապես հարկային հաշվառում վարելու վրա:


Հարկ վճարողների 6-ից մեկը համարել են, որ հարկային հաշվառում վարելու վրա ծախս իրենք ընդհանրապես չեն կատարում, մինչդեռ յուրաքանչյուր երրորդը հրաժարվել է պատասխանել, իսկ յուրաքանչյուր չորրորդը դժվարացել է գնահատել այդ ծախսերի չափը (Գծապատկեր 85): Այդօրինակ ծախսերի դրական մեծություն նշել են հարցվածների տասկ մեկ քառորդը:

Նախորդ հարցման համեմատ այս հարցման արդյունքները նկատելիորեն տարբեր են: Մոտ մեկ տարի առաջ ծախսի դրական մեծություն նշել էին հարցվածների 37.7%-ը: Իսկ տարեկան

³²ՀՌԿԿ-Հայաստան, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ, 2018թ., էջ 61, http://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/TAMP_Perception_CRRC_ARM.pdf

մինչև 500 հզ. դր. ծախս նշել էին հարցվածների 15.4%-ը՝ ընթացիկ տարվա հարցվածների 4.2%-ի համեմատ:


Գծապատկեր 85. Մոտավոր հաշվարկներով, տարեկան որքա՞ն գումար է ծախսում Ձեր ընկերությունը հաշվապահական և հարկային հաշվառում վարելու, հարկային հաշվետվություններ պատրաստելու և հարկային այլ պարտավորությունների վրա (% ամբողջի մեջ, n=649)



■ Հարկ վճարողները որքա՞ն գումար են ծախսում հաշվապահական ու հարկային թեմաներով վերապատրաստումների վրա:

Հարցվածների շուրջ կեսը նման վերապատրաստումների վրա գումար ընդհանրապես չեն ծախսել (Գծապատկեր 86): Իսկ որևէ ծախս կատարած հարկ վճարողների 87%-ը տարեկան ծախսել են մինչև 300 հզ. դր.:

Գծապատկեր 86. Մոտավոր հաշվարկներով, հաշվապահական ու հարկային թեմաներով վերապատրաստումների վրա տարեկան ինչքա՞ն գումար է ծախսում Ձեր ընկերությունը (% ամբողջի մեջ, n=649)



Գործարար հեռանկարներ

■ Հարկ վճարողներն ինչպե՞ս են գնահատում իրենց բիզնեսի ֆինանսական գործունեությունն ընթացիկ տարում:

Հարցվածների 29%-ն այն գնահատել են կայուն, 44.5%-ը՝ վատ կամ շատ վատ (Գծապատկեր 87): Իսկ լավ կամ շատ լավ այն գնահատել են հարցվածների սոսկ 16.6%-ը: Դրանով

իսկ, վատ կամ շատ վատ գնահատողների բաժինը 2.7 անգամ մեծ է եղել լավ կամ շատ լավ գնահատողների համեմատ:


Հատկանշական է, որ մոտ մեկ տարի առաջվա համեմատ գնահատականների շեշտակի վատթարացում տեղի չի ունեցել (Գծապատկեր 87-ում վերևի տողերը ցույց են տալիս 2021թ-ի, ներքևի տողերը՝ 2020թ-ի հարցման արդյունքները):

Մասնավորապես, մեկ տարի առաջ ֆինանսական գործունեությունը լավ կամ շատ լավ գնահատել էին հարցվածների 15.9%-ը, այնինչ այս տարի դրական գնահատողների բաժինը 0.7 տոկոսային կետով մեծ է եղել:

Միևնույն ժամանակ, մեկ տարի առաջ կայուն գնահատածների բաժինը 4.1 տոկոսային կետով մեծ էր եղել: Համապատասխանորեն, վատ կամ շատ վատ գնահատածների բաժինը 3.3 տոկոսային կետով փոքր էր եղել:

Պատասխանողի սեռով պայմանավորված գնահատականների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն արձանագրվել: Միևնույն ժամանակ, իսաչաձև համադրումը վկայում է, որ կին պատասխանողներն ավելի հակված են եղել ընթացիկ տարում բիզնեսի ֆինանսական գործունեությունը գնահատել «վատ» կամ «շատ վատ»: Մասնավորապես, գործունեությունը «վատ» կամ «շատ վատ» են գնահատել տղամարդկանց 41.9%-ը, բայց կանանց՝ 47.9%-ը: Համապատասխանորեն, գործունեությունը «լավ» կամ «շատ լավ» են գնահատել տղամարդկանց 18.1%-ը, բայց կանանց՝ 14.8%-ը (Հավելված 3, Աղյուսակ Խ5.8&5.15):

Գծապատկեր 87. Ինչպե՞ս կրնոթագրեիք Ձեր ընկերության/բիզնեսի ֆինանսական գործունեությունը ընթացիկ տարում (% ամբողջի մեջ, n=649)



■ Իսկ ինչպե՞ս են գնահատում հարկ վճարողները բիզնեսի հեռանկարներն առաջիկա երկու տարիների համար:


Հեռանկարները լավ կամ շատ լավ գնահատել են 23.2%-ը, վատ կամ շատ վատ՝ 18.2%-ը (Գծապատկեր 88): Դրանով իսկ, ի տարբերություն ընթացիկ տարվա գնահատականների՝ առաջիկա երկու տարիների հեռանկարների գնահատականներում դրական սպասումները գերակշռել են բացասականին:

Միևնույն ժամանակ, նշանակալի է եղել այն հարկ վճարողների բաժինը՝ 22.2%, որոնց համար ապագան այնչափ անորոշ է, որ դժվարացել են որևէ կերպ գնահատել (պատասխանել են «չգիտեմ»):

Նախորդ հետազոտության համեմատ «լավ» կամ «շատ լավ» գնահատածների բաժինը 3.9 տոկոսային կետով փոքր է եղել, իսկ «վատ» կամ «շատ վատ» գնահատածների բաժինը 3.6 տոկոսային կետով մեծ է եղել:

Ապագայի գնահատականներում պատասխանողի սեռով պայմանավորված վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն արձանագրվել (Հավելված 3, Աղյուսակ Խ5.9&5.15):

Գծապատկեր 88. Ինչպե՞ս կնկարագրեիք Ձեր կազմակերպության/բիզնեսի հեռանկարներն առաջիկա երկու տարիների ընթացքում (% ամբողջի մեջ, n=649)



Կորոնավիրուսի ազդեցություն


■ Համավարակի պատճառով որոշ ժամանակաշրջան հետազոտության մասնակիցների հինգից երկուսը կրճատել են գործունեությունը, իսկ հինգից մեկն ամբողջությամբ դադարեցրել է գործունեությունը (Գծապատկեր 89):

Գործունեությունը դադարեցրած հարկ վճարողների բացարձակ մեծամասնությունը՝ 92.5%-ը, հարցման պահին արդեն վերսկսել էին գործունեությունը, բայց գործունեությունը կրճատած բիզնեսների զգալի մասը՝ 58%-ը, դեռևս ամբողջությամբ չէին կարողացել վերականգնել նախկին ծավալները:

Ինչ վերաբերում է աշխատողներին հարկադիր չվճարվող արձակուրդ ուղարկելուն, ապա հարցվածների սոսկ 6.2%-ն են երբևէ դիմել այդ քայլին, իսկ հետազոտության իրականացման պահին ընդամենը 1.2%-ի մոտ հարկադիր պարապուրդում գտնվող աշխատողներ կային:

Ի վերջո, հետազոտության մասնակիցների կեսից փոքր-ինչ ավելի մասը՝ 56.2%-ը նշել են, որ հետազոտության իրականացման պահին նախկին վիճակն արդեն իսկ վերականգնվել էր:


Գծապատկեր 89. Ասացեք, ինչդեմ, թե Ձեր ընկերությունում կորոնավիրուսի բռնկման հետ կապված հետևյալ իրադարձություններից ու միջոցառումներից որո՞նք են տեղի ունեցել(ում).... (% հարցվածների թվում, n=649)



■ Հարկ վճարողների 58.9%-ի հաղորդմամբ՝ համավարակի պատճառով 2020թ-ին նախորդ տարվա համեմատ եկամուտները նվազել են, այդ թվում, 37.9%-ի եկամուտները նվազել են ավելի քան 20%-ով (Գծապատկեր 90):

Հետազոտության մասնակիցների սուսկ 13.4%-ն են նշել, որ եկամուտները չեն փոխվել, և սուսկ 2.2% են հաղորդել եկամուտների աճի մասին:

Գծապատկեր 90. Կորոնավիրուսն ի՞նչ չափով է ազդել կազմակերպության եկամուտների վրա 2020թ. 2019թ-ի համեմատ: Եկամուտները ... (% ամբողջի մեջ, n=649)



■ Հարկ վճարողների գրեթե կեսը՝ 48.4%-ը, դիմել են համավարակի հետևանքների հաղթահարման որևէ պետական ծրագրի (Գծապատկեր 91): Դիմածների 92.7%-ը (հարցվածների 44.8%-ը) աջակցություն են ստացել:


Գծապատկեր 91. Արդյո՞ք Ձեր ընկերությունը դիմել է ՀՀ կառավարության հակակովիդային որևէ պետական ծրագրի կամ միջոցառման և աջակցություն է ստացել (% ամբողջի մեջ, n=649)



■ Իսկ որքան՞ Վ են համավարակի հետևանքների հաղթահարման պետական ծրագրերը նպաստել հարկ վճարողներին՝ հարկային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելուն:

Աջակցություն ստացածների կեսի գնահատմամբ աննշան չափով են նպաստել, բայց 29.2%-ի գնահատմամբ նկատելիորեն նպաստել են (Գծապատկեր 92):

Գծապատկեր 92. Որքան՞ Վ է այդ աջակցությունը կամ միջոցառումը նպաստել Ձեր հարկային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելուն (% ամբողջի մեջ, n=291)




■ Որքա՞ն ժամանակ կպահանջվի, որպեսզի և՛ կազմակերպությունը, և՛ ոլորտը վերականգնվեն կորոնավիրուսի ազդեցությունից:

Հետազոտության մասնակիցների շուրջ 28-29%-ի գնահատմամբ կպահանջվի ավելի քան մեկ տարի, թեպետ 10-ից 1-ի գնահատմամբ և՛ կազմակերպությունը, և՛ ոլորտը հետազոտության իրականացման պահին արդեն վերականգնվել էին (Գծապատկեր 93):

Չորսից մեկի համար, սակայն, անորոշությունը, թերևս, մեծ է եղել, որ դժվարացել է որևէ ժամկետ նշել (պատասխանել է «չգիտեմ»):

Գծապատկեր 93. Հետայսու որքա՞ն ժամանակ պետք կլինի, որպեսզի Ձեր կազմակերպությունը և գործունեության ոլորտը վերականգնվեն կորոնավիրուսի ազդեցությունից (% ամբողջի մեջ, n=649)



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկ վճարողների ընտրանքային հետազոտության արդյունքները վկայում են, որ հարկային վարչարարության շարունակական բարեփոխումները տալիս են ակնկալվող արդյունքը: Հարկ վճարողները բարձր են գնահատում ՊԵԿ ծառայությունների որակը: Էապես բարելավվել են նրանց ընկալումները հարկային մարմնի գործունեության նկատմամբ:

Հարկ վճարողները հատկապես բարձր են գնահատում սպասարկման կենտրոնների ու հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը, ինչպես նաև էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման, էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման, գործարքների առցանց արտացոլման, հարկային վճարումների առցանց կատարման, հարկային պարտավորությունների մասին տեղեկատվության առցանց ստացման, կամերալ ուսումնասիրությունների արդյունքների տեղեկացման հնարավորությունները:

ՊԵԿ-ի ձեռքբերումները թույլ են տալիս հետևողականորեն շարունակել բարեփոխումները՝ թիրախավորելով մնացյալ խորքային խնդիրները:

Ինչպես մատնանշվել էր նախորդ հարցման վերլուծական զեկույցում³³ և ինչպես ցույց են տալիս այս հարցման արդյունքները, այդպիսի խնդիրների և դրանց լուծումների թվում կարելի է առանձնացնել հետևյալը.

1. Տակավիճակ առկա է հարկ վճարողների ոչ մեծ խումբ, որը հարկային օրենսդրության կիրառման պարզաբանումներ ստանալու ընթացակարգը համարում է դժվար, ինչը կարող է անհարկի անորոշություններ ստեղծել բիզնեսի համար:
2. Հարկ վճարողների մոտ 22%-ի մոտ դեռևս արմատախիլ արված չէ հարկային մարմնի՝ կողմնակալ լինելու կարծրատիպը: Հարկային մարմինն իր գործունեությամբ և ծավալուն հանրային կապերի արշավի միջոցով պետք է հարկ վճարողներին հավաստիացնի, որ հարկային ներգործության միջոցները կիրառվում են անկողմնակալ և արդարացի: Այդ հանգամանքը մեծապես կնպաստի հարկերը լիովին վճարելու վարքագծի արմատավորմանը:
3. Ցանկալի է, որ ՊԵԿ-ի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդն» օժտվի առավել լայն լիազորություններով՝ պետության և գործարար համայնքի միջև հաղորդակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:
4. ՊԵԿ կայքում հաճախ տրվող հարցերի և պարզաբանումների շտեմարանի ճարտարապետության հետագա բարելավումը կնպաստի, որ հարկ վճարողները ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոն դիմելու փոխարեն նախընտրեն կայքի միջոցով ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանը: Դա էապես կբեռնաթափի թեժ գծի ծանրաբեռնվածությունը բարձրացնելով նրա ծառայությունների որակը:
5. Հարկ է բարելավել օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հարկ վճարողների իրազեկման համակարգը:
6. Հարկային հարցերով գործարար համայնքի և հասարակության իրազեկումն ընդլայնելու նպատակով ՊԵԿ Հանրային խորհրդի միջոցով օգտակար կլինի համագործակցությունը գործարար միությունների ու կրթական հաստատությունների հետ:
7. Հարկ վճարողները բարձր են գնահատել սպասարկման կենտրոնների, ինչպես նաև հեռախոսազանգերի կենտրոնի մասնագետների աշխատանքը: Միևնույն ժամանակ, հարցման մասնակիցները, ինչպես և նախորդ հարցման ժամանակ, հարկ վճարողների

³³ ՀՌԿԿ-Հայաստան, Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ, 2020թ., էջ 77, http://www.crc.am/wp-content/uploads/2019/03/STAPL-REPORT_Arm_w_AnnexesForewords.pdf

սպասարկումը և հեռախոսազանգերի կենտրոնը նշել են որպես գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից հարկային վարչարարության հետագա բարելավման նախապատվելի ուղղություններ: Անհրաժեշտ է նպատակային հետազոտության (խորքային հարցազրույցներ և ֆոկուս խմբեր) միջոցով պարզել, թե սպասարկման ու թեժ գծի ծառայությունների առումով հարկ վճարողները հատկապես ինչ են ակնկալում, այնպես, որ ծառայությունների բարելավումն ավելի թիրախավորված լինի:

Որակական հետազոտության առարկա կարող են դառնալ նաև հարկային պարտավորությունների կատարման վրա ծախսվող ժամանակը և դրա հետագա կրճատման հնարավորությունները: Այդ առումով էական բարելավում կարող է լինել հարկային և մաքսային մարմիններին ներկայացվող տեղեկություններում կրկնօրինակումների վերացումը:

8. Հարկ վճարողները բավական արդյունավետ են համարել հարկային հարցերով մասնավոր ուսումնական հաստատությունների աշխատանքը ևս: ՊԵԿ-ի ուսումնական կենտոնի համագործակցությունն այդ հաստատությունների հետ, ինչպես նաև հարկային հարցերով ուսումնական ծառայությունների արտապատվիրումը նրանց կնպաստեն հարկ վճարողների կարողությունների հավելմանը:
9. Հարկ վճարողները կարևորել են հարկերը վճարելու՝ ՀՀ քաղաքացու պատասխանատվությունը և այդ կերպ լավ հեղինակություն ձեռք բերելու հանգամանքը: Ցանկալի է, որ ՊԵԿ-ը հարկային օրինապահության խրախուսման հանրային քարոզարշավներում շեշտադրի հատկապես այդ հանգամանքները:
10. ՊԵԿ էլեկտրոնային պորտալի միջոցով հարկերը վճարելու մեխանիզմի հետագա տեխնիկական կատարելագործումն էլ ավելի կբարելավի ՊԵԿ էլեկտրոնային ծառայությունների որակը:

Հարկային վարչարարության բարելավման ընթացքին հետևելու և «Աջակցություն հարկային վարչարարությանը և քաղաքականության առաջնորդմանը» ծրագրի ազդեցությունը գնահատելու համար, այս հետազոտության տեխնիկական առաջադրանքում հայցվել են էլակետային ցուցիչներ, որոնց մի մասը՝ գենդերային տարբերակմամբ: Այդ ցուցիչները սահմանելու և հաշվարկելու համար ընտրվել են հարցաթերթի ամենից ավելի համապատասխան հարցերը և առաջարկվել՝ գնահատման մեթոդը: Հաշվարկի արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում:

	Ցուցիչը	Հարցի համարը		Հաշվարկման մեթոդը	Ցուցչի արժեքը	
		2020թ.	2021թ.		2020թ.	2021թ.
Գենդերային տարբերակմամբ ցուցիչներ						
1.	Հարկ վճարողների ընկալումը հարկ վճարողների նկատմամբ հարկային մարմնի վերաբերմունքի վերաբերյալ և հարկային մարմնի նկատմամբ վստահության աստիճանը	2.15	2.13	Հարկ վճարողների մասնաբաժինը, որոնք «Փոխվել է արդյոք ք դրականորեն ՊԵԿ հարկային մարմնի պահվածքը (վերաբերմունքը) հարկ վճարողների նկատմամբ վերջին տարվա ընթացքում» հարցին տվել են «վստահորեն այո» կամ «այո» պատասխան	Բոլորը՝ 86.0% Կին՝ 85.6% Տղամարդ՝ 86.1%	Բոլորը՝ 80.7% Կին՝ 82.2% Տղամարդ՝ 79.5%
		3.8	3.8	Հարկ վճարողների մասնաբաժինը, որոնք հարկային մարմնի հուսալիությունը գնահատել են «լավ» կամ «շատ լավ»	Բոլորը՝ 42.9% Կին՝ 41.4% Տղամարդ՝ 43.9%	Բոլորը՝ 40.0% Կին՝ 36.5% Տղամարդ՝ 42.5%
2.	Կին գործարարների ընկալումը հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների և տեղեկատվության հասանելիության վերաբերյալ ³⁴	3.1	3.1	Կին ՓՄՁ ներկայացուցիչ հարկ վճարողների մասնաբաժինը, որոնք «Ինչպե՞ս կգնահատեք ՀՀ ՊԵԿ կողմից ներկայումս մատուցվող ծառայությունների օգտակարությունը» հարցում ներառված ծառայություններին տվել են «օգտակար է» կամ «շատ օգտակար է» գնահատականը ³⁵	Բոլորը՝ 63.3% Կին՝ 63.1% Տղամարդ՝ 63.5%	Բոլորը՝ 59.8% Կին՝ 63.1% Տղամարդ՝ 57.2%

³⁴ Նախորդ գեկույցի համեմատ՝ երկրորդ և երրորդ ցուցիչների հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Նախկինում այդ ցուցիչների հաշվարկում ներառվել էին միայն «բաժնետեր/սեփականատերերի» և «անհատ ձեռնարկատերերի» պատասխանները: Նոր մեթոդաբանությամբ հաշվի են առնվել բոլոր ռեսպոնդենտների պատասխանները: Համապատասխանորեն, այդ ցուցիչների նախորդ տարվա արժեքները վերահաշվարկվել են:

³⁵ Պատասխանի չորս տարբերակները համարակալվել են 1-ից 4, որտեղ 1-ը եղել է «բոլորովին օգտակար չէ», իսկ 4-ը՝ «շատ օգտակար է»: Յուրաքանչյուր ռեսպոնդենտի համար հաշվարկվել է բոլոր ծառայությունների միջին գնահատականը, այնուհետև յուրաքանչյուր սեռի ռեսպոնդենտների համար հաշվարկվել է ծառայությունները միջինում 3-ից բարձր գնահատածների մասնաբաժինը:

	Ցուցիչը	Հարցի համարը		Հաշվարկման մեթոդը	Ցուցչի արժեքը	
		2020թ.	2021թ.		2020թ.	2021թ.
3.	Կին գործարարների ընկալումը՝ հարկ վճարողների նկատմամբ արդարացի և հավասար վերաբերմունքի վերաբերյալ ³⁶	3.7	3.7	Կին ՓՄՁ ներկայացուցիչ հարկ վճարողների մասնաբաժինը, որոնք «լիովին» կամ «որոշ չափով» համաձայնել են հետևյալ պնդմանը՝ «ՊԵԿ-ը հավասար է վերաբերվում բոլոր հարկ վճարողներին»	Բոլորը՝ 69.8% Կին՝ 67.7% Տղամարդ՝ 71.0%	Բոլորը՝ 60.3% Կին՝ 61.9% Տղամարդ՝ 59.1%
Ընդհանուր ցուցիչներ						
4.	ՓՄՁ հարկ վճարողների կողմից ՊԵԿ-ի հետ շփումների հաճախականությունը	3.21	3.17	Հարկ վճարողների մասնաբաժինը, որոնք նախորդ տարվա ընթացքում տարբեր մեթոդների կիրառությամբ ՊԵԿ-ին հանրագումարային դիմել են տարեկան միջինից քիչ ³⁷	Բոլորը՝ 62.3%	Բոլորը՝ 58.4%
5.	Հարկ վճարողների՝ հարկերը կամավոր վճարելու դրդապատճառները / վարքագիծը	2.6	2.5	Հարկ վճարողների մասնաբաժինը, որոնք հարկերն ազնվորեն հայտարարագրելու և վճարելու դրդապատճառների թվում «Հարկերը չվճարելու հետ կապված տուգանվելու և պատժվելու վախը» չեն նշել իբրև «շատ կարևոր» գործոն	Բոլորը՝ 59.7%	Բոլորը՝ 62.7%

³⁶ Տե՛ս թիվ 34 ծանոթագրությունը:

³⁷ Նախորդ հետազոտության արդյունքներով միջինը կազմել էր 6, այս հետազոտության արդյունքներով՝ 6.5: Համեմատելի լինելու համար ցուցչի նախորդ տարվա արժեքը վերահաշվարկվել է 6.5 միջինի համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆԸ

ՀԱՐՑԱՇԱՐ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ Փուլ երկրորդ, 2021 թ. հունվար

ԸՄՆՀ	_____
------	-------

Մարզ	_____
Քաղաք/գյուղ	_____

Հարցազրուցավարի ՆՀ	_____
--------------------	-------

Բարև ձեզ, իմ անունը [նշեք ձեր անունը, ազգանունը] է: Ես ներկայացնում եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը: Տվյալներ եմ հավաքագրում Համաշխարհային բանկի և Մեծ Բրիտանիայի «Լավ Կառավարման հիմնադրամի» կողմից համատեղ իրականացվող հետազոտության համար: Հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանում գործարար համայնքի վերաբերմունքը հարկային վարչարարության և դրա բարեփոխումների վերաբերյալ: Հարցումը հաջորդում է 2013, 2016, 2018 և 2020 թվականներին իրականացված հետազոտություններին և նպատակ ունի ստանալ նոր տվյալներ՝ հաշվի առնելով ոլորտի վերջին զարգացումները, և իրազեկել քաղաքականություն մշակողներին և հարկային մարմիններին Հայաստանում հարկ վճարողների վերաբերմունքի և ընկալումների վերաբերյալ՝ հնարավորություն տալով բարելավել հարկային կարգավորումը և վարչարարությունը:

Ձեր կազմակերպությունը, ի թիվս 600 այլ կազմակերպությունների, պատահականորեն ընտրվել է բոլոր գրանցված հարկ վճարողների ընդհանուր ցանկից՝ ձևավորելով ներկայացուցչական ընտրանք: Ձեր պատասխանները տեղեկատվության կարևոր աղբյուր են Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) / որոշումներ կայացնողների / քաղաքականության մշակողների, ինչպես նաև առկա հարկային քաղաքականությունն ու վարչակազմը հասկանալու և վերլուծելու համար: Ձեր տրամադրած տեղեկատվությունը գաղտնի կմնա և կօգտագործվի միայն ամփոփ տեսքով և միայն հետազոտական նպատակներով: Հարցումը կտևի մոտ 45-50 րոպե:

Նախօրոք շնորհակալություն Ձեր ժամանակի և պատասխանների համար:

Օր/ամիս/տարի	____/____/____
--------------	----------------

Ժամ

Հարցազրույցի սկիզբ [Զ/Վ. օգտագործել 24-ժամյա ձևաչափ]

____|____| ____|____| Ըոպե

ԲԱԺԻՆ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Ջրուցավար, կարդացեք հետևյալ տեքստը. «Այժմ ես մի քանի հարց կտամ Ձեր/Ձեր կազմակերպության մասին հիմնական տեղեկատվություն ստանալու համար:»

1.1. Ո՞րն է Ձեր պաշտոնն այս կառույցում:

Բաժնետեր/Մեփականատեր	1
Գործադիր տնօրեն/Նախագահ/Փոխնախագահ	2
Ֆինանսական հարցերով ղեկավար	3
Գլխավոր հաշվապահ	4
Ես անհատ ձեռնարկատեր եմ	5
Այլ (նշել)	6

1.2. Ձեր բիզնեսը/կազմակերպությունը քանի՞ տարի է փաստացի (ակտիվ) գործում Հայաստանում:

Մինչև 1 տարի	1
1 – 3 տարի	2
4 – 6 տարի	3
7 – 10 տարի	4
11 – 15 տարի	5
15 տարուց ավելի	6
ԶԳ/ՀՊ	-1/-2

1.3. Ո՞րն է Ձեր բիզնեսի կազմակերպաիրավական կարգավիճակը/ձևը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1
Բաժնետիրական ընկերություն	2
Արտադրական կոոպերատիվ	3
Ես անհատ ձեռնարկատեր եմ	4
Այլ (նշել)	5

1.4. Ո՞վ է Ձեր բիզնեսի ամենամեծ բաժնետերը/մասնակիցը:

Ֆիզիկական անձ Հայաստանից	1
Ֆիզիկական անձ արտերկրից	2
Տեղական ինքնակառավարման մարմին	3
Հայաստանյան մեկ այլ կազմակերպություն	4
Օտարերկրյա կազմակերպություն	5
Պետությունը	6
Ես անհատ ձեռնարկատեր եմ	7
Այլ (նշել)	8
ԶԳ/ՀՊ	-1/-2

1.5. [Քարտ 1.5] Ո՞րն է Ձեր գործունեության հիմնական ոլորտը: [Զ/Վ. Ցույց տվեք քարտ 1.5-ը, ընդունեք մեկ պատասխան:]

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1
Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	2
Մշակող արդյունաբերություն	3

Էլեկտրականության, գազի, գոյորշու և լավորակ օդի մատակարարում	4
Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	5
Շինարարություն	6
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	7
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	8
Կացության և հանրային սննդի կազմակերպում	9
Տեղեկատվություն և կապ	10
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	11
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	12
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	13
Վարչարարական և օժանդակ գործունեություն	14
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	15
Կրթություն	16
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	17
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	18
Սպասարկման այլ ծառայություններ	19
Համակարգիչների և կենցաղային իրերի նորոգում	20
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	21
Միջազգային կազմակերպություններ	22
	ՉԳ/ՀՊ -1/-2

1.6. Ներկայումս Ձեր կազմակերպությունը քանի՞ կին և տղամարդ աշխատակից ունի:

Տղամարդ	_____
Կին	_____

1.7. Արդյո՞ք Ձեր կազմակերպության գործադիր տնօրենը միաժամանակ նաև հիմնական բաժնետերերից/ մասնակիցներից է:

Այո	1
Ոչ	0
	ՉԳ/ՀՊ -1/-2
	ԿՉ -5

1.8. Նշեք խնդրեմ, թե հետևյալ հարկատեսակներից որն է վճարում Ձեր բիզնեսը: [Զ/Կ. Յուրաքանչյուր տողում մեկ պատասխան:]

Հարկատեսակ	ԱՅՈ	ՈՉ	ՉԳ/ ՀՊ	
Շահութահարկ	1	0	-1/ -2	⇒ 1.10
Ավելացված արժեքի հարկ	1	0	-1/ -2	
Ակցիզային հարկ	1	0	-1/ -2	
Եկամտային հարկ և պարտադիր սոցիալական վճար՝ որպես հարկային գործակալ	1	0	-1/ -2	⇒ 1.10
Գույքահարկ	1	0	-1/ -2	
Հողի հարկ	1	0	-1/ -2	
Շրջանառության հարկ	1	0	-1/ -2	

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	1	0	-1/ -2	
Այլ վճարներ (նշել)	1	0	-1/ -2	

1.9. Ձեր կազմակերպությունն ունի արդյոք ՀՀ ՊԵԿ-ի կողմից շնորհվող «օրինապահ հարկ վճարող»-ի կարգավիճակ:

Այո	1
Ոչ	0
ԶԳ/ՀՊ	-1/-2

1.10. Որքա՞ն է կազմել Ձեր բիզնեսի շրջանառությունը 2020 թ.:

Մինչև 100 մլն. ՀՀԴ	1
100 մլն. ՀՀԴ - 500 մլն. ՀՀԴ	2
500 մլն. ՀՀԴ - 1.5 մլրդ. ՀՀԴ	3
Ավելին քան 1.5 մլրդ. ՀՀԴ	4
ԶԳ/ՀՊ	-1/-2

1.11. Ձեր բիզնեսը զբաղվո՞ւմ է ապրանքների և/կամ ծառայությունների ներմուծման և/կամ արտահանման գործունեությամբ հետևյալ ուղղություններով:

	ԵՏՄ անդամ երկրներ	Երրորդ երկրներ
Ներմուծում	1	1
Արտահանում	2	2
Երկուսն էլ	3	3
Ոչ մեկը	4	4
ԶԳ/ՀՊ	-1/-2	-1/-2

1.12. Արդյո՞ք Ձեր բիզնեսը որևէ միության կամ ասոցիացիայի անդամ է: Եթե այո, հետևյալ ասոցիացիաներից / ցանցերից ո՞ր մեկին եք անդամակցում կամ նախատեսում անդամակցել: (Զ/Կ: Յուրաքանչյուր տողում ընդունեք մեկ պատասխան)

	Այո, անդամակցում ենք	Ոչ, բայց պլանավորում ենք անդամակցել	Ոչ	Զգիտեմ/ՀՊ
Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատ	1	2	3	-1 /-2
Հայաստանի գործատուների հանրապետական միություն (ՀԳՀՄ)	1	2	3	-1/-2
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (ՀԱԳՄ)	1	2	3	-1 /-2
Հայաստանի Ամերիկյան առևտրի պալատ (AmCham)	1	2	3	-1 /-2
Եվրոպական բիզնես ասոցիացիա Հայաստանում	1	2	3	-1 /-2
Հայկական առևտրային ցանց (ՀԱՑ)	1	2	3	-1 /-2

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն (US2U)	1	2	3	-1 /-2
ՀՀ կին ձեռներեցների ցանց https://businesswoman.am/	1	2	3	-1 /-2
Հայաստանի երիտասարդ կանանց ասոցացիա (ՀԵԿԱ) https://aywa.am	1	2	3	-1 /-2
Հայ կանաց միջազգային ասոցացիա (AIWA)	1	2	3	-1 /-2
Հարկ վճարողների իրավունքների պաշտպանության ՀԿ	1	2	3	-1 /-2
Այլ (նշել)	1	2	3	-1/-2

1.13. Որքա՞ն է կանանց մասնաբաժինը Ձեր ընկերության ղեկավարների և խորհրդի անդամների կազմում: (Զ/Վ. ընդունեք մեկ պատասխան)

0-25%	1
26%-50%	2
51%-75%	3
75%+	4
ԶԳ/ՀՊ	-1 / -2

1.14. Ձեր ընկերությունն ու՞նի գենդերային հավասարության քաղաքականություն (որևէ կանոնակարգող փաստաթուղթ կապված էթիկայի, ոտնձգությունների կանխարգելման ընթացակարգերի, կանանց և տղամարդկանց հավասար աշխատավարձ ապահովելու մեխանիզմների և այլնի հետ): Եթե այո, որքա՞ն ժամանակ է այն գործում: Անվանեք, ինդրեմ, Ձեր ընկերությունում կիրառվող մեկ կարևոր այդպիսի նորմատիվային/կարգավորող փաստաթուղթ:

Այո	1	Տարիների քանակ _____	Փաստաթղթի անվանում _____
Ոչ	0		
ԴՊ/ՀՊ	-1/-2		

ԲԱԺԻՆ 2. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ

Զրուցավա՛ր, կարդացե՛ք հետևյալը. «Այս բաժնում ես կցանկանայի լսել Ձեր/Ձեր կազմակերպության կարծիքը կապված ընդհանուր առմամբ հարկային օրենսգրքի և օրենքների ընդունման հետ:»

2.1. Դուք տեղյա՞կ եք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի մասին:

Այո	1	1
Ոչ	0	⇒2.3
ՀՊ	-2	

2.2. «Հարկ վճարող-հարկային մարմին» հաղորդակցության տեսանկյունից որքա՞ն՞ վ է օգտակար ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» աշխատանքը:

